ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ • ՀՈԿՏԵՄԲԵՐ 2018

Լիահոնա

Երեցներ Գոնգ և Սարես. «Քրիստոսի անվան հատուկ վկաներն ամբողջ աշխարհում», էջ 12, 18

8 քայլեր ձեր եպիսկոպոսին հասկանալու համար էջ 24

Ջոզեֆ Սմիթ. «Ոգեշնչել՝ առաջ տանելու Սիոնի գործը», էջ 28

Աստծո հետ մեր կապած ուխտի մասին Վերջին Օրերի Սրբերի պատմությունը, էջ 34



«ՄԵՐ **ԵՐԿՆԱՅԻՆ ԾՆՈՂՆԵՐԸ ԾՐԱԳՐԵԼ ԵՆ ՄԵՐ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՎԵՀԱՅՈՒՄԸ.** ԱՅՍ ԳԻՏԵԼԻՔԸ ՄԵՋ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ՀԵՌԱՆԿԱՐ, ՏԱԼԻՍ Է ՄԵՋ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿՑՈՒՄ՝ ՈՐՊԵՍ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԾՆՈՂՆԵՐԻ ՍԻՐԵԼԻ ԶԱՎԱԿՆԵՐ, ՄԵԾԱՑՆՈՒՄ Է ՄԵՐ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՏԻՐՈՋ ՀԱՆԴԵՊ»։

ԵՐԵՑ ՔՎԵՆԹԻՆ Լ. ՔՈՒՔ

«Հիշեք, թե որքան ողորմած է եղել Տերը», էջ 34։

Լիահոնա, հոկտեմբեր 2018

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ

6 Սպասավորության սկզբունքները. Ստանալ օգնություն ուրիշներին օգնելու համար
Ինչպե՞ս ենք իմանում երբ և ինչպես ընդգրկել ուրիշներին մեր սպասավորության մեջ։

12 Երեց Գերիթ Վ. Գոնգ. Սիրեք Տիրոջը և ապավինեք Նրան
Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն

18 Երեց Ուլիսես Սոարես. Մարդ, ում մեջ նենգություն չկա
Երեց Նիլ Լ. Անդերսեն

24 Ինչ է ցանկանում յուրաքանչյուր եպիսկոպոս, որ իմանան իր ծխի անդամները
Մայքլ Մեյերս
Երբեմն մենք մոռանում ենք, որ եպիսկոպոսները մեզ նման մարդիկ են, ովքեր ձգտում են լավագույնս ծառայել իրենց կոչման մեջ։

28 *Սրբեր*. Եկեղեցու պատմություն. Գլուխ 8. Քրիստոսի Եկեղեցու բարձրացումը
Մինչ Մորմոնի Գիրքը տպագրվում էր, մի քանի մարդ գտան ճշմարիտ Եկեղեցին։ Հրատարակությունից հետո Ջոզեֆը կազմակերպում է Եկեղեցին։

34 Որքան ողորմած է եղել Տերը
Երեց Քվենթին Լ. Քուք
Անդամները կոգեշնչվեն, երբ Եկեղեցու նոր բազմահատորանոց պատմության մեջ կարդան Վերջին Օրերի հավատարիմ Սրբերի մասին։

ԱՐԱԳ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

4 Դիմանկարներ հավատի թեմայով. Մայքլ Այզեկ-Բիգոշիչ Լեհաստան

10 Ինչին ենք մենք հավատում. Ո՞ւր է գնում տասանորդի գումարը

40 Վերջին Օրերի Սրբերի ձայները

80 Մինչև նոր հանդիպում. Մեր հաստատող աջակցությունը
Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստ

ԿԱՋՄԻ ՎՐԱ
Ինչ որ ունիմ, այն քեզ կտամ, Ռուլթեր Ռեյն

ՉԱՓԱՀԱՍ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

44 **Ավետարանով ապրելու մեր շարժառիթը**
Մայնդի Էնն Սելու
Արդարակյաց ապրելու մեր պատճառը իրականում հանգում է մի բանի:

48 **Առաջին քայլը դեպի ապաշխարություն**
Աուրիլաս Պիտերսոն
Եպիսկոպոսի մոտ գնալը մեծ խիզախություն է պահանջում, բայց այն մեծ փոփոխություն բերեց:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

50 **Սովորել Տիրոջ ձևով**
Երեց Դեյվիդ Ա. Բեդնար
Երբ մենք թույլ ենք տալիս, որ Հոգին լինի ուսուցիչը, մեծանում է սովորելու մեր ունակությունը:

54 **5 եղանակ գերագույն համաժողովից սովորելու համար**
Նշեք այս գաղափարները, որպեսզի ավելին ձեռք բերեք համաժողովի ելույթներից:

56 **Ուսուցանված Սուրբ Հոգով**
Այս պատանիներն ու աղջիկները կիսվում են այն ամենով, ինչ սովորել են գերագույն համաժողովի ժամանակ:

58 **Պաստառ. Եթե դուք լսեք**

59 **Փաստեր գերագույն համաժողովի մասին**

60 **Հարցեր և պատասխաններ**
Ես ինչպե՞ս կարող եմ հրավիրել Հոգուն իմ տուն, երբ մարդիկ կռվում կամ վիճաբանում են:

62 **Ճանապարհներ, որոնք ձեզ պատրաստում են ձեր ապագայի համար**
Այս փորձառությունները, որոնցով կիսվել են չորս չափահաս երիտասարդները, կարող են ձեզ ցույց տալ՝ ինչպես հաջողություն գտնել ապագայում:

ԵՐԵԽԱՆԵՐ

66 **Փոխանցել Աստծո սերը**
Էլլի Բ.
Երբ տեղափոխվեցինք, ես նկատեցի, որ քիչ մարդիկ կային ճյուղում: Ուստի, ես որոշեցի ինչ-որ բան անել՝ դա ուղղելու համար:

67 **Աղոթք կիրճում**
Կարսեն Կ.
Ես վախենում էի, որ մենք երբեք չենք գտնի մեքենայի մոտ տանող ճանապարհը:

68 **Շողացրեք ձեր լույսը. Պայծառ շողալով Չեխիայի Հանրապետությունում**

70 **Առաքյալները վկայում են Քրիստոսի մասին**
Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ

71 **Մեր էջը**

72 **Հավատք, հույս և գթություն. Մաս 3. Հույսի դրսևորում Հոլանդիայում**
Մեգան Արմքնչ

74 **Մորմոնի Գրքի ընթերցանության ակումբ**

75 **Հին Կտակարանի հերոսները. Եսթերը խիզախ էր**

76 **Սուրբ գրությունների պատմություններ. Եսթեր Թագուհին**
Քիմ Վեբ Ռայդ

79 **Գունավորելու էջ. Ես կարող եմ օգնել ուրիշներին սիրված զգալ**

Տեսեք, արդյոք կարո՞ղ եք գտնել այս համարում թաքնված Լիահոնան: Հուշում. Ինչպե՞ս եք շողացնում ձեր լույսը

ՀՈԿՏԵՄԲԵՐ 2018 ՀԱՏՈՐ 19 ՀԱՄԱՐ 3
ԼԻԱՀՈՆԱ 14754 201

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու պաշտոնական միջազգային ամսագիր

Առաջին Նախագահություն. Ռասսել Մ. Նելսոն, Դալլին Հ. Օուքս, Հենրի Բ. Այրինգ

Տասներկու Առաքյալների Քվորում. Մ. Ռասսել Բալլարդ, Ջեֆրի Ռ. Հոլլանդ, Դիտեր Ֆ. Ուխդորֆ, Դեյվիդ Ա. Բեդնար, Քվենթին Լ. Քուք, Դ. Թոդ Քրիստոֆերսոն, Նիլ Լ. Անդերսեն, Ռոնալդ Ա. Ռասբանդ, Գարի Է. Սթիվենսոն, Դեյլ Գ. Ռենլանդ, Գերիթ Վ. Գոնգ, Ուլիսես Սոարես

Խմբագիր. Հյուգո Ա. Մարտինեզ
Խմբագրի օգնականներ. Ռանդալ Ք. Բաննեթ, Բեքի Քրեյվեն
Խորհրդատուներ. Բրայան Ք. Էշթոն, Լեգռան Ռ. Քըրթիս Կրտս., Էդվարդ Դյուբ, Շերոն Յուբենկ, Քրիստինա Բ. Ֆրանկո, Դոնալդ Լ. Հոլսթրոմ, Դուգլաս Դ. Հոլմս

Գլխավոր տնօրեն. Ռիչարդ Ի. Հիթն
Եկեղեցու Ամսագրերի տնօրեն. Ալան Ռ. Լոյբորգ
Գործարար ղեկավար. Գարֆ Քենոն

Գլխավոր խմբագիր. Ադամ Ս. Օլսոն
Գլխավոր խմբագրի օգնական. Ռայան Քար
Հրապարակման օգնական. Ֆրանսիսկա Օլսոն
Գրողներ և խմբագրողներ. Մարիսա Դեննիս, Դեյվիդ Դիքսոն, Դեյվիդ Ա. Էդվարդս, Մեթյու Դ. Ֆլիթոն, Լորի Ֆուլեր, Գարեթ Հ. Գարֆ, Լառեն Փորթեր Գանթ, Ջոն Ռայան Ջենսեն, Շառլոտ Լարկաբալ, Մայքլ Ռ. Մորիս, Էրիկ Բ. Մըրդոք, Սալի Ջոնսոն Օդեքիրկ, Ջոշուա Ջ. Փերկի, Յան Փինբորո, Ռիչարդ Մ. Ռոմնի, Մինդի Սելու, Չեյքել Ուորդլեյ, Մարիսա Վիդիսոն

Արվեստի գծով գործադիր տնօրեն. Ջ. Սքոթ Նադսեն
Արվեստի տնօրեն. Թեդ Ռ. Փեթերսոն
Ձևավորում. Ջանեթ Էնդրյուս, Ֆեյ Պ. Անդրուս, Մենդի Բենթլի, Ս. Քիմբալ Բոթ, Թոմաս Չայլդ, Դեյվիդ Գրին, Քոլլին Հինքլի, Էրից Պ. Ջոնսեն, Սյուզան Լոֆգրեն, Սքոթ Մ. Մույ, Էմիլի Չիկո Ռեմինգտոն, Մարք Վ. Ռոբիսոն, Բրեդ Թիըր, Կ. Նիկոլ Վոլկենհորստ

Մտավոր սեփականության համակարգող. Քոլեթ Նեբեքեր Օն
Հրատարակչության տնօրեն. Ջեյն Էնն Փիթերս
Հրատարակում. Իռա Գլեն Ադեյր, Ջուլի Բըրդեթ, Թոմաս Գ. Քրոնին, Բրայըն Վ. Գիջի, Գիննի Ջ. Նիլսոն, Դերեկ Ռիչարդսոն
Նախատպագրություն. Ջոշուա Դեննիս, Ամմոն Հարիս
Տպագրության տնօրեն. Ստիվեն Տ. Լյուիս
Բաշխման տնօրեն. Թրոյ Ռ. Բարքեր

Միացյալ Նահանգներից և Կանադայից դուրս բաժանորդագրման և գների մասին տեղեկանալու համար այցելեք store.lds.org կամ դիմեք Եկեղեցու ձեր տեղական բաշխման կենտրոն կամ ծխի/ճյուղի ղեկավարին:

Ձեռագրերը և հարցերը ներկայացրեք առցանց՝ liahona.lds.org; է-փոստով՝ liahona@ldschurch.org; կամ փոստով՝ *Liahona,* Rm. 2420, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150-0024, USA:

Լիահոնան (Մորմոնի Գրքի տերմին, որը նշանակում է «կողմնացույց» կամ «ուղեցույց») հրատարակվում է անգլերեն, ալբաներեն, բիսլամա, բուլղարերեն, գերմաներեն, դանիերեն, էստոներեն, թագալոգ, թաիթերեն, թամիլ, թայերեն, թելուգու, թոնգերեն, ինդոնեզերեն, իսլանդերեն, իսպաներեն, իտալերեն, լատիշերեն, լեհերեն, լատիշերեն, խորվաթերեն, կամբոջերեն, կիրիբաթի, կորերեն, հաիթերեն, հայերեն, հինդի, հոլանդերեն, հունարեն, հունգարերեն, ճապոներեն, մալագազի, մարշալերեն, մոնղոլերեն, նորվեգերեն, շվեդերեն, չեխերեն, չինարեն, պորտուգալերեն, ռումիներեն, ռուսերեն, սամորեն, սինհալա, սլովեներեն, վիետնամերեն, ուկրաիներեն, ուրդու, քեբուանո, ֆիններեն, ֆիջիերեն և ֆրանսերեն լեզուներով: (Հրատարակության հաճախականությունը տարբերվում է ըստ լեզուների:)

© 2018 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Հեղինակային իրավունք. Եթե հատուկ նշված չէ, Լիահոնայի նյութերը կարելի է բազմացնել անձնական ոչ կոմերցիոն նպատակով օգտագործելու համար (այդ թվում Եկեղեցու կոչումների համար): Այդ իրավունքը կարող է ցանկացած ժամանակ սահմանափակվել: Տեսողական նյութերը չեն կարող բազմացվել, եթե սահմանափակումներ են նշված տվյալ աշխատանքի նկարագրական տողում: Հեղինակային իրավունքի հետ կապված հարցերը պետք է ուղղել. Intellectual Property Office, 50 E. North Temple St., L13, Salt Lake City, UT 84150, USA; կամ էլ-փոստով. cor-intellectualproperty@ldschurch.org:

Լիահոնան տարբեր լեզուներով կարելի է գտնել www.liahona.lds.org ինտերնետային կայքում:

For Readers in the United States and Canada:
October 2018 Vol. 19 No. 3. LIAHONA (USPS 311-480) Armenian (ISSN 1525-7614) is published four times a year (April, May, October, and November) by The Church of Jesus Christ of Latter-day Saints, 50 E. North Temple St., Salt Lake City, UT 84150. USA subscription price is $4.00 per year; Canada, $4.80 plus applicable taxes. Periodicals Postage Paid at Salt Lake City, Utah. Sixty days' notice required for change of address. Include address label from a recent issue; old and new address must be included. Send USA and Canadian subscriptions to Salt Lake Distribution Center at address below. Subscription help line: 1-800-537-5971. Credit card orders (Visa, MasterCard, American Express) may be taken by phone. (Canada Poste Information: Publication Agreement #40017431)

POSTMASTER: Send all UAA to CFS (see DMM 507.1.5.2). NONPOSTAL AND MILITARY FACILITIES: Send address changes to Distribution Services, Church Magazines, P.O. Box 26368, Salt Lake City, UT 84126-0368, USA.

Ավելին համացանցում

Կարդացեք հոդվածները և ուղարկեք ձեր սեփական հոդվածը **liahona.lds.org:**

Գտեք ոգեշնչված ուղերձներ (անգլերեն, պորտուգալերեն և իսպաներեն) **facebook.com/liahona** կայքում:





Ուղարկեք ձեր կարծիքը **liahona@ldschurch.org:**

Բաժանորդագրվեք **store.lds.org**-ում: Կամ այցելեք բաշխման կենտրոն, խնդրեք ձեր ղեկավարներին կամ զանգահարեք 1-800-537-5971 (ԱՄՆ-ում և Կանադայում):



ՆԿԱՐՆԵՐԸ՝ GETTY IMAGES-ից

ԱՅՍ ՀԱՄԱՐԻ ԹԵՄԱՆԵՐԸ

Համարները ցույց են տալիս հոդվածի առաջին էջը:

Աղոթք, *4, 40, 41, 67, 68*
Աշխատանք, *62*
Ապաշխարություն, *48*
Գերագույն համաժողով, *54, 56, 58, 59*
Եկեղեցու ղեկավարներ, *12, 18*
Եկեղեցու պատմություն, *28, 34*
Եպիսկոպոսներ, *24, 48*
Երկնային Հայր, *34, 43*
Ինքնապահովում, *40, 62*
Ծառայություն, *6, 24*
Հայտնություն, *41, 50*
Հավատք, *4, 40, 42, 44*
Հին Կտակարան, *75, 76*
Հիսուս Քրիստոս, *44, 70*
Ձախորդություն, *4*
Մարգարեներ, *42, 71, 80*
Միություն, *24, 43, 60*
Միսիոներական աշխատանք, *43, 66*
Մորմոնի Գիրք, *28, 74*
Ներում, *48, 72*
Ուսուցում, *50*
Ջոզեֆ Սմիթ, *28, 34*
Սեր, *66, 79*
Սուրբ Հոգի, *50, 56, 60*
Վկայություն, *56, 68, 71*
Տաճարներ, *42, 71*
Տասանորդ, *10*
Քաջություն, *75, 76*
Օրհնակ, *68*

ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐ
ՀԱՎԱՏԻ ԹԵՄԱՅՈՎ

«Հիվանդությունը կարող է շատ լավ բաներ անել»,- ասում է Մայքլը, ով տառապում է երիկամային հիվանդությունից: Քանի որ նրա հիվանդությունը մեծացրել է նրա երախտագիտությունը ավետարանի հանդեպ, նա ասում է. «Սա լավ փորձություն է»:

ԼԵՍԼԻ ՆԻԼՍՈՆ, ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ

Մայքլ Այզեք

Բիզոշիչ, Հոլանդիա

Սկզբում ես զայրանում էի:

«Ինչո՞ւ ես»: Ես աղոթեցի: «Ես ծառայել եմ քեզ, Տեր»: Որոշ ժամանակ անց ես հասկացա: Սուրբ գրություններն ասում են. «Նա, ով բժշկվելու հավատք ունի առ ինձ և նշանակված չէ մահվան, պիտի բժշկվի» (ՎԿՈՒ 42.48):

Եկեղեցու անդամները անընդհատ աղոթում էին ինձ համար, բայց իմ առողջությունը գնալով վատթարանում էր: Նրանք կարծում էին, որ իրենց աղոթքները չեն լսվում, բայց դրանք լսելի էին, քանի որ նրանք դառնում էին ավելի լավ մարդիկ, և քանի որ ես զգում եմ այն սերը, որը նրանք տածում են իմ հանդեպ:

Նույնիսկ, եթե ես առողջ լինեի, որքա՞ն ժամանակ է մնացել իմ տարիքում: Դեռևս շատ ժամանակ կա առջևում:

Ես ունեմ իմ Եկեղեցին: Ես ունեմ Աստծո հետ հաղորդակցվելու ուղին աղոթքի միջոցով, ծոմապահության և այն բոլոր գործերի միջոցով, որ մենք կատարում ենք: Ուրիշ ինչի՞ կարիք ունեմ ես:

Երբեմն ես ինձ ասում եմ. «Միգուցե ես հիվանդացա, որպեսզի կարողանամ հասկանալ, թե ինչ հրաշալի գործի մեջ եմ ես, և ինչ հրաշալի գործ է սա»:

ԳՏԵՔ ԱՎԵԼԻՐ ՇԱՏ ՆՅՈՒԹԵՐ

Որպեսզի Նախագահ Ռասսել Մ. Նելսոնից ավելին սովորեք կյանքի դժվարություններին հույսի զորությամբ դիմակայելու մասին, այցելեք՝ **lds.org/go/10185:**

Գտեք ավելին Դիմանկարներ հավատի թեմայով՝ **lds.org/go/18:**

Սպասավորության սկզբունքները

ՍՏԱՆԱԼ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ինչպե՞ս ենք ընդգրկում ուրիշներին, երբ մենք օգնության կարիք ունենք սպասավորելու մեր ջանքերն իրականացնելու համար։ Մասնակցեք սպասավորության հարցազրույցներին և առաջին կիրակի օրվա խորհրդի ժողովներին։

Երբ ցրված կարծրախտ հիվանդությունը անվասայլակին գամեց Քեթիին, նա պարզեց, որ օգնության կարիք ունի ամեն գիշեր անվասայլակից անկողին տեղափոխվելու համար։ Աշխատանքը չափազանց դժվար էր մեկ անդամի համար։ Ուստի երեցների քվորումը խորհրդակցեց նրա իրավիճակի վերաբերյալ և որոշեց ժամանակացույց կազմել։[1]

Երբ մենք ծանոթանում ենք նրանց կարիքներին և ուժեղ կողմերին, ում ծառայում ենք, մենք հասկանում ենք, որ օգնության կարիք ունենք՝ նրանց կարիքները հոգալու համար։ Սպասավորության հարցազրույցները և առաջին կիրակի օրվա խորհրդի ժողովները երկու հնարավորություններ են՝ քննարկելու, թե ինչպես պատշաճորեն ընդգրկել ուրիշներին։

Սպասավորության հարցազրույցներ

Այս եռամսյակային հարցազրույցները սպասավորող քույրերի և Սփոփող Միության նախագահության կամ սպասավորող եղբայրների և երեցների քվորումի նախագահության միջև միակ *պաշտոնական* հաշվետվություննն է, որը մենք կազմում ենք նրանց վերաբերյալ, ում սպասավորում ենք։ Հարցազրույցը հնարավորություն է տալիս առնվազն եռամսյակը մեկ անգամ (1) խորհրդակցել կցված ընտանիքների և անհատների ուժեղ կողմերի, կարիքների և դժվարությունների մասին, (2) որոշել, թե քվորումը, Սփոփող Միությունը կամ ծխի խորհուրդը ինչ կարիքներ կարող է բավարարել, և (3) ուսուցանվել ղեկավարների կողմից և խրախուսվել սպասավորության ջանքերում։

Երեցների քվորումի նախագահը և Սփոփող Միության նախագահը կարևոր կարիքների մասին հայտնում են անմիջապես եպիսկոպոսին և նրանից ստանում խորհուրդ և ուղղորդում։

Գտեք ավելի շատ տեղեկություն սպասավորության հարցազրույցների մասին՝ այցելելով ministering.lds.org.

Սպասավորության հարցազրույցները դարձնել իմաստալից

Հետևելով Նախագահ Ռասսել Մ. Նելսոնի հայտարարությանն այն մասին, որ սպասավորության ծրագիրը կլինի առանցքային կետը, որի վրա հենվելով Եկեղեցու ընթացքը կտրուկ կփոխվի, Երեց Գարի Սթիվենսոնը, Տասներկու Առաքյալների Քվորումից, ուսուցանել է. «Նրա տեսլականի իրականացումը . . .

ԿԵՐԱԿՐԵՔ ՆՐԱՆՑ, ՋՈՐՋ ԿՈԿՈ ՍԱՆՏԱՆՋԵԼՈ

«Սպասավորության սկզբունքները» հոդվածները նախատեսված են օգնել մեզ, որպեսզի հոգ տանենք միմյանց մասին, ոչ թե կիսվենք դրանցով որպես ուղերձ: Երբ մենք ծանոթանում ենք նրանց հետ, ում ծառայում ենք, Սուրբ Հոգին կհուշի մեզ, որ իմանանք, թե նրանք ինչ ուղերձի կարիք ունեն՝ ի լրումն մեր հոգատարության և կարեկցանքի:

ՀԻՍՈՒՍՆ ԸՆԴԳՐԿԵՑ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ

Հիսուսը հրաշքով կերակրեց 5000 մարդու հինգ հացով և երկու ձկով: Կարդացեք Հովհաննես 6.5–14 և պարզեք թե Փրկիչը քանի անգամ ընդգրկեց ուրիշներին սպասավորության այս գործում:

կարող է կանխատեսվել այն փաստի հիման վրա, թե որքան լավ են եղբայրներն ու քույրերն ուսուցանված և ընդգրկված սպասավորության հարցազրույցներում»:[2]

Չորսը հուշում սպասավորող եղբայրներին և քույրերին.

- Գնացեք հարցազրույցի՝ խորհուրդ փնտրելով: Պատրաստ եղեք սովորել:
- Պատրաստ եղեք քննարկել կարիքները, որոնք դուք կարող եք բավարարել:
- Կենտրոնացեք անհատի ուժեղ կողմերի և ունակությունների վրա, ոչ միայն կարիքների վրա:
- Կապ հաստատեք նախագահության հետ, որպեսզի անհրաժեշտության դեպքում խորհրդակցեք եռամսյակային հարցազրույցների միջև ընկած ժամանակահատվածում:

Հինգ հուշում ղեկավարներին.

- Կարիք չկա, որ հարցազրույցները երկար լինեն, բայց ծրագրեք բավականաչափ ժամանակ, որպեսզի այցելեք մի վայր, որը թույլ կտա իմաստալից զրույց վարել:
- Օգտվելով հնարավորությունից, սպասավորեք սպասավորող եղբորը կամ քրոջը:
- Մի տվեք այնպիսի հարցեր, որոնք տպավորություն են ստեղծում, թե դուք պարզապես հաշվում եք այցելությունները կամ նշում եք կատարվածը («Դուք ավարտե՞լ եք ձեր սպասավորությունը»): Հարցեր տվեք, որոնք կամրացնեն ցանկալի վարքագիծը («Ի՞նչ հուշումներ եք զգացել, երբ աղոթել եք ընտանիքի համար: Ի՞նչ պատահեց, երբ գործեցիք ըստ այդ հուշումների»):
- Անկեղծորեն լսեք և նշումներ կատարեք:
- Խորհրդակցեք միասին: Սպասավորության զուգընկերությունները լիազորված են հայտնություն ստանալ նրանց համար, ում նրանք նշանակված են ծառայելու:[3]

Ուրիշների կարիքների մասին խորհրդակցելը սպասավորության հարցազրույցների առանցքն է: Տես նաև Սպասավորության սկզբունքների հոդվածը՝ «Խորհրդակցեք նրանց կարիքների մասին» 2018թ. սեպտեմբերի թողարկման մեջ:

Հարցեր և պատասխաններ սպասավորության հարցազրույցների վերաբերյալ

Ի՞նչ է սպասավորության հարցազրույցը:

Այն քննարկում է սպասավորող եղբայրների և երեցների քվորումի նախագահության անդամի միջև կամ սպասավորող քույրերի և Սփոփող Միության նախագահության անդամի միջև այնպիսի միջավայրում, որը թույլ է տալիս նրանց ոգեշնչում փնտրել և ստանալ Սուրբ Հոգուց: Արդյունքում սպասավորող եղբայրներն ու քույրերը կարող են ոգեշնչվել հսկել, սիրել, ուսուցանել և սփոփել Փրկիչի ձևով:

Արդյո՞ք այս եռամսյակային հարցազրույցները պետք է անցկանցվեն անձամբ:

Սովորաբար, դրանք իրականացվում են անձամբ, բայց կարող են անցկացվել հեռախոսով կամ առցանց, եթե անձամբ հանդիպելը հնարավոր չէ: Ընդհանուր առմամբ, հնարավորության դեպքում, ցանկալի է, որ երկու զուգընկերները մասնակցեն հարցազրույցին:

Ո՞րն է սպասավորության հարցազրույցների նպատակը:

Սպասավորության հարցազրույցները հնարավորություն են տալիս սպասավորող եղբայրներին և քույրերին վերանայել ներկայիս իրավիճակները, ապագա ծրագրեր կազմել և ցուցաբերել անհրաժեշտ օգնություն անհատներին կամ ընտանիքներին, ում նրանք սպասավորում են: Դա հնարավորություն է զրուցել այն մասին, թե քվորումն ու Սփոփող Միությունը ինչ միջոցներ կարող են տրամադրել:

Ինչպե՞ս կարող եմ վարվել գաղտնի կամ զգայուն հարցերի դեպքում:

Սպասավորող եղբայրներն ու քույրերը գաղտնի տեղեկություններով կիսվում են միայն երեցների քվորումի կամ Սփոփող Միության նախագահի հետ, կամ՝ անմիջապես եպիսկոպոսի հետ: Գաղտնի կամ զգայուն թեմաներով չի կարելի կիսվել առաջին կիրակի օրվա խորհրդի ժողովներին:

Դուք կարող եք դիտել ուսուցողական տեսանյութերը սպասավորության հարցազրույցների մասին՝ ***ministering.lds.org*** *կայքում:*

Առաջին կիրակի օրվա խորհրդի ժողովներ

Ի լրումն սպասավորության հարցազրույցների, առաջին կիրակի օրվա խորհրդի ժողովները մեկ այլ եղանակ են, որով կարող ենք ուրիշներին ընդգրկել սպասավորության մեջ: Սփոփող Միության և երեցների քվորումի ժողովներին ոգեշնչումը կարող է գալ ներկաներին Հոգու միջոցով և խմբի ուրիշ անդամներից:

Խորհրդի ժողովի նպատակն է.

- «Միասին խորհրդակցել տեղական պարտականությունների, հնարավորությունների և դժվարությունների շուրջ,
- Սովորել միմյանց գաղափարներից և փորձառություններից, և
- Ծրագրել ուղիներ՝ գործելով Հոգուց ստացած տպավորությունների հիման վրա»:[4]

Խորհրդի ժողովները միայն քննարկումներ չեն. դրանք առաջնորդում են մեզ գործել անհատապես կամ խմբով՝ ըստ Հոգու ոգեշնչման: Անդամները կարող են ցանկություն զգալ իրականացնել Տիրոջ աշխատանքը այս ժողովների արդյունքում:

Գործելու հրավեր

«Այսօր մենք աղոթում ենք,- ասել է Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդը՝ Տասներկու Առաքյալների Քվորումից,- որ տղամարդիկ և կանայք, ինչպես նաև մեր բարձր տարիքի երիտասարդ տղամարդիկ և երիտասարդ կանայք այս գերագույն համաժողովից հետո լրջորեն պարտավորվեն սրտանց հոգ տանել միմյանց մասին, մղվելով միմիայն Քրիստոսի մաքուր սիրով»:[5] ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Տես *Mormon Messages* video “Lift,” lds.org/media-library:
2. Gary E. Stevenson, in “Ministering Interviews” (video), ministering,lds.org.
3. Տես Ռասսել Մ. Նելսոն, «Սպասավորություն», *Լիահոնա,* մայիս 2018, 100:
4. *Եկ, հետևիր ինձ. Մելքիսեդեկյան Քահանայության կամ Սփոփող Միության հանար, Լիահոնա,* նոյեմբեր 2017, 140, նաև մատչելի է՝ at comefollowme.lds.org:
5. Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Եղեք նրանց հետ և ամրացրեք նրանց», *Լիահոնա,* մայիս 2018, 103:

Ո՞ՒՐ Է ԳՆՈՒՄ ՏԱՍԱՆՈՐԴԻ ԳՈՒՄԱՐԸ

Ի՞նչ է տեղի ունենում այն գումարի հետ, որը դուք մուծում եք որպես տասանորդ:



Դուք գումար եք վաստակում:

Դուք նվիրաբերում եք ձեր եկամտի 10 տոկոսը որպես տասանորդ (տես ՎևՈւ 119):

Դուք ձեր տասանորդը տալիս եք ձեր եպիսկոպոսության կամ ճյուղի նախագահության անդամին կամ ներկայացնում եք առցանց donations.lds.org:

Եկեղեցու գլխավոր գրասենյակում, Առաջին Նախագահությունը, Տասներկու Առաքյալների Քվորումը և Նախագահող Եպիսկոպոսությունը կազմում են Տասանորդի Տնօրինման Խորհուրդը (տես ՎևՈւ 120): Ինչպես հրահանգված է Տիրոջ կողմից, նրանք կայացնում են ոգեշնչված որոշումներ այն մասին, թե ինչպես պետք է օգտագործվեն այս սուրբ ֆոնդերը:

ՏԱՍԱՆՈՐԴԸ ԿԱՐՈՂ Է ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼ.

Տաճարների, եկեղեցիների և Եկեղեցու սեփականություն հանդիսացող այլ շենքերի կառուցման և պահպանման համար

Եկեղեցու կրթական ծրագրերի իրականացման համար

Սուրբ գրությունների և այլ նյութերի տպագրության համար

Ընտանիքի պատմության հետազոտության կատարման համար

Բարօրության ծրագրի և մարդասիրական նախաձեռնությունների իրականացման համար

Միսիոներական աշխատանքի կատարման համար

Եկեղեցու միջոցառումների կազմակերպման համար՝ ծխի և ճյուղի անդամների միջև ընկերակցությունը զարգացնելու նպատակով

ԻՄԱՑԵՔ ԱՎԵԼԻՆ

- Երեց Դեյվիդ Ա. Բեդնար, «Երկնքի պատուհանները», հոկտեմբեր 2013թ. գերագույն համաժողով
- Մաղաքիա 3.7–18
- *«Տասանորդ», «Հավատքին հավատարիմ»* (2004), 180–82

ՆԿԱՐԸ՝ ԴԵՅՎԻԴ ԳՐԻՆԻ

Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն
Տասներկու Առաքյալների Քվորումից

ԵՐԵՑ ԳԵՐԻԹ Վ. ԳՈՆԳ.

Սիրեք Տիրոջը և ապավինեք Նրան

Անգլիայի Օքսֆորդի Համալսարանի մագիստրատուրայի ուսանող ու նորապսակ Գերիթ Վ. Գոնգը իր սեփական փորձով սովորեց, որ եթե մենք սիրենք Տիրոջը և ապավինենք Նրան, Նա կօգնի մեզ, կառաջնորդի և կզորացնի մեզ:

Գերիթը Ռոդեսի կրթաթոշակակիր էր և աշխատում էր երկու գիտական կոչումների վրա, որոնցից մեկը դոկտորի կոչումն էր: Միաժամանակ, նա ծառայում էր Օքսֆորդի ծխի եպիսկոպոսությունում: Նա և իր կինը՝ Սյուզանը, հիշում են այն խորհուրդը, որը նրանց տվեց Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Բ. Հեյթը (1906–2004), երբ կատարում էր նրանց ամուսնությունը Սոլթ Լեյքի Տաճարում: «Նա հանձնարարեց մեզ միշտ կոչումներ ունենալ», — ասում է Երեց Գոնգը: «Մենք գիտեինք, որ եթե ապավինենք Աստծուն և ներդնենք մեր լավագույն ջանքերը, Նա կօգնի մեզ»:

Գերիթն ու Սյուզանը իրոք ստացան «աստվածային օգնության և գորովագութ ողորմություններ», — ասում է նա: Շարունակելով ծառայությունը եպիսկոպոսությունում, Գերիթը ավարտեց բոլոր ուսումնական պահանջները դոկտորական աստիճանի համար, բացառությամբ իր դիսերտացիայի: Նա քահանայական օրհնություն խնդրեց Օքսֆորդի ծխի եպիսկոպոս Ալան Վեբստերից: Օրհնության մեջ Գերիթը ստացավ հետևյալ խոստումը. «Շարունակիր անել ամենը, ինչ կարող ես, և Տերը կօրհնի քեզ»:

Ծխի երկու անդամներ, ովքեր փորձառու դատական քարտուղարներ էին, կամավոր օգնեցին տպել նրա ձեռագիրը, և Գերիթը կարողացավ ավարտել իր դիսերտացիան մի քանի ամսից: Փաստորեն, երեք տարում նա ավարտեց և ստացավ թե՛ մագիստրոսի, թե՛ դոկտորի աստիճան: Ավարտելուց հետո նա ստացավ նաև ֆակուլտետի գիտաշխատողի պաշտոնը համալսարանում:

Օքսֆորդի նրա փորձառությունը մեծացրեց նրա վստահությունը Տիրոջ հանդեպ, վստահություն, որը շարունակվում է մինչ օրս և կշարունակի օրհնել Գերիթ Վ. Գոնգին հիմա, երբ նա ծառայում է Տասներկու Առաքյալների Քվորումում:

Հաց և ձուկ

«Տերը բարի ու առատաձեռն է, և ջանում է օրհնել մեզ», — ասում է Երեց Գոնգը: «Եթե մենք անենք հնարավոր ամեն բան, նա մեզ հնարավորություն կտա անել ավելին, քան կարող ենք: Դա նման է ձկան ու հացի քանակի բազմապատկմանը: Տերը վերցնում է այն, ինչ առկա է և բազմապատկում ու դարձնում է ավելի շատ, ինչը մենք ինքներս չենք կարող անել:

Հացի ու ձկան սկզբունքը գործում է նաև սովորելու դեպքում: «Նույնիսկ, երբ պաշտոնական կրթությունը հասանելի չէ, կարևոր նշանակություն ունի ուսումնառության ոգին, քանի որ ուսումնառությունը հավերժ է: Մենք բոլորս կարող ենք փնտրել լույս և ճշմարտություն,

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ԸՍՏ՝ © GETTY IMAGES

Երեց Գոնզը իր երջանկության մեծ մասը վերագրում է իր ծնողներին՝ Ջինին և Ուոլթերին, և իր կնոջը՝ Սյուզանին: Նրա ծնողների տունը «լի էր ակնածանքով իր բոլոր զավակների համար Աստծո ունեցած սիրո հանդեպ», — ասում է նա: Երբ Երեց Գոնզը առաջին անգամ հանդիպեց իր կնոջը, նա այնպիսի զգացողություն ուներ, որ միշտ ճանաչել էր նրան:

անկախ մեր հանգամանքներից: Երբ մենք անենք այդ, Տերը կօգնի մեզ գտնել այն»:

Պատկանելություն ուխտին

Մինչ Օքսֆորդում էր, Երեց Գոնզը սովորեց մեկ այլ ավետարանական սկզբունք, որը կոչվում է «պատկանելություն ուխտին»:

«Երբ ավելի ենք մոտենում Տիրոջը, մենք նաև մոտենում ենք միմյանց», — ասում է նա: «Օքսֆորդում ես և Սյուզանը նույնքան բարձր էինք գնահատում ծխում ձեռք բերած մեր փորձառությունը, որքան մեր ուսումնական փորձառությունը: Մեր ներկայիս թանկագին ընկերներից շատերը Օքսֆորդի ծխից են»:

Այդ ընկերների թվում են Թիմ և Քեթրին Ուիթները, ովքեր հիշում են, թե ինչպես տաճար գնացին Գոնզերի հետ: «Ես հստակ հիշում եմ, որ Եղբայր Գոնզը հանեց իր ժամացույցը, որպեսզի չշեղվի կամ սահմանափակվի ժամանակով՝ հավերժության հարցերի մասին խորհելիս», — ասում է Քույր Ուիթը: «Այդ փոքր գործողությունն օգնեց ինձ ավելի ջանասեր լինել իմ տաճարային երկրպագության մեջ»:

Գոնզերը հաճախ են հանդիպում այն ընկերներին, ում նրանք ճանաչում են ավետարանի շնորհիվ: «Մարդիկ ասում են. «Մենք աշխատել ենք ձեզ հետ, երբ դուք բարձրագույն խորհրդում էիք» և նման բաներ, — ասում է Երեց Գոնզը, — և դա երկկողմանի է: Ես երախտապարտ եմ ցցի նախագահի և ծխի խորհրդի համար, ովքեր օգնեցին ինձ, երբ երիտասարդ եպիսկոպոս էի: Մենք բոլորս պարտական ենք ծնողներին, կնոջ և ամուսնու բարեկամներին, հարևաններին, միսիաների նախագահներին, քույրերին և քահանայության ղեկավարներին, ովքեր բարի են մեր հանդեպ և խրախուսում են մեզ գալ Քրիստոսի մոտ»:

Ընտանեկան ժառանգությունը

Երեց Գոնզը հայտնաբերել է իր նախնիներին՝ 34 սերունդ ետ գնալով, մինչև Առաջին Դրագոն Գոնզը, ով ծնվել է մ.թ 837 թվականին: Երեց Գոնզի պապն ու տատը Միացյալ Նահանգներ են ներգաղթել Չինաստանից: Նրա մայրը՝ Ջինը, միացել է Եկեղեցուն Հավայան կղզիներում (ԱՄՆ) դեռահաս տարիքում, իսկ ավելի ուշ հաճախել է Բրիգամ Յանգ Համալսարանը Պրովոյում (Յուտա, ԱՄՆ), որտեղ ապրում

էր Գեղարվեստի Քոլեջի առաջին դեկանի՝ Գերիթ դե Ջոնգի ընտանիքի հետ: «Ջոնգերը օգնեցին ինձ հասկանալ, թե ինչպիսին է ավետարանի ընտանիքը», — ասում է նա:

ԲՅՀ-ն ավարտելուց հետո Ջինը սովորեց Պալո Ալտոյի Համալսարանում (ԱՄՆ, Կալիֆորնիա), որտեղ հանդիպեց Վոլտեր Ա. Գոնգին: «Նա արդեն քրիստոնյա էր և արագ հասկացավ, թե ինչ է առաջարկում վերականգնված ավետարանը», — ասում է Ջինը: Նա միացավ Եկեղեցուն, և մի տարի անց նրանք ամուսնացան Սոլթ Լեյք Տաճարում: Երկուսն էլ արհեստավարժ մանկավարժներ էին և միասին ավելի քան 70 տարի անցկացրին ուսուցանելով:

«Հայրս նաև հայրապետ դարձավ, — ասում է Երեց Գոնգը, — և քանի որ հայրապետական օրհնությունները տրվում էին մեր տանը, տունը լցված էր ակնածանքով, որը տածում էինք Իր զավակների համար Աստծո սիրո հանդեպ»:

1953թ. դեկտեմբերի 23-ին Կալիֆորնիայի Ռեդվուդ Սիթիում ծնվեց Ջինի և Վոլտերի երեք զավակներից առաջինը: «Նրա առաջին անունը՝ Գերիթ, հոլանդական անուն է՝ ի պատիվ Գերիթ դե Ջոնգի», — բացատրում է Ջինը: «Նրա միջին անունը Վոլտեր է՝ ի պատիվ իր հոր: Իսկ մեր ընտանիքի ազգանունը չինական է՝ ի պատիվ նրա ժառանգության»:

Ջինն ասում է, որ Գերիթը շատ ուշադիր էր իր կրտսեր եղբոր ու քրոջ՝ Բրայանի և Մարգերի'տի հանդեպ: «Նա սիրում էր օգնել նրանց, — ասում է նա, — նույնիսկ փոքր բաներում, ինչպես օրինակ՝ սովորեցնում էր նրանց կապել կոշկաքուղերը»: Նա հիշում է, որ մի օր տուն եկավ եկեղեցուց և պատահաբար լսեց, որ Գերիթն ու Բրայանն ասում էին, որ, իրենց կարծիքով, հաղորդության ժողովի ելույթը ձանձրալի էր: «Ուստի ես կոչ արեցի նրանց. Այդ դեպքում դուք հանդես եկեք ավելի լավ ելույթով: Նրանք ընդունեցին կոչը և սկսեցին ավելի շատ ուշադրություն դարձնել բոլոր ելույթներին», — ասում է նա:

Դեռահաս տարիքում Գերիթը սիրում էր արշավների գնալ իր ծխի այլ երիտասարդ տղամարդկանց հետ: Ռոլլի Սոլբական՝ նրա վաղեմի ընկերը, հատկապես հիշում է մի ճամբարային ուղևորություն: «Ես այնտեղ էի Գերիթի, նրա եղբայր Բրայանի և մի այլ ընկերոջ հետ, ով մեր Եկեղեցու անդամ չէր: Ինչ-որ պատճառով մենք սկսեցինք հիմներ երգել: Գերիթը երգում էր մեղեդին, Բրայանը տենոր էր, իսկ ես՝ բաս: Կարծում եմ, մենք երգեցինք 10–20 հիմն պարզապես երգելու ուրախությունը զգալու համար: Դա լավ փորձառություն էր: Մեր ոչ անդամ ընկերը տպավորված էր»:

Եղբայր Սալբական նաև հիշում է, որ ավագ դպրոցում Գերիթը սպորտային աջակցող խմբին խնդրեց անաղմուկ աջակցել շախմատի թիմին: «Նա համոզեց նրանց, որ բարոյական աջակցությունը օգտակար է բոլորին, — ասում է նա, — իսկ նրանք փաստորեն եկել էին խաղի»:

Ձախից՝ Մարջորի և Գորդոն Հինքլիները ողջունում են Գերիթին և Սյուզանին Գոնգերի հարսանեկան ընդունելության ժամանակ: Թայվանում որպես միսիոներ ծառայելիս, Երեց Գոնգը ուսուցանում էր մի ընտանիքի, և տարիներ անց, երբ Բարձրագույն Իշխանավոր էր, հանդիպեց այդ ընտանիքի դուստրերից մեկի թոռանը: Վիետնամում Երեց և Քույր Գոնգերը մի որմնանկար նկարեցին, որպես մի եղանակ, որն ուրախություն կբերեր դժվարությունների մեջ գտնվող երեխաներին: Գոնգ ընտանիքի անդամները հավաքվեցին նրանց հետ, ովքեր աջակցել են Վիետնամում որմնանկարը նկարելու գործին:

Ավագ դպրոցից հետո Երեց Գոնգը հաճախում էր Բրիգամ Յանգի Համալսարան: 1973–1975թ.թ. նա ծառայեց Թայվանի Թայփեյ Միսիայում, հետո վերադարձավ ԲՅՀ, որտեղ 1977-ին ստացավ բակալավրի աստիճան Ասիական ուսումնասիրությունների և համալսարանական ուսումնասիրությունների ոլորտում:

Սիրահետում և ամուսնություն

Իր միսիայից հետո Պրովոյի Միսիոներների պատրաստման կենտրոնում Երեց Գոնգը կամավոր կազմակերպում էր երեկոյան հոգևոր հավաքներ: Հոգևոր հավաքները օգնում էին Թայվան ուղևորվող միսիոներներին ծանոթանալ այնտեղի ժողովրդի, սովորույթների և մշակույթի հետ: Միսիոներներից մեկը Քույր Սյուզան Լինդսեյն էր՝ Յուտայի Թեյլորսվիլից,

Ռիչարդ Փ. և Մերիան Բ. Լինդսեյների դուստրը: Եղբայր Լինդսեյը Յոթանասունի Երկրորդ Քվորումի անդամ էր: «Ես այնպիսի զգացում ունեի, որ Սյուզանին միշտ ճանաչել էի», — ասում է Երեց Գոնզը:

Երկու տարի անց, երբ Սյուզանն արդեն մի քանի ամիս վերադարձել էր Միսիայից և ուսանում էր ԲՅՀ-ում, Գերիթը Պրովոյում էր իր ընտանիքի հետ: Նրա հայրը ուսուցանում էր համալսարանում, իսկ Գերիթը ծրագրել էր երկշաբաթյա այցելություն: Այցելությունը երկարացվեց չորս շաբաթ, քանի որ նա և Սյուզանը ժամադրվում էին ամեն օր: Հետո Գերիթը մեկնեց նախամասնագիտական ուսուցման Հավայան կղզիներում՝ նախքան կվերադառնար Օքսֆորդ:

«Միմյանց հետ մենք շփվում էինք երկու տարբեր կիսագնդերից», — հիշում է Երեց Գոնզը: «Ես փորձում էի ուսանել Անգլիայում, մինչ կարողանում էի ամեն բան իմանալ նրա մասին Ատլանտյան օվկիանոսից այն կողմ»:

«Մենք նշանվեցինք հեռախոսով», — ասում է քույր Գոնզը: «Նա կրկին տուն եկավ Գոհաբանության տոնին և մենք ամուսնացանք տաճարում հենց նույն օրը, երբ առաջին անգամ այն բացվեց նոր տարում»: Երկու

շաբաթ անց նրանք միասին մեկնեցին Անգլիա այնտեղ նոր կյանք սկսելու նպատակով:

«Երբ մարդիկ ամուսնանում են, նրանք խոսում են երկու ընտանիքների միավորման մասին», — ասում է Երեց Գոնզը: Եվ դա այն էր, ինչ իրականում պատահեց ինձ հետ»: Ես ինձ զգում եմ Լինդսեյ ընտանիքի մասը, ինչպես, որ Գոնզ ընտանիքի մասն եմ»:

Աստղային կարիերա

Օքսֆորդի ֆակուլտետում մի կարճ ժամանակ աշխատելուց հետո, Գերիթի կարերան տեղափոխվեց կառավարության ծառայության ոլորտ՝ ԱՄՆ-ի Վաշինգտոն ԿՇ-ում: 1984թ. նա ծառայեց Ռեյգան-Բուշ նախընտրական քարոզարշավի աշխատակազմում, որտեղ նույն աշխատասենյակում աշխատում էր Մայք Լեվիտի հետ, ով ավելի ուշ դարձավ Յուտայի նահանգապետը: «Գերիթը դիտողունակ էր և խորամիտ, — ասում է Եղբայր Լեվիտը, — բայց նա աչքի էր ընկնում իր անսահման բարությամբ»:

1985թ. Գերիթը ծառայեց Պետական Դեպարտամենտում որպես փոխքարտուղարի հատուկ օգնական: 1987թ. նա դարձավ ԱՄՆ-ի դեսպանի հատուկ օգնականը Չինաստանի Պեկին քաղաքում: 1989–2001թթ. նա բազմաթիվ պաշտոններ է զբաղեցրել Ռազմավարական և Միջազգային Հետազոտությունների Կենտրոնում Վաշինգտոն ԿՇ-ում: Այնուհետև նա վերադարձավ ուսումնական ոլորտ, զբաղեցնելով ԲՅՀ-ի նախագահի օգնականի պաշտոնը ռազմավարական ծրագրերի գծով: Այդ պաշտոնում նա աշխատեց ինը տարի:

Քերրի Ջենկինսը՝ ԲՅՀ-ի համալսարանի հաղորդակցման բաժնի նախագահի օգնականը, զբաղեցնում էր կողքի գրասենյակը: Նա հիշում է իր կողքին գտնվող մարդկանց քաջալերելու Գերիթ Գոնզի կարողությունը: «Եթե դուք վստահ չէիք, որ կարող եք ձեզ վրա վերցնել դժվարին հանձնարարությունը, նա վստահություն էր ցուցաբերում ձեր հանդեպ», — ասում է նա: «Նա անում էր ամեն բան իր ուժերի սահմանում՝ ձեզ խորհուրդ

տալով, ձեզ հույս տալով և թույլ տալով, որ առաջ գնաք և ինքնահաստատվեք»:

Ֆեդերալ դատավոր Թոմաս Բ. Գրիֆիթը, ով ճանաչում էր Երեց Գոնգին Վաշինգտոնից և ԲՅՀ-ից, այսպես է նկարագրում փոխգործակցությունը նրա հետ. «Խոսակցության վերջում դուք հասկանում եք, որ դուք էիք ուշադրության կենտրոնում: Նա հրաշալի ունկնդիր է: Եվ նա հարցեր է տալիս, որոնք ձեզ ստիպում են մտածել»:

Մեսիլ Օ. Սամուելսոնը՝ պատվավոր Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական և ԲՅՀ-ի նախկին նախագահը, ասում է, որ Երեց Գոնգը «հիմնականում հանգիստ է, բայց անիվները միշտ պտտվում են»:

Ընտանեկան կյանքը

Գերիթ և Սյուզան Գոնգերը ունեցան չորս որդի՝ Ամրահամ, Սեմուել, Քրիստոֆեր և Մեթյու, ովքեր մեծացան տարբեր միջավայրերում:

«Երբ մենք Պեկինում էինք, մեր զավակները օրհնված էին, լինելով միմյանց լավագույն ընկերները», — ասում է Երեց Գոնգը:

«Մի կողմից, նրանք հնարավորություն ունեին տեսնելու աշխարհի լայնածավալ պատկերը», — հավելում է Քույր Գոնգը: «Մյուս կողմից, դա օգնեց մեզ դառնալ համերաշխ ընտանիք: Մեր տղաները դեռևս ասում են, որ լավագույն բանը, որ մենք, որպես ծնողներ, արել ենք, այն է, որ նրանց եղբայրներ ենք տվել»:

«Մի անգամ մենք օգտվեցինք մեր հավելավճար մղոններից», — ասում է Երեց Գոնգը: «Մենք թույլ էինք տալիս, որ յուրաքանչյուրն ընտրի որևէ վերջնակետ: Մենք սկսեցինք Վաշինգտոն ԿՇ-ից, որտեղ ապրում էինք, հետո գնացինք Անգլիա, Չեխիայի Հանրապետություն, Հունաստան, Թուրքիա, Հնդկաստան, Չինաստան և Ճապոնիա:

Այդ ուղևորության ընթացքում մենք ունեինք մի հաստատուն կանոն», — ասում է Սյուզանը: «Որտեղ էլ որ գնում էինք, մենք ուտում ենք այն, ինչ ուտում էր տեղի ժողովրդը»: Ի վերջո, Ճապոնիայում ճամփորդության վերջում Երեց Գոնգը ասաց իր որդիներին, որ նրանց տանում է աշխարհի ամենահայտնի բիֆշտեքսի ռեստորանը: Մակդոնալդում չորս քաղցած որդիները և երկու ծնողները սպառեցին 17 համբուրգեր:

«Մայրիկն և հայրիկը բարձր են գնահատում ուսումը, որը գալիս է փորձառությունից», — ասում է Աբրահամը: «Հայրիկը խորապես մտածում է այն մասին, թե փորձառություններն ինչպես են ձևավորում մարդկանց, ներառյալ՝ ամբողջ մշակույթներ»: Աբրահամը նաև նշում է, որ իր հայրը «զգույշ է խոսում, քանի որ նա աշխատում է ամբողջությամբ փոխանցել իմաստը և լիովին հավատա այն ամենին, ինչ ինքն ասում է»:

Սեմը հիշում է. «Պետական Դեպարտամենտում՝ այդքան զբաղվածությամբ հանդերձ, հայրս ժամանակ էր գտնում ամեն երեկո մարզել և ուսուցանել ինձ, պատրաստելով երրորդ դասարանի մաթեմատիկայի մրցույթի համար, որին ես ցանկանում էի մասնակցել, և որը կոչվում էր «Մրցահրավեր 24»: Նա ասաց, որ եթե ես հաղթեմ, մենք խնջույք կկազմակերպենք պաղպաղակի կոներով և 24 տեսակի լցոնով: Սեմը մասնակցեց ազգային եզրափակիչին, բայց չհաղթեց: Ամեն դեպքում ընտանիքը կերավ պաղպաղակը: Բայց հեշտ չէր ապահովել 24 տեսակի լցոնը, եղավ միայն մեկը՝ տավարի ապխտած միսը:

Քրիստոֆերն ու Մեթյուն նշում են, թե «որքան բարձր են գնահատում վստահությունը, սերը և նվիրումը, որոնցով մեր հայրն ու մայրը կիսվել են մեզ հետ»: Դա այն սերն է, որով Երեց և Քույր Գոնգերը կիսվում են միմյանց, իրենց յուրաքանչյուր որդու և մյուս հարազատների հետ:

«Նվիրված հայր Գերիթը նաև նվիրված որդի ու եղբայր է», — ասում է Սյուզանը: «Այդ դերերը կարևոր են նրա համար: Նա օգնում է մեզ հասկանալ, որ ընտանեկան հարաբերությունները ամեն բանից կարևոր են»:

Փորձառությունը Եկեղեցում

Չնայած Երեց Գոնզը զբաղված էր կարիերայով և ընտանիքով, նա շարունակում էր պատրաստակամ ծառայել Եկեղեցու բազմաթիվ կոչումներում, այդ թվում որպես՝ բարձրագույն խորհրդական, քահանայապետերի խմբի ղեկավար, ցցի Կիրակնօրյա դպրոցի նախագահ, սեմինարիայի ուսուցիչ, եպիսկոպոս, ցցի միսիայի նախագահ, ցցի նախագահ և Տարածքային Յոթանասունական:

Ինչ կոչման էլ որ կանչված լինի, և իր ընտանեկան կյանքում նույնպես, նա

Ձախից՝ Թայլանդում Երեց Գոնզը հանդիպեց Բանկոկի Կաթոլիկ արքեպիսկոպոս՝ Գերապատիվ Ֆրանսիս Զավիեր Կարդինալ Կրենգսակ Կովիտավանիջի հետ: Երեց Գոնզը սիրում է ճանապարհորդել իր որդիներից յուրաքանչյուրի հետ առանձին-առանձին, ինչպես այս ուղևորությունը դեպի Կանադա իր որդի Սեմի հետ: Երեց Գոնզը Կյանքի հացի վերաբերյալ իր մտքերով կիսվում է սեմինարիայի և ինստիտուտի ուսուցիչների հետ 2017թ.: Քույր Գոնզը ողջույններ է փոխանակում կամբոջացի անդամի տանը:

հետևողականորեն դրսևորում է որոշակի հատկանիշներ: «Նա բոլորին դիտարկում է որպես Երկնային Հոր որդի կամ դուստր», — ասում է Քույր Գոնզը: «Բայց ամենից առավել նա սիրում է Տիրոջը: Նա իր ողջ սրտով իրոք ցանկանում է կառուցել Աստծո արքայությունը և օրհնել Երկնային Հոր զավակներին»:

Եվ նա հիանում է իր կնոջով: «Ինչ էլ որ ինձ խնդրեն կատարել, — ասում է նա, — Սյուզանն իմ կողքին է: Նա հարմարավետ է զգում բոլորի հետ, և լավ է տրամադրված ուրիշների հանդեպ: Նա միշտ պատրաստ է գնալ այլ վայրեր, փորձել նոր բաներ, ինչի համար ես շնորհակալ եմ նրան»:

Ծառայությունը Յոթանասունի Քվորումում

2010թ. ապրիլի 3-ին Երեց Գերիթ Վ. Գոնզը հաստատվեց որպես Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական: Նա նշանակվեց Ասիայի Տարածաշրջանի Նախագահությունում, որի գլխավոր գրասենյակը գտնվում է Հոնգ Կոնգում: Ավելի ուշ նա դարձավ Ասիայի Տարածաշրջանի նախագահը: 2015թ. հոկտեմբերի 6-ին Երեց Գոնզը հաստատվեց Յոթանասունի Նախագահությունում, որտեղ շարունակվեց նրա միջազգային փորձառությունը, ներառյալ՝ տարածաշրջանային ստուգումները աշխարհի տարբեր մասերում, ինչպես օրինակ՝ Աֆրիկայում և Կենտրոնական Ամերիկայում:

«Դուք ծանոթանում եք և սկսում եք սիրել Սրբերին այդ բոլոր վայրերում», — ասում է նա: «Դուք օրհնված եք զգում, երբ մարդիկ պատմում են ձեզ իրենց հավատքի մասին, քանի որ Աստծո աշխատանքի փորձառությունն իրենց կյանքում դառնում է այն հասկացողության մասը, թե ով է Աստված և ինչպես է Նա սիրում մեզանից յուրաքանչյուրին»:

«Երբ մենք Երեց Գոնզին ուղարկում ենք որևէ վայր, այդ իրավիճակում ներգրավված մարդիկ զգում են, որ գտել են ընկերոջ», — ասում է Նախագահ Նելսոնը: «Նրա գիտելիքների մակարդակը շատ բարձր է, բայց նա խոնարհ է: Նա կարողանում է առնչվել մարդկանց հետ բոլոր մակարդակներում և միշտ լավ պատրաստված է ու շատ համոզիչ»:

Առաքյալի կոչումը

Երբ Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը ծառայության կանչեց Երեց Գոնզին որպես Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ, մարգարեն «սիրալիր վերցրեց իմ ձեռքը իր ձեռքի մեջ, մինչ Սյուզանը իմ կողքին էր, և առաջարկեց այս սրբազան կոչումը Տիրոջից, շունչս կտրվեց» («Տեր Քրիստոսն հարյավ այսօր» *Լիահոնա,* մայիս 2018, 97): Խոնարհ, բայց Տիրոջ հանդեպ սիրով ու վստահությամբ, Երեց Գոնզը ընդունեց կոչումը: Նա հաստատվեց 2018թ. մարտի 31-ին: Տիրոջ կողմից լիովին պատրաստված, այսուհետ նա կծառայի որպես «Քրիստոսի անվան հատուկ վկան ողջ աշխարհում» (ՎԱՈ 107.23): ■

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ՀՈԳԵՎՈՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՑ ԸՍՏ՝ DESERET NEWS

Երեց Նիլ Լ. Անդերսեն
Տասներկու Առաքյալների Քվորումից

ԵՐԵՑ ՈՒԼԻՍԵՍ ՍՈԱՐԵՍ.

Մարդ, ում մեջ նենգություն չկա

Երբ Իր ծառայության վաղ շրջանում Հիսուսն ընտրում էր Իր Առաքյալներին, Նա տեսավ, որ Նաթանայելը գալիս է Իր մոտ: Նա անմիջապես նկատեց Նաթանայելի բարությունը, երբ վերջինս հայտարարեց. «Ահա ճիշդ Իսրայէլացի. Որի մէջ նենգութիւն չկայ»:[1]

Հիսուսը գիտեր, որ Նաթանայելը մաքուր սիրտ և ազնիվ մտադրություններ ուներ, կեղծավոր կամ խաբեբա չէր: Տիրոջը դուր եկավ արդարակյաց շիտակության այս հատկանիշը և Նա կանչեց Նաթանայելին որպես Առաքյալ:[2]

Ուլիսես Սոարեսը նման է հին Նաթանայելին, և Փրկիչը նրան ևս կանչեց ծառայության:

«Իմ ծնողների լույսը»

Ուլիսես Սոարեսը՝ չորս եղբայրներից կրտսերը, ծնվել է 1958թ. հոկտեմբերի 2-ին Բրազիլիայի Սան Պաուլո քաղաքում: Նա համեստ ծագում ունի, բայց նրա ծնողները՝ Ապարեչիդո և Մերսեդես Կարեչո Սոարեսները պատվարժան, աշխատասեր մարդիկ էին, ովքեր ազնվորեն լսում էին միսիոներներին: Նրանք միացան Եկեղեցուն 1965թ.-ին, երբ Ուլիսիեսը վեց տարեկան էր:

«Ես երբեք չեմ տեսել, որ Եղբայր Ապարեչիդոն բաց թողնի ժողովը»,- ասում է Օրսիս Կաբրալը, ով ծառայել է որպես ցցի նախագահ, երբ Ուլիսեսը երիտասարդ տղամարդ էր: «Մերսեսդեսը նույնպես շատ հավատարիմ էր: Ուլիսեսը ժառանգել է իր ծնողների նվիրվածությունը»:

Ուլիսեսի ի բնե բարի սիրտը ծաղկում էր, երբ նա ուսումնասիրում էր Տիրոջ ուղիները: «Ես մեծացա Եկեղեցում, հետևելով իմ ծնողների լույսին»,- ասում է Երեց Սոարեսը: Երբ նա հետևում էր այդ լույսին, չնայած ընդդիմությանը, նրա վկայությունն աճում էր:

«Իմ դպրոցում ես Եկեղեցու միակ անդամն էի, և մյուս տղաները միշտ փորձում էին թուլացնել ինձ և ստիպում էին սխալ քայլեր կատարել»,- ասում է նա: «Ես պետք է սովորեի պաշտպանվել այս մարտահրավերներից, բայց իմ ողջ սրտով միշտ վստահ էի, որ Տերը կօգնի ինձ հաջողության հասնել: Երբ ես երիտասարդ տղամարդ էի, հասկացա, որ եթե դու կատարում ես քո բաժինը, Տերն էլ կկատարի Իր բաժինը: Բայց դու պետք է ամուր բռնես Նրա ձեռքից և Նրա ավետարանից:

Երբ Ուլիսեսը 15 տարեկան էր, նրա եպիսկոպոսը խնդրեց նրան ուսուցանել Կիրակնօրյա Դպրոցի դասարանի երիտասարդներին: Նա ուսուցանեց մի դաս, որը կենտրոնացած էր ավետարանի մասին վկայություն ձեռք բերելու վրա: Ուլիսեսը ուսումնասիրել էր Մորմոնի Գիրքը, զգում էր, որ Եկեղեցին ճշմարիտ է և հավատում էր Փրկիչ Հիսուս Քրիստոսին:

ԵՏԻՆ ՊԼԱՆ՝ GETTY IMAGES

Ուլիսես Սարեսը «մեծացել է Եկեղեցում՝ հետևելով իր ծնողների լույսին», Ապարեչիդո և Մերսեդես Սարեսները (ձախից): Երբ Ուլիսեսը վստահում էր Տիրոջը, չնայած ընդդիմությանը, նա սովորեց ամուր կառչել Փրկիչից ու Նրա ավետարանից:

Երբ նա պատրաստում էր իր դասը, ցանկանում էր իր հզոր վկայությունը բերել դասարանին ավետարանի ճշմարտացիության մասին: «Ես ջերմեռանդ ուսումնասիրում և աղոթում էի»,- հիշում է Երեց Սարեսը: «Երբ ծնկի իջա, մի հաճելի զգացում պատեց իմ սիրտը, և մի մեղմ ձայն հաստատեց, որ այս գործը ճշմարիտ է: Դա այնքան ուժեղ էր, որ ես երբեք չէի կարող հերքել այդ գիտելիքը»:

Երբ Ուլիսեսը հասունացավ, հասկացավ, որ եթե անի ավելին, քան ակնկալվում էր իրենից կամ խնդրում էին իրեն, Տերը շռայլորեն կօրհներ իրեն: Նա մի այդպիսի դաս ստացավ, երբ պատրաստվում էր միսիայի: Ուլիսեսի հետ հարցազրույցի ժամանակ նրա եպիսկոպոսը շեշտեց պատվիրաններին հնազանդվելու կարևորությունը: Նա կարևորեց նաև ֆինանսական պատրաստվածությունը:

Ներկայումս Բրազիլիայի բոլոր միսիոներները իրենք են մասամբ վճարում միսիայի ծախսերը, մինչդեռ շատ ընտանիքներ վճարում են բոլոր ծախսերը: Երբ Ուլիսեսի միսիայի տարիքը մոտեցավ, նա որոշեց, որ ինքը կվաստակի միսիայի համար անհրաժեշտ ամբողջ գումարը: Օգտագործելով աշխատանքային խիստ էթիկան, որը նա սովորել էր, աշխատելով իր հոր փոքր ձեռնարկությունում, և զինված լինելով արագ տպելու կարողությամբ, Ուլիսեսը մշտական աշխատանքի անցավ մի ընկերությունում, որտեղ օգնում էր կազմել աշխատավարձի ցուցակը:

Հանձնելով ընդունելության դժվար քննությունը, նա սկսեց հաշվապահություն ուսանել երեկոյան տեխնիկական բարձրագույն դպրոցում: Ամեն ամիս տասանորդը վճարելուց հետո նա գումար էր խնայում իր միսիայի համար: Մի տարի անց նրան տեղափոխեցին աշխատելու իր ընկերության հաշվապահության բաժին:

«Ահա թե ես ինչպես կարողացա վճարել իմ միսիայի համար»,- ասում է Երեց Սարեսը: «Մինչև իմ միսիան, երեք տարիների ընթացքում ես ամեն ամիս որևէ անհրաժեշտ իր էի գնում՝ վերնաշապիկ, տաբատ, զուգագուլպա, փողկապ, ճամպրուկ»: Նա նաև կարիք ուներ իր ծնողների ու տեղական ղեկավարների սիրո և աջակցության, որը ստանում էր:

Ուլիսեսը կանչվեց Բրազիլիա Ռիո դե Ժանեյրո միսիա: Իր միսիայի առաջին մասը

նա ծառայեց Նախագահ Հելիո դա Ռոչա Կամարգոյի ղեկավարությամբ, ով ավելի ուշ դարձավ Բրազիլիայից կանչված առաջին Բարձրագույն Իշխանավորը: Ուլիսեսը սկսեց իր միսիան 1978թ.-ի սկզբին: Լատինական Ամերիկայում առաջին տաճարը նվիրագործվեց այդ տարվա վերջում Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի կողմից (1895–1985):

1980թ. հունվարին Ուլիսեսն ու նրա զուգընկերը, ով նույնպես դեռ չէր ստացել իր օժտումը, նստեցին Ռիո դե Ժանեյրո մեկնող ավտոբուսը, որը ութ ժամ հետո նրանց հասցրեց Սան Պաուլո Բրազիլիա Տաճար: Ուլիսեսի ծնողներն ու եղբայրները դիմավորեցին նրան այնտեղ և Սոարեսների ընտանիքը կնքվեց ժամանակի և հավերժության համար: Ուլիսեսը երբեք չի մոռանա Սան Պաուլո Տաճարում անցկացրած այդ հինգ ժամերը: Օրվա վերջում իր զուգընկերոջ հետ նա վերադարձավ իր միսիայի տարածք:

Դնել Աստծուն առաջին տեղում

Ուլիսեսը վայելում էր իր բարեհաջող միսիան, որը հետագայում ամրացրեց նրա վկայությունը: Երբ նա տուն վերադարձավ, աշխատանք գտավ և տեղի համալսարանում սկսեց ուսանել հաշվապահություն ու տնտեսագիտություն:

Նա արդեն յոթ ամիս տանն էր, երբ պատահաբար հանդիպեց «Քույր Մորգադոյին» ցցի պարերի միջոցառման ժամանակ: Մի որոշ ժամանակ Ուլիսեսը ծառայել էր որպես նրա տարածքի ղեկավար, և երկուսով, միմյանց հերթ չտալով, ամբողջ երեկոն անցկացրին միսիայի մասին պատմություններ պատմելով: Երեք ամիս անց նրանք սկսեցին ժամադրվել:

Ռոզանա Ֆերնանդես Մորգադոն ութ տարեկան էր, երբ ավագ քույրը՝ Մարգրետը նրան սկսեց Եկեղեցի տանել: Ի վերջո, երկու հավատարիմ ունկնդիրներին հայրը թույլ տվեց մկրտվել, բայց երկուսն էլ ստիպված էին սպասել, մինչ կլրանար 17 տարին: Ռոզանան եկեղեցի էր հաճախում ինը տարի, նախքան մկրտության թույլտվություն ստանալը:

Ուլիսեսն ապրում էր Սան Պաուլոյի հյուսիսում, իսկ Ռոզանան իր ծնողների հետ ապրում էր քաղաքի հարավային մասում: Փռված քաղաքում ավտոբուսով և մետրոյով ճամփորդելը խլում էր երկուսից երեք ժամ: Բարեբախտաբար, Մարգրետն ու իր ամուսին Կլաուդիոն ապրում էին նրա ծնողների տան կողքին:

«Երբ Ուլիսեսը հանգստյան օրերին գալիս էր Ռոզանայի հետ հանդիպման, նրա համար այլևս դժվար էր տուն վերադառնալ երեկոյան»,- հիշում է Երեց Կլաուդիո Ռ. Կոստան, Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունականը, նրա ապագա քենակալը: Ուստի նա և Մարգրետը հրավիրում էին Ուլիսեսին ժամադրությունից հետո գիշերը մնալ իրենց տանը: «Մենք որդեգրել էինք նրան մի կարճ ժամանակով»,- հավելում է Երեց Կոստան:

«Նա քնում էր մեր հյուրասենյակի բազմոցին»,- ասում է Քույր Կոստան: «Մենք վերջերս էինք ամուսնացել, ուստի հավելյալ վերմակ չունեինք: Բայց նա ծածկվում էր մեր հին վարագույրով: Նա երջանիկ էր, քանի որ հաջորդ օրը կրկին կարող էր տեսնել Ռոզանային: Նա լավ էր վերաբերվում քրոջս, և իմ ծնողները նրան շատ էին սիրում»:

Ուլիսեսն ու Ռոզանան ամուսնացան 1982թ. հոկտեմբերի 30-ին Սան Պաուլո Բրազիալիա Տաճարում:

Եթե դուք մի քանի րոպե անցկացնեք Երեց և Քույր Սոարեսների հետ, ձեզ համար իսկույն ակնհայտ կդառնա փոխադարձ սերը, հիացմունքը և հարգանքը, որ նրանք տածում են միմյանց հանդեպ: Երեց Սոարեսի համար Ռոզանան «միշտ եղել է բարության, սիրո և Տիրոջ հանդեպ լիակատար նվիրվածության օրինակ իմ և իմ

Երեց Սոարեսը գնահատում է իր կնոջը Ռոզանային «իր կյանքում եղած բոլոր լավ բաների համար»: Ջույգն ամուսնացավ 1982թ. (վերջում՝ աջից), Բրազիլիա Ռիո դե Ժանեյրո Միսիայում իրենց ծառայությանը հետևած պատահական հանդիպումից երկու տարի անց:



Երեց Սոարեսը Ռոզանայի հետ 2000թ. (վերևում), իր ընտանիքի հետ (ներքևում՝ աջից), և որպես լիաժամկետ միսիոներ 1979թ. (վերևում՝ աջից), Նոր անդամ Վազներ դե Սոուզա Սանթոսի և այն ժամանակ նրա հարսնացուի՝ (այժմ կնոջ) Ռեգինայի հետ: Եղբայր Սանթոսը ներկայումս ծառայում է որպես Վիլա Բրազիլիա ցցի նախագահ Էսպիրիտո Սանթո նահանգում: Կիմ Փիքեթը՝ Երեց Սոարեսի զուգընկերը, ետին պլանում:

ընտանիքի համար»:[3] Քույր Սոարեսի համար Ուլիսեսը «պարգև է Աստծուց»:

Քույր Սոարեսը հավելում է. «Նա միշտ եղել է չափազանց պատասխանատու և արդարակյաց, նա միշտ շատ հոգատար է եղել մեր ընտանիքի հանդեպ և ինձ միշտ շատ լավ է վերաբերվել: Եկեղեցու իր բոլոր կոչումներում նա ներդրել է իր բոլոր ջանքերը: Նա գնում և կատարում է իր գործը: Աստծո գործերը նա միշտ առաջին տեղում է դնում իր կյանքում: Ես կրկին ու կրկին սիրահարվում եմ նրան, քանի որ գիտեմ, որ եթե նա Աստծո գործերը դնում է առաջին տեղում, ինձ նույնպես կդնի առաջին տեղում»:

Իր կնոջ մասին Երեց Սոարեսն ասում է. «Նա իսկական հերոս է և ոգեշնչում է մեր ընտանիքին: Նա սիրալիր է, բարի և համբերատար բոլորի հանդեպ: Նա միավորում է մեր ընտանիքը և բոլորի մեջ միայն լավն է տեսնում: Նա մեծ ներդրում ունի այն ամենի մեջ, ինչ կատարվում է իմ կյանքում: Տասներկու Առաքյալների Քվորումի իմ կոչման մասին ես կատակով ասացի նրան. «Ես քեզ եմ մեղադրում սրա համար, քանի որ դու բազմապատկել ես ավետարանի զորությունը իմ կյանքում»:

Մեծ սիրտ

Գուստավոն՝ Սոարեսի ավագ զավակը, հիշում է այն երեկոն, երբ ինքը փոքր տղա էր և, չհնազանդվելով ծնողներին, փախավ տնից՝ մասնակցելու Սան Պաուլոյում տեղի ունեցող ամենամյա Ֆեստա Ջունինա տոնակատարությանը:

«Ես մի մեծ ամբոխի կենտրոնում էի ու լավ ժամանակ էի անցկացնում, երբ լսեցի, թե հաղորդավարն ինչպես էր ինձ ամբոխից դուրս հրավիրում»,- ասում է նա: «Այդ ժամանակ ես տեսա հայրիկիս»:

Նրա ծնողները խիստ անհանգստացած էին, բայց Գուստավոյին հանդիմանելու փոխարեն Ուլիսեսը ամուր գրկեց նրան:

«Մենք լուրջ խոսակցություն ունեցանք իմ անհետանալու մասին, բայց ծնողներս ինձ հարգանքով վերաբերվեցին»,- հիշում է Գուստավոն: «Ես պաշտպանված էի զգում և գիտեի, որ ծնողներս իսկապես սիրում են ինձ»:

Ուլիսեսը նվիրված է իր ընտանիքին: Չնայած աշխատանքի ու ուղևորությունների զբաղված ժամանակացույցին, նա ժամանակ է ստեղծում իր զավակների հետ հարաբերությունների կառուցման համար:

Երբ Երեց Սոարեսը հաստատվեց Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ 2018թ. մարտի 31-ին, հավանաբար, ոչ ոք այնքան զարմացած չէր, որքան Գուստավոն և իր երկու քույրերը՝ Լետիցիա Կարավելլոն ու Նատալիա Սոարես Ավիլան: Բայց եթե սերը, ծանր աշխատանքն ու համեստությունը որակում են մարդուն առաքյալի կոչման համար, ասում են նրանք, ապա կարող են հասկանալ, թե Տերն ինչու կանչեց իրենց հորը:

«Երբ Հիսուսը կանչում էր Իր Առաքյալներին, նա չընտրեց բանիմաց փարիսեցիներին, Նա ընտրեց ձկնորսներին»,- ասում է Լետիցիան: «Իմ հայրն ու մայրն այդպիսին են: Նրանք լիովին վստահում են Տիրոջը, և Նա օգտագործում է նրանց Իր աշխատանքը կատարելու համար, քանի որ Նա գիտե, որ ծնողներս անձնատուր, պատրաստակամ ու ջանասիրաբար աշխատում են և խոնարհաբար են ընդունում ուղղումը»:

Նրանց հոր «մեծ սիրտը» կօգնի նրան, մինչ նա առաջ է գնում որպես Փրկիչի հատուկ վկաներից մեկը, ավելացնում է Նատալիան: «Դրա համար նա ունի համապատասխան սիրտ»,- ասում է նա: «Նա զգում

է երկնային ազդեցությունը, և սիրում է բոլորին ու ցանկանում է անել այն, ինչը ճիշտ է»:

«Ամեն բան լավ կլինի»:

Երբ Երեց Սարեսը ծառայում էր որպես Պորտուգալիա Պորտո Միսիայի նախագահ 2000–2003թթ., նա հայտնի դարձավ հետևյալ պորտուգալերեն արտահայտության համար՝ «Tudo vai dar certo», որը հայերեն նշանակում է՝ «Ամեն բան լավ կլինի»:

«Նա ուսուցանել է դա մեզ»,- հիշում է Թայ Բեննետը՝ նրա միսիոներներից մեկը: «Նա իր կյանքն ապրում է հավատով ու լավատեսությամբ առ այն, որ եթե մենք անենք այն, ինչ Տերն է ցանկանում, ամեն բան լավ կլինի»:

Նա նաև ուսուցանել է իր միսիոներներն չօգտագործել *դժվար* կամ *անհնարին* բառերը, ասում է նրա մեկ այլ միսիոներ Ռիչարդ Շիլդզը: «Մենք այդպիսի գործերին վերաբերվում էինք որպես «մարտահրավերների»: Այդ խորհուրդը ձևավորեց իմ կյանքը, երբ ես գործերը դիտարկում էի որպես «մարտահրավերներ», որոնք պետք է հաղթահարել, ոչ թե վերաբերվել որպես «դժվար» կամ «անհնարին»:

Այդպիսի հավատքն ու լավատեսությունը չի եկել հեշտ կյանքից: Երեց և Քույր Սարեսները լավ գիտեն, թե ինչ է զրկանքից բխող հիասթափությունը, աշխատանքի և ուսման երկար օրերի հոգնածությունը, հիվանդության դժվարությունները, անհաջողությունները, մահացած երեխայի ծնունդը, և քույրերի, եղբայրների ու ծնողների մահը:

Բայց կյանքի ընթացքում նրանք իրենց հավատքն արտահայտել են Երեց Սարեսի սիրելի սուրբ գրության մեջ. «Եղիր խոնարհ. և Տերը՝ քո Աստվածը, ձեռքդ բռնած կառաջնորդի քեզ և կպատասխանի քո աղոթքներին»:[4]

«Դժվարությունները մեր առաջընթացի մասն են»,- ասում է Երեց Սարեսը: «Բայց երբ մենք համբերատար ենք տառապանքի մեջ, երբ մենք գոյատևում ենք կյանքի դժվարությունների մեջ, երբ մենք հավատարիմ ենք մնում, Տերը բարձր է դա գնահատում և օրհնում է մեզ Իր խոստացած օրհնություններով»:

Իսկ երբ մենք ամուր կառչում ենք երկաթյա ձողից, հավելում է նա, Տերը մեզ մենակ չի թողնի:

«Երբ մենք հետևողականորեն ամուր կառչում ենք երկաթյա ձողից, ավետարանից, սուրբ գրություններից և Հիսուս Քրիստոսից, կարողանում ենք հաղթահարել կյանքի փորձությունները»,- վկայում է Երեց Սարեսը: «Եթե մենք ծնկի իջած աղոթում ենք, Նա մեզ հետ կլինի և կառաջնորդի մեզ: Նա կոգեշնչի մեզ և մենք կիմանանք, թե ուր գնանք և ինչ անենք: Երբ մենք հնազանդ ենք ու խոնարհ, Տերը պատասխանում մեր աղոթքներին»:

Նվիրյալ Առաքյալը

Ուլիսես Սարեսը կարողունակ և պատրաստված մարդ է: Նրա կրթությունը, ներառյալ՝ բիզնեսի կառավարման մագիստրոսի կոչումը, պատրաստել էին նրան որպես հաշվապահ և առդիտոր Բրազիլիայի բազմազգ կորպորացիաներում աշխատելու համար: Այս փորձառությունը պատրաստեց նրան Եկեղեցու ֆինանսական բաժնում աշխատելու համար, որն էլ իր հերթին պատրաստեց նրան 31 տարեկանում դառնալու Եկեղեցու աշխարհիկ գործերի ամենաերիտասարդ տնօրեններից մեկը: Այդ պատրաստվածությունը լավ հիմք հանդիսացավ, որ նա ծառայի որպես միսիայի նախագահ և որպես Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական 2005թ. ապրիլի 2-ից:

Նախքան 2013թ.-ի հունվարի 6-ին Յոթանասունի Նախագահություն կանչվելը, Երեց Սարեսը ծառայել է որպես Բրազիլիա Տարածաշրջանի Նախագահության

խորհրդական, ապա նախագահ, և որպես խորհրդական՝ Աֆրիկայի Հարավարևելյան Տարածաշրջանում: Այնտեղ նա ծառայում էր որպես Երեց Դեյլ Գ. Ռենլանդի խորհրդական, ապա որպես Բարձրագույն Իշխանավոր Յոթանասունական: Երեց Ռենլանդը, ով հիմա Տասներկու Առաքյալների Քվորումի անդամ է, գնահատում է միասին անցկացրած ժամանակը:

«Երեց Սոարեսը Հիսուս Քրիստոսի եռանդուն, նվիրյալ առաքյալն է»,- ասում է Երեց Ռենլանդը: «Ես չեմ ճանաչում մեկ այլ մարդու, ով ավելի ուժեղ է զգում իրեն, քան նա՝ Տիրոջ գործը կատարելիս: Եթե նրան խնդրում են ինչ-որ բան անել, նա կատարում է այդ գործը իր ողջ զորությամբ»:

Նա ասաց, որ Երեց Սոարեսը արագ «սիրահարվեց» Աֆրիկայի Սրբերին:

Լինի դա Պերուի Սրբերի հետ (ձախից), Գանայում (ներքևում), թե այլ երկրներում, որտեղ նա ծառայել է ու սպասավորել, Երեց Սոարեսը «հեշտությամբ է սիրում մարդկանց»,- ասում է Երեց Կլաուդիո Ռ. Մ. Կոստան:

Տարածաշրջանում նրա առաջին հանձնարարություններից մեկն էր նախագահել ցցի համաժողովին Կանանգայում (Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն): «Երբ նա վերադարձավ, շարունակ խոսում էր իրեն հանդիպած մարդկանց բարության և նվիրվածության մասին»,- ասում է Երեց Ռենլանդը:

Երեց Լ. Ուիթնի Քլեյթոնը, ով հինգ ու կես տարի Երեց Սոարեսի հետ ծառայել է Յոթանասունի Նախագահությունում, նրան անվանում է համերաշխության երաշխավոր: Նա լսում և կշռադատում է իր մտքերը: Ժողովների ժամանակ նա շատ ուշադիր է վարում, այնպես, որ մեր ձայներից ձևավորվում էր ավելի շուտ երգչախումբ, քան թե մրցակցող մենակատարներ»:

Չնայած երկար տարիների իր աշխատանքին և ուղղորդությունների զբաղված ժամանակացույցին, Երեց Սոարեսը միշտ առաջին տեղում է դնում իր կնոջը, երեխաներին և թոռներին (ներքևում՝ ձախից): Նա նաև ժամանակ է գտնում՝ իր կնոջ հետ, զբաղվելու խոհարարությամբ և դառնալու կայացած խոհարար (ձախից՝ վերջում):

ԼՈՒՍԱՆԿԱՐ ԿԱՌԷ՝ ՌՈՋԱՆԱՅԻ ՀԵՏ, ՍՈԼԹ ԼԵՅՔ ՏԱՃԱՐԻ ԴԻՄԱՑ,
ՆԿԱՐԸ ՔՐԻՍՏԻԱՆ ՄՐՖԻՐԻ, *DESERET NEWS*

Երեց Սոարեսը համեստությամբ է խոսում պորտուգալերենով, իսպաներենով, անգլերենով ու ֆրանսերենով իր հաղորդակցման ունակության մասին: Բայց այդ պարգևը, որը մշտական ուշադրություն է պահանջում, օրհնություն է Եկեղեցու համար, ասում է Երեց Քլեյթոնը: Երեց Սոարեսը Եկեղեցու անդամների մեծամասնության հետ կարող է խոսել նրանց մայրենի լեզվով:

«Ուլիսեսը առաջնորդ էր դեռևս վաղ տարիքից»,- նկատում է Երեց Կլաուդիո Կոստան՝ նրա քենակալը: «Նա շատ խելացի է և ունակ, միշտ ունի իր պարտականությունը լավագույնս կատարելու զգացումը: Նա հեշտությամբ է սիրում իրեն շրջապատող մարդկանց: Նա ունի Փրկչի ճշմարիտ հետևորդի սիրտ և իսկական վկայություն, որ Հիսուսը Քրիստոսն է: Ես սիրում եմ նրան և երախտապարտ եմ, որ հաստատում եմ նրան որպես Տիրոջ Առաքյալ»:

Իսկ Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դեյվիդ Ա. Բեդնարը, ելույթ ունենալով Տասներկու Առաքյալների Քվորումի առջև, հավելեց. «Երեց Սոարեսը Փրկչի մաքուր, հասարակ և անմեղ աշակերտն է: Իր լուսավոր հայացքի, իր ջերմ ժպիտի և հաճելի վարվելակերպի միջոցով բազմաթիվ անհատներ և ընտանիքներ ոգեշնչվել են, ոգեշնչվում են և կոգեշնչվեն՝ ավելի մեծ ցանկությամբ հետևելու Փրկչին և ապրելու Նրա ավետարանի պատվիրաններով:

Մեր տնտեսության մեջ Տերն ասաց Էդվարդ Պատրիջին. «Նրա սիրտը մաքուր է իմ առաջ, քանզի նա նման է հին Նաթանայելին, որի մեջ չկա նենգություն»:[5] Հայրում Սմիթի մասին Տերն ասել է. «Ես՝ Տերս, սիրում եմ նրան իր սրտի շիտակության համար, և որովհետև նա սիրում է այն, ինչը ճիշտ է իմ առաջ»:[6]

Ուլիսես Սոարեսի մասին Տերը կասեր նույն բանը: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Հովհաննես 1.47
2. Տես James E. Talmage, *Jesus the Christ* (1916), 217–18, 222:
3. «Մարգարեները խոսում են Սուրբ Հոգու զորությամբ», *Լիահոնա,* մայիս 2018, 98:
4. Վարդապետություն և Ուխտեր 112.10
5. Վարդապետություն և Ուխտեր 41.11
6. Վարդապետություն և Ուխտեր 124.15

Ի՞նչ է **յուրաքանչյուր եպիսկոպոս** ցանկանում, որ իմանան իր անդամները

Սիա ութ ճշմարտություններ, որոնք ես սովորեցի որպես եպիսկոպոս իմ ծառայության ընթացքում:



Մայքլ Մեյեր

Ես հրաշալի հնարավորություն եմ ունեցել ծառայել որպես եպիսկոպոս: Այդ տարիների ընթացքում ես ավելի շատ դասեր սովորեցի, քան կարելի է թվարկել: Ես սովորեցի ութ ճշմարտություններ, որոնք, ըստ ինձ, համընդհանուր են: Չնայած այս ցանկում ամեն բան ընդգրկված չէ, ես կփորձեմ կիսվել նրանով, ինչը յուրաքանչյուր եպիսկոպոս հուսով է, որ գիտեն իր ծխի անդամները:

1. Եպիսկոպոսը իսկապես սիրում է իր ծխի յուրաքանչյուր անդամի:

Սերը, որ եպիսկոպոսը տածում է իր ծխի հանդեպ, կապված է այն սիրո հետ, որը Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսը տածում են մեզանից յուրաքանչյուրի հանդեպ: Երբ հաղորդության ժողովին եպիսկոպոսը նայում է անդամներին, նա լցվում է այնպիսի կարեկցանքով ու համակրանքով, որը երբևէ չի զգացել նախկինում: Երբ եպիսկոպոսը կանգնում է և կիսվում, թե որքան շատ է նա սիրում իր ծխի անդամներին, նրա զգացմունքները անկեղծ են և իսկական: Իմացեք, որ ձեր եպիսկոպոսը սիրում է ձեզ, մտահոգվում է ձեզ համար և հոգում ձեր մասին ավելի շատ, քան դուք կարծում եք:



2. Եպիսկոպոսին ֆիզիկապես, զգացմունքային և հոգևոր առումներով աջակցում են անդամների հավատն ու աղոթքները:

Եպիսկոպոսը շատ ժամանակ է ծախսում՝ ծառայելով եկեղեցում: Նա հաճախ շատ ժամեր է անցկացնում եկեղեցում կիրակի օրերին և լրացուցիչ ժամեր՝ աշխատանքային օրերին՝ երեկոյան այցելելով, հարցազրույցներ անցկացնելով և հոգ տանելով իր ծխի անդամների մասին:

Եպիսկոպոսը կարողանում է անել դա ամեն շաբաթ ծխի անդամների հավատի և աղոթքների շնորհիվ: Որպես նոր կանչված եպիսկոպոս, արցունքներն ինքնաբերաբար հորդում էին իմ աչքերից ամեն անգամ, երբ որևէ անդամ աղոթում էր՝ «օրհնիր եպիսկոպոսին»: Ձեր հավատի աղոթքները իրոք ստանում են իրենց պատասխանները, և եպիսկոպոսը ստանում ու զգում է այդ աղոթքների սատարող ազդեցությունը: Տերը պատասխանում է Եկեղեցու եպիսկոպոսների համար արված հավատով լի այդ աղոթքներին:

3. Եպիսկոպոսը հաճախ է զգում է, որ ինքը անհամապատասխան է այդ կոչման համար (նույնիսկ երեք կամ չորս տարի անց):

Ես շատ քիչ եպիսկոպոսների եմ ճանաչում, ովքեր զգում էին, որ իսկապես «պատրաստված» են այս կոչման համար: Սակայն, ես իրոք գիտեմ, որ «ում Տերը կանչում է, Տերը որակավորում է»:[1] Թեև եպիսկոպոսը գիտե, որ ինքը դառնում է որակավորված, նա մաքառում է այն զգացումի հետ, որ ինքը երբեք լավ չի ծառայի իր կոչման մեջ: Նա կանի հնարավոր ամեն բան, որպեսզի խորհուրդ տա՝ երբ անհրաժեշտ է, չվիրավորել մարդկանց և լինել Հոգու հետ ներդաշնակության մեջ: Բայց նա երբեմն կցանկանա իմանալ՝ արդյո՞ք ինքը բավարար է կատարում իր կոչման պարտականությունները:

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ Է © GETTY IMAGES

4. Աստծո Հոգին կարող է աշխատել եպիսկոպոսի միջոցով, երբ նա խորհրդակցում է ծխի անդամների հետ:

Երբ ինձ հարցնում են, թե ինչն եմ ես ամենաշատը կարոտում որպես եպիսկոպոս, ես մարդկանց ասում եմ, որ կարոտում եմ Հոգու ուժեղ ազդեցությանը, որն ուղեկցում է եպիսկոպոսին իր կոչման մեջ: Ամեն հարցում՝ երբ մխիթարում է նրանց, ովքեր կորցրել են իրենց սիրելիներին, զրուցում նրանց հետ, ովքեր մաքառում են անհավատարիմ ամուսինների դեմ, մարդկանց ապաշխարության կոչ անում, Հոգին, որը հասանելի է հավատարիմ եպիսկոպոսին, Աստծո և հայտնության Հոգին է:

Վերջերս իմ ծխի նախկին անդամներից մեկը խնդրեց ինձ օգնել իրեն մի քանի անձնական խնդիրների հարցում: Նա տեղափոխվել էր նոր ծուխ և համոզված չէր՝ արդյո՞ք ցանկանում է դիմել իր նոր եպիսկոպոսին ուղղորդման համար: Ես նրան ասացի մի բան, ինչը բազմիցս կրկնել էի կոչումից ետ կանչվելուց հետո. Ես ուրախ կլինեի օգնել, բայց ես այլևս չեմ կրում եպիսկոպոսի բանալիները, և այդ բանալիները կարող են վճռական լինել այն աջակցությունը տրամադրելու համար, որի կարիքը նա ուներ: Ես առաջարկեցի, որ նա խոսեր իր եպիսկոպոսի հետ: Ես այցելեցի նրան երկու շաբաթ անց, և նա ասաց, որ հանդիպել էր իր եպիսկոպոսի հետ և վերջինս, կարծես, արդեն գիտեր նրա խնդիրների մասին և թե ինչպես օգներ: Թեև եպիսկոպոսը անշուշտ կարող է սխալվել, Տերը ոգեշնչում ու առաջնորդում է նրան և կյանքեր է օրհնում նրա խոսքերի միջոցով:

5. Եպիսկոպոսը մարդ է, նա երբեմն սխալներ է գործում, իսկ երբեմն սխալ է վարվում:

Եպիսկոպոսները, ի վերջո, մահկանացու մարդիկ են: Նրանք ունեն թերություններ, թուլություններ, կանխակալ կարծիքներ և իրենց անձնական խնդիրները: Հոգին պատրաստում է մարդուն, ով կրում է եպիսկոպոսի պաշտոնը, բայց եպիսկոպոսը, այնուամենայնիվ, մարդ է, ով ենթակա է նույն խնդիրներին ու թուլություններին, որոնց բոլորս ենք բախվում:

Այս գիտակցությունը չպիտի պակասեցնի հարգանքը, որը տածում ենք նրա կոչման հանդեպ, կամ ուշադրությունը, որ դարձնում ենք նրա խորհրդին: Եպիսկոպոսը շատ լավ տեղյակ է իր թուլություններից և ձգտում է հաղթահարել դրանք կամ առնվազն ջանում է եպիսկոպոսի իր ծառայությունը անմասն պահել դրանցից: Որքան էլ որ նա ջանքեր գործադրի, նա միշտ անկատար կլինի:

6. Եպիսկոպոսը համարում է, որ երբեք չի հասցնում բավարար չափով հանդիպել իր ծխի անդամների հետ կամ բավականաչափ բարիք գործել նրանց համար:

Ամեն օր եպիսկոպոսը հետաքրքրվում է, թե ուրիշ ում կարող է օգնել կամ պետք է օգնի այդ օրը: Ես շատ կկամենայի կանոնավոր այցելել յուրաքանչյուր անդամի, բայց ես ունեի լրիվ դրույքով աշխատանք, ընտանիք, երիտասարդների ծրագիր և ծխի անդամներ, ովքեր ունեն մեծ կարիքներ: Պարզապես բավարար ժամանակ չկար կանոնավոր այցելել յուրաքանչյուր անդամին:

Այնուամենայնիվ, որպես եպիսկոպոս, Հոգին երբեմն հուշում էր ինձ այցելել որևէ անդամի, ով մաքառումների մեջ էր: Բազմաթիվ անգամներ այդ այցելությունները սկսվում էին այս խոսքերով «Ես գիտեի, որ դուք կգաք»: Հոգին, որը մենք զգում էինք, հաճախ անհաղթահարելի էր, քանի որ երկուսս էլ հասկանում էինք, որ այցելությունը նրա ապացույցն է, որ Աստված պատասխանում է աղոթքներին:

Ես միշտ բավականություն էի ստանում նաև այն ընդունելությունից, որ ստանում էի ակտիվ, «չմաքառող» անդամների դռների մոտ: Այդ լավ մարդիկ եկեղեցի են գնում ամեն շաբաթ, հավատարիմ ծառայում են եկեղեցու իրենց կոչումներում, չունեն ակնհայտ մեծ դժվարություններ և քահանայության ղեկավարները նրանց հիմնականում կանոնավոր չեն այցելում: Նրանց համար շատ հաճելի էր դեմ առ դեմ որոշ ժամանակ անցկացնել իրենց եպիսկոպոսի հետ: Ձեզ բոլորիդ ես ասում եմ. «Շնորհակալություն»: Շարունակեք առաջ շարժվել: Իմացեք, որ ձեր եպիսկոպոսը սիրում է ձեզ և ավելի հաճախ կայցելեր ձեզ, եթե կարողանար:

7. Ձեր եպիսկոպոսը իրոք, անկեղծորեն, ազնվորեն կարիք ունի, որ դուք ծառայեք միմյանց:

Երբ որպես եպիսկոպոս ինձ ասում էին, որ ծխի որևէ անդամ մաքառումների մեջ է, ես միշտ հարցնում էի. «Ո՞վ է նրա տնային և այցելող ուսուցիչը»: Դա եղանակ էր, որով գնահատվում էր, որ անդամի կարիքները կստանան և կարճատև, և երկարատև լուծումներ: Եպիսկոպոսը, ով գործում է առանց ծխի կամ ցցի մյուս անդամների օգնության, սահմանափակ միջոցներ ունի: Նա անշուշտ կարող է և պետք է այցելի ճգնաժամային վիճակում գտնվող մարդկանց: Բայց քահանայության և Սփոփող Միության հետ միասին օգնելու նրա հնարավորությունը կարող է ընդարձակվել:

Ահա, թե ինչ է սպասավորությունը: Կան ժամանակներ, երբ մեզանից ոմանք մոռանում են, թե մենք ինչու ենք սպասավորում միմյանց. Տերը պատվիրել է մեզ՝ «իրար սիրէք» (Հովհաննես 13.34): Իմացեք, որ ձեր եպիսկոպոսն օգտագործում է սպասավորությունը որպես ոգեշնչված եղանակ ծխի անդամների կյանքում «ավելի ներկա» գտնվելու համար:

8. Եպիսկոպոսը ցանկանում է ի վիճակի լինել իր հոտի համար ամեն բան անելու:

Ցանկացած ժամանակ, օր ու գիշեր, լինի քահանայության օրհնություն, խորհուրդ ուղուց շեղված երեխային կամ պատահարի վայր արագ գնալու անհրաժեշտություն, նա ցանկանում է անել այն ամենը, ինչի կարիքը ունի անդամը: Նա չի կարող միշտ անել այդ ամենը և չի կարող ճիշտ անձնավորությունը լինել բոլոր իրավիճակներում, բայց մի վախեցեք օգնություն խնդրել նրանից, երբ կա դրա կարիքը: Իմացեք, որ եպիսկոպոսն այնտեղ է՝ ծառայելու ձեզ այդ պահերին, և դուք երկուսդ առատորեն օրհնվում եք միասին աշխատելու համար:

Ես շատ խոնարհ եմ դարձել սրբազան հնարավորության շնորհիվ, որն ունեի այս սուրբ կոչման մեջ: Իմ ծառայության մեջ ես գնացի հավատքից դեպի գիտելիքը: Ես այլևս ոչ թե հավատում եմ, այլ գիտեմ, որ ավետարանը ճշմարիտ է: Ես այժմ ոչ թե հավատում եմ, որ Աստված գիտե ինձ, այլ ես գիտեմ, որ Աստված տեղյակ է մեզանից յուրաքանչյուրի մասին, մեր առօրյա կյանքի մասին և մեր անձնական մաքառումների մասին: Բացի այդ, ես գիտեմ, որ Նա աշխատում է Իր ծառաների միջոցով, հատկապես նրանց, ովքեր կրում են քահանայության բանալիները: Ես գիտեմ, որ ես չէի կարող ծառայել որպես եպիսկոպոս առանց այս աշխատանքի հանդեպ Աստծո հոգածության: Ավետարանի ճշմարտացիությունը և Աստծո սերը Իր զավակների հանդեպ ծառայելու հնարավորություն է տալիս բոլոր եպիսկոպոսներին: ■

Հեղինակն ապրում է Յուտայում, ԱՄՆ:

ՀԱՂՈՒՄ

1. Թոմաս Ս. Մոնսոն, “Duty Calls,” *Ensign,* May 1996, 44:



HOLY
BIBLE



ԳԼՈՒԽ 8

Քրիստոսի եկեղեցու բարձրացումը

Սա չորս հատորից բաղկացած Սրբեր. Հիսուս Քրիստոսի Եկեղեցու պատմությունը վերջին օրերում *վերնագրով Եկեղեցու պատմության նոր գրքի 8-րդ գլուխն է: Գիրքը տպագիր տարբերակով մատչելի է 14 լեզուներով, Ավետարանի գրադարան հավելվածի Եկեղեցու պատմություն բաժնում և առցանց՝ սրբեր.lds.org-ում: Նախորդ գլուխները հրատարակվել են անցած թողարկումներում և մատչելի են 47 լեզուներով Ավետարանի գրադարան հավելվածում և սրբեր.lds.org-ում:*

1828թ. հուլիսին, ունենալով պատրաստի ձեռագիրը, Ջոզեֆը գիտեր, որ Տերը ցանկանում է, որ ինքը հրատարակի Մորմոնի գիրքը և ամենուրեք տարածի գրքի ուղերձը: Սակայն նա և նրա ընտանիքը ծանոթ չէին հրատարակչական գործին: Նրան անհրաժեշտ էր ապահով պահպանել ձեռագրերը, տպագրիչ գտնել և ինչ-որ կերպ գիրքը հասցնել մարդկանց, ովքեր չեն մերժում նոր սուրբ գրությունների հավանականությունը:

Բացի այդ, Մորմոնի գրքի նման մեծ գիրք տպագրելը էժան գործ չէր: Թարգմանությունը սկսելուց ի վեր Ջոզեֆի ֆինանսական վիճակը չէր բարելավվել, և նրա աշխատած ողջ գումարը ծախսվում էր ընտանիքի կարիքները հոգալու վրա: Նույնը վերաբերում էր նաև նրա ծնողներին, որոնք դեռևս աղքատ հողագործ էին ու մշակում էին իրենց չպատկանող հողը: Ջոզեֆի միակ ընկերը, ով ի վիճակի էր ֆինանսավորել տպագրությունը, Մարտին Հարրիսն էր:

Ջոզեֆն արագ գործի անցավ: Թարգմանության ավարտից առաջ նա հայտ էր ներկայացրել գրքի հեղինակային իրավունքների համար, որպեսզի բնագիրը ապահովվեր գողությունից ու գրագողությունից:[1] Մարտինի օգնությամբ Ջոզեֆը սկսեց նաև տպագրիչ փնտրել, որը կհամաձայներ տպել գիրքը:

Սկզբում նրանք գնացին Էգբերտ Գրանդինի մոտ, որը Ջոզեֆի տարիքի մի տպագրիչ էր Պալմիրայում: Գրանդինը միանգամից մերժեց առաջարկը, մտածելով, որ գիրքը գրվել է խաբեությամբ: Առանց երկմտելու, Ջոզեֆն ու Մարտինը փնտրեցին և մոտակա քաղաքում գտան մի տպագրիչ, որը պատրաստ էր գիրքը տպելու: Սակայն նրա առաջարկը ընդունելուց առաջ, նրանք վերադարձան Պալմիրա և Գրանդինին ևս մեկ անգամ հարցրին, թե արդյոք նա կցանկանա գիրքը հրատարակել:[2]

Այս անգամ Գրանդինը ավելի պատրաստակամ գտնվեց հանձն առնել նախագիծը, սակայն գործը սկսելուց առաջ 3000 դոլար գումար պահանջեց հինգ հազար օրինակ տպագրելու և կազմելու համար: Մարտինն արդեն

«ՕԼԻՎԵՐ ՔԱՈՒԴԵՐԻՆ ԿԱՐԳՈՒՄ Է ՋՈԶԵՖ ՍՄԻԹԻՆ», ՎՈԼԹԵՐ ՌԵՅՆ

խոստացել էր օգնել տպագրությանը, սակայն հասկացավ, որ նման գումար հայթայթելու համար նա պետք է գրավ դնի իր ագարակը: Դա վիթխարի բեռ էր Մարտինի համար, սակայն նա գիտեր, որ Ջոզեֆի ընկերների մեջ չկար որևէ մեկը, ով կարող էր գումարով օգնել նրան:

Մարտինը, անհանգստացած, սկսեց մտածել, որ իմաստուն քայլ չի լինի այդքան գումար ներդնել Մորմոնի գրքի տպագրության համար: Նրա ագարակը տարածքի լավագույններից մեկն էր: Իր հողը գրավ դնելով՝ նա վտանգում էր կորցնել այն: Ողջ կյանքի ընթացքում կուտակած հարստությունը մեկ ակնթարթում կարող էր կորչել, եթե Մորմոնի գիրքը լավ չվաճառվեր:

Մարտինը Ջոզեֆին հայտնեց իր մտահոգությունները և խնդրեց, որ նա հայտնություն փնտրի իր համար: Ի պատասխան՝ Փրկիչը խոսեց Հոր կամքը կատարելիս իր կատարած զոհաբերության մասին, հաշվի չառնելով գինը: Նա նկարագրեց մեղքերի համար վճարած Իր ծայրահեղ ցավերը հանուն բոլոր մարդկանց, որ կարողանան ապաշխարել ու ներում ստանալ: Այնուհետև, նա Մարտինին պատվիրեց զոհաբերել սեփական շահերը՝ Աստծո ծրագրի իրականացման համար:

«Դու չպետք է անհագ լինես քո սեփական ունեցվածքով,- ասաց Տերը,- այլ դրանից առատորեն բաժին հանես Մորմոնի Գրքի տպագրության համար»:

«Դու չպետք է անհագ լինես քո սեփական ունեցվածքով,- ասաց Տերը,- այլ դրանից առատորեն բաժին հանես Մորմոնի Գրքի տպագրության համար»: Տերը Մարտինին հավաստիացրեց, որ գիրքը պարունակում է Աստծո ճշմարիտ խոսքը և մարդկանց կօգնի հավատալ ավետարանին:[3]

Չնայած, որ դրացիներին անհասկանալի կլիներ նրա որոշումը, Մարտինը հնազանդվեց Տիրոջը և իր ագարակը գրավ դրեց՝ Մորմոնի գրքի վճարումը երաշխավորելու համար:[4]

Գրանդինը ստորագրեց պայմանագիրը և սկսեց խոշոր նախագծի կազմակերպումը:[5] Ջոզեֆը երեք ամսում թարգմանել էր Մորմոնի գիրքը, մեկական դպիրի օգնությամբ: 590 էջանոց գիրքը տպագրելու և կազմելու համար Գրանդինից ու նրա տասներկու աշխատողներից պահանջվելու էր յոթ ամիս:[6]

Տպագրչին վարձակալելուց հետո Ջոզեֆը 1829թ. հոկտեմբերին վերադարձավ Հարմոնի, որպեսզի Էմմայի հետ աշխատի իրենց ագարակում: Օլիվերը, Մարտինը և Հայրումը այդ ընթացքում պիտի վերահսկեին տպագրությունը և Ջոզեֆին կանոնավորապես տեղեկացնեին Գրանդինի առաջադիմության մասին:[7]

Հիշելով առաջին թարգմանած էջերի կորստից ապրած հուսահատությունը՝ Ջոզեֆը խնդրել էր Օլիվերին պատրաստել Մորմոնի գրքի ձեռագրի էջերի կրկնօրինակը՝ էջ առ էջ, սրբագրության և տառաշարման համար տպագրիչին տանելով միայն կրկնօրինակը:[8]

Գրքի արտագրությունը Օլիվերին հաճույք էր պատճառում և այդ ժամանակաշրջանի նրա նամակները հագեցած էին նրա տպավորություններով: Արձագանքելով Մորմոնի գրքի Նեփիին, Հակոբին ու Ամուղեկին՝ Օլիվերը Ջոզեֆին գրում էր Քրիստոսի անսահման քավության համար իր երախտագիտության մասին:

«Երբ սկսում եմ գրել Աստծո ողորմությունների մասին,- գրել է նա Ջոզեֆին,- չեմ կարողանում դադար տալ, մինչև որ ժամանակն ու թուղթը սպառվում են»:[9]

Տպագրության ժամանակ այդ նույն ոգին նաև ուրիշներին էր ձգում դեպի Մորմոնի գիրքը: Թոմաս Մարշը՝ տպագրիչի նախկին աշակերտը, փորձել էր իր տեղը գտնել այլ եկեղեցիներում, բայց ոչ ոք կարծես չէր քարոզում Աստվածաշնչում ուսուցանվող ավետարանը: Նա հավատում էր, որ շուտով մի եկեղեցի կբարձրանա, որը կուսուցանի վերականգնված ճշմարտությունը:

Այդ ամռանը Թոմասը Հոգով առաջնորդվել էր հազարավոր մղոն ճամփորդել Բոստոնի իր տնից մինչև Նյու Յորք նահանգի արևմուտք: Նա այդ տարածքում անցկացրեց երեք ամիս և չհասկանալով, թե ինչու էր այդքան ճանապարհ անցել, բռնեց տան ճանապարհը: Ետ դարձի ճանապարհին, սակայն, տան տիկինը, որտեղ նա հյուրընկալվել էր, հարցրեց, թե արդյոք նա լսել է Ջոզեֆ Սմիթի «ոսկե գրքի» մասին: Թոմասն ասաց կնոջը, որ չի լսել և ցանկություն զգաց ավելին իմանալ:

Կինն ասաց, որ Թոմասը պետք է խոսի Մարտին Հարրիսի հետ և նրան ուղղեց դեպի Պալմիրա: Թոմասն անմիջապես գնաց այնտեղ և գտավ Մարտինին Գրանդինի տպագրատանը: Տպագրիչը տվեց նրան Մորմոնի գրքի տասնվեց էջ, և Թոմասը դրանք տարավ Բոստոն, անհամբեր սպասելով, որ իր կինը՝

Էլիզաբեթը, ևս համտես անի այդ նոր հավատքի պտուղներից։

Էլիզաբեթը կարդաց էջերը և նույնպես հավատաց, որ Աստծո գործն է։[10]

Այդ աշնանը, երբ տպագրիչները հավասարակշռված առաջ էին տանում Մորմոնի գրքի տպագրությունը, Աբներ Քոլ անունով նախկին մի դատավոր Գրանդինի տպագրատանը սկսեց օրաթերթ հրատարակել։ Աշխատելով գիշերը՝ Գրանդինի աշխատակազմի տուն գնալուց հետո, Աբները հնարավորություն ուներ տեսնել Մորմոնի գրքի տպագրված էջերը, որոնք դեռ կազմված չէին ու վաճառքի համար պատրաստ չէին։

Շուտով Աբները իր թերթում սկսեց ծաղրական հոդվածներ գրել «Ոսկե Աստվածաշունչ» խորագրով, իսկ ձմռան ընթացքում քաղվածքներ տպագրեց հեգնական մեկնաբանություններով։[11]

Երբ Հայրումն ու Օլիվերը տեղեկացան Աբների արարքներին, նրանք սկսեցին դիմագրավել նրան։ «Դուք ի՞նչ իրավունք ունեք այս կերպ տպագրել Մորմոնի գիրքը», պահանջեց Հայրումը։ «Դուք չգիտե՞ք, որ մենք հեղինակային իրավունքներ ունենք»։

«Դա ձեր գործը չէ», ասաց Աբները։ «Ես վարձել եմ տպագրատունը և կտպագրեմ, ինչ կամենում եմ»։

«Ես ձեզ արգելում եմ այդ գրքից որևէ քաղվածք տպագրել ձեր թերթում», ասաց Հայրումը։ դադարեք էջեր տպագրել իմ գրքից»։

«Եթե կարծում ես, թե դու ամենալավ տղան ես,- ասաց Աբները,- հանիր վերարկուդ ու փորձիր»։

«Կա օրենք,- պատասխանեց Ջոզեֆը,- և դու կիմանաս այդ մասին, եթե չդադարես քո սխալ գործը։ Իսկ ես քո հետ չեմ կռվի, քանի որ դա գործին ոչնչով չի օգնի»։

Աբները գիտակցում էր, որ օրենքի առաջ սխալ է։ Նա փափկեց ու դադարեց Մորմոնի գրքից քաղվածքներ տպագրել իր օրաթերթում։[12]

Սողոմոն Չեմբերլինը՝ մի քարոզիչ, որ ճամփորդում էր Կանադա, առաջին անգամ լսեց «Ոսկե Աստվածաշնչի» մասին մի ընտանիքից, որոնց մոտ գիշերում էր Պալմիրայի մոտակայքում։ Թոմաս Մարշի նման նա իր կյանքի ընթացքում տարբեր եկեղեցիներ էր հաճախել, բայց դժգոհ էր մնացել իր տեսածից։ Եկեղեցիները քարոզում էին ավետարանի սկզբունքները և հավատում էին հոգևոր պարգևների, սակայն չունեին Աստծո մարգարեներ, ոչ էլ Նրա քահանայությունը։ Սողոմոնը զգում էր, որ ժամանակը մոտենում է, որ Տերը ի հայտ կբերի Իր Եկեղեցին։

Լսելով ընտանիքի խոսքերը Ջոզեֆ Սմիթի և ոսկե թիթեղների մասին, Սողոմոնը զգաց, թե ինչպես է գլխից մինչև ոտքի ծայրը մի հոսանք անցնում, և նա որոշեց գտնել Սմիթներին և ավելին իմանալ գրքի մասին։

Նա գնաց, որպեսզի գտնի Սմիթների տունը և դռան մոտ հանդիպեց Հայրումին։ «Խաղաղություն այս տանը», ասաց Սողոմոնը։

«Հուսով եմ խաղաղություն կլինի», պատասխանեց Հայրումը։

«Այստեղ կա՞ մեկը,- հարցրեց Սողոմոնը,- որ հավատում է տեսիլքների ու հայտնությունների»։

«Այո,- ասաց Հայրումը,- սա տեսիլատես տուն է»։

Սողոմոնը Հայրումին պատմեց տարիներ առաջ տեսած տեսիլքը։ Այդ տեսիլքում մի հրեշտակ ասել էր, որ Աստված եկեղեցի չունի երկրի վրա, բայց շուտով մի եկեղեցի կբարձրացնի, որը իշխանություն կունենա՝ ինչպես հին առաքելական եկեղեցին։ Հայրումը և տան անդամները հասկանում էին Սողոմոնի խոսքերը և ասացին նրան, որ կիսում են նրա հայացքները։

«Հուսով եմ, ինձ կպատմեք ձեր հայտնագործությունների մասին,- ասաց Սողոմոնը։- Կարծում եմ, ես կարող եմ ընդունել դրանք»։

Հայրումը հրավիրեց նրան հյուրընկալվել Սմիթների ագարակում և նրան ցույց տվեց Մորմոնի գրքի ձեռագիրը։ Սողոմոնը երկու օր ուսումնասիրեց այն և Հայրումի հետ գնաց Գրանդինի տպագրատուն, որտեղ տպագրիչը տվեց նրան վաթսունչորս տպագիր էջերի մի օրինակ։ Չկազմած գիրքը իր ձեռքում, Սողոմոնը գնաց դեպի Կանադա, ճանապարհին քարոզելով այն ամենը, ինչ գիտեր նոր հավատքի մասին։[13]

1830թ. մարտի 26-ին Մորմոնի Գրքի առաջին օրինակները կազմվել և վաճառվում էին Գրանդինի տպագրատան առաջին հարկում։ Նրանք ամուր կազմված էին հորթի շագանակագույն կաշվով և կաշվի ու սոսնձի, թղթի ու թանաքի հոտ էին արձակում։ Գրքի կոնակի վրա տպագրված էր *Մորմոնի գիրքը* ոսկեզոծ տառերով։[14]

Լյուսի Սմիթը գանձի պես պահում էր նոր սուրբ գրությունը և դիտում էր այն որպես նշան, որ Աստված շուտով կհավաքի իր զավակներին ու կվերականգնի իր հին ուխտերը։ Գրքի տիտղոսաթերթը հայտարարում էր, որ գիրքը նպատակ ունի ցույց տալ այն մեծ բաները, որոնք Աստված արել է Իր ժողովրդի համար անցյալում, նույն օրհնությունները առաջարկում է Իր ժողովրդին այսօր և համոզում ողջ աշխարհին, որ Հիսուս Քրիստոսը աշխարհի Փրկիչն է։[15]

Գրքի վերջում ներառված էին «Երեք վկաների վկայություններ» և «Ութ վկաների վկայությունները», որոնք հայտնում էին աշխարհին, որ տեսել են թիթեղները և գիտեն, որ թարգմանությունը ճշմարիտ է:[16]

Չնայած այդ վկայություններին, Լյուսին գիտեր, որ կան մարդիկ, ովքեր մտածում են, որ դա գեղարվեստական գիրք է: Նրա հարևաններից շատերը հավատացած էին, որ Աստվածաշունչը բավարար սուրբ գրություն է իրենց համար, չգիտակցելով, որ Աստված ավելի շատ ազգերի է օրհնել իր խոսքով: Նա գիտեր նաև, որ ոմանք մերժում էին գրքի ուղերձը, որովհետև հավատացած էին, որ Աստված մի անգամ խոսել է աշխարհի հետ ու երկրորդ անգամ այլևս չի խոսելու:

Այլևայլ պատճառաբանումներով Պալմիրայի բնակչության մեծամասնությունը չէր գնում գիրքը:[17] Սակայն ոմանք ուսումնասիրում էին գիրքը, զգում էին նրա ուսմունքների զորությունը և ծնկի էին իջնում, որպեսզի հարցնեն Տիրոջը դրա ճշմարտացիության մասին: Լյուսին ինքը գիտեր, որ Մորմոնի գիրքը Աստծո խոսքն է և ցանկանում էր կիսվել ուրիշների հետ:[18]

1830թ. ապրիլի 6-ին Ջոզեֆն ու Օլիվերը հանդիպեցին Ուիթմերների տանը, որպեսզի հետևեն Տիրոջ պատվիրանին և կազմավորեն Նրա Եկեղեցին:

Գրեթե անմիջապես Մորմոնի Գրքի հրատարակումից հետո Ջոզեֆը և Օլիվերը նախապատրաստվեցին կազմավորել Հիսուս Քրիստոսի եկեղեցին: Ամիսներ առաջ Տիրոջ հնագույն առաքյալները՝ Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը, հայտնվել էին ու նրանց շնորհել էին Մելքիսեդեկյան քահանայությունը, ինչպես որ խոստացել էր Հովհաննես Մկրտիչը: Այդ հավելյալ իշխանությունը Ջոզեֆին և Օլիվերին թույլ էր տալիս մկրտվող մարդկանց շնորհել Սուրբ Հոգու պարգևը: Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը նաև կարգել էին նրանց Հիսուս Քրիստոսի առաքյալներ:[19]

Այդ ժամանակաշրջանում, Ուիթմերների տանը մնալիս, Ջոզեֆն ու Օլիվերը աղոթեցին, որպեսզի ավելի շատ գիտելիք ստանան այդ իշխանության վերաբերյալ: Ի պատասխան՝ Տիրոջ ձայնը նրանց պատվիրեց մեկմեկու կարգել որպես Եկեղեցու երեցներ, բայց միայն այն ժամանակ, երբ հավատացյալ մարդիկ համաձայնություն կտան հետևել նրանց՝ որպես Փրկիչի եկեղեցու առաջնորդներ: Նրանց հանձնարարվեց կարգել նաև եկեղեցու այլ պաշտոնյաներ և Սուրբ Հոգու պարգև շնորհել նրանց, ովքեր մկրտվել էին:[20]

1830թ. ապրիլի 6-ին Ջոզեֆն ու Օլիվերը հավաքվեցին Ուիթմերների տանը, որպեսզի հետևեն Տիրոջ պատվիրանին և կազմավորեն Տիրոջ եկեղեցին: Օրենքի պահանջները բավարարելու նպատակով նրանք ընտրեցին վեց անձանց, ովքեր դարձան նոր եկեղեցու առաջին անդամները: Մոտ քառասուն կանայք ու տղամարդիկ էին հավաքվել փոքր տան մեջ և շրջակայքում՝ իրադարձությանը ականատես լինելու համար:[21]

Հնազանդվելով նախկինում Տիրոջ տված հրահանգներին՝ Ջոզեֆն ու Օլիվերը հարցրին, թե արդյոք հավաքի անդամները աջակցում են իրենց՝ որպես Աստծո արքայության առաջնորդներ և արդյոք հավատում են, որ ճիշտ քայլ է իրենց կողմից՝ կազմավորվել որպես եկեղեցի: Հավաքի բոլոր անդամները համաձայնություն տվեցին, և Ջոզեֆը ձեռնադրեց Օլիվերին ու կարգեց նրան որպես եկեղեցու երեց: Այնուհետև, նրանք տեղերով փոխվեցին և Օլիվերը կարգեց Ջոզեֆին:

Դրանից հետո նրանք հաղորդության հաց ու գինի սպասավորեցին՝ ի հիշատակ Քրիստոսի Քավության: Այնուհետև նրանք ձեռնադրեցին նրանց, ովքեր մկրտվել էին և հաստատեցին նրանց որպես եկեղեցու անդամներ և Սուրբ Հոգու պարգև շնորհեցին նրանց:[22] Տիրոջ Հոգին հեղվեց հավաքվածների վրա և հավաքվածներից մի քանիսը սկսեցին մարգարեանալ: Մյուսները ևս փառավորում էին Տիրոջը, և բոլորը հրճվանք էին ապրում:

Ջոզեֆն էլ ստացավ առաջին հայտնությունը, որն ուղղված էր նոր եկեղեցու մարդկանց ամբողջ խմբին: «Ահա, մի հիշատակարան պիտի պահվի ձեր մեջ», պատվիրեց Տերը, հիշեցնելով Իր ժողովրդին, որ նրանք պետք է գրեն իրենց սրբազան պատմությունը, իրենց գործերի հիշատակարանը վարելով և վկայելով Ջոզեֆի դերի մասին՝ որպես մարգարե, տեսանող և հայտնող:

«Նրան եմ ես ոգեշնչել՝ հզոր ուժով առաջ տանելու Սիոնի գործը բարիքի համար», հայտարարեց Տերը: «Նրա խոսքը դուք պետք է ընդունեք, ինչպես որ իմ իսկ բերանից, ողջ համբերությամբ ու հավատքով: Քանզի այդ բաները կատարելով, դժոխքի դռները չեն հաղթի ձեզ»:[23]

Ավելի ուշ, Ջոզեֆը կանգնեց զետակի մոտ ու վկա եղավ իր մոր և հոր մկրտությանը եկեղեցում: Տարիներ շարունակ ճշմարտության որոնման տարբեր ուղիներ անցնելուց հետո նրանք վերջապես միավորվեցին մեկ հավատքում: Երբ հայրը դուրս էր գալիս ջրից, Ջոզեֆը բռնեց նրա ձեռքը, օգնեց, որ ափ դուրս գա և գրկախառնվեց նրա հետ:

«Աստված իմ,- հեկեկաց նա, երեսը թաքցնելով հոր գրկում,- ես ապրեցի, որ տեսնեմ հորս՝ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ եկեղեցում մկրտվելիս»:[24]

Այդ երեկո, չկարողանալով զսպել սրտի զգացմունքները, Ջոզեֆը առանձնացավ մոտակա անտառում: Նա ուզում էր միայնակ լինել՝ ընկերների ու ընտանիքի աչքից հեռու: Առաջին տեսիլքից հետո անցած տասը տարիների ընթացքում նա տեսել էր, թե ինչպես էին բացվում երկինքները, զգացել էր Աստծո Հոգին և ուսուցանվել էր հրեշտակների կողմից: Նա անցել էր նաև մեղքի միջով, կորցրել էր իր պարգևը, որպեսզի ապաշխարի, ձեռք բերի Աստծո ողորմությունը և Նրա զորությամբ ու շնորհով թարգմանի Մորմոնի Գիրքը:

Այժմ Հիսուս Քրիստոսը վերականգնել էր Իր եկեղեցին և Ջոզեֆին վստահել էր այն նույն քահանայությունը, որ կրում էին հին առաքյալները, երբ տանում էին ավետարանը աշխարհին:[25] Երջանկությունը, որ նա զգում էր, չափազանց շատ էր, որ նա իր մեջ պահի, և երբ Ջոզեֆ Նայթն ու Օլիվերը այդ երեկո գտան նրան, նա բարձրաձայն լաց էր լինում:

Նրա լացը լիակատար երջանկության լաց էր: Աշխատանքը սկսվել էր:[26] ■

Գիրքն ամբողջությամբ մատչելի է անգլերեն լեզվով saints.lds.org-ում:

Թեմա բառը հղումներում ցույց է տալիս լրացուցիչ տեղեկություններ առցանց սրբեր.lds.org-ում:

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Copyright for Book of Mormon, June 11, 1829, in *JSP,* D1:76–81.
2. "Prospect of Peace with Utah," *Albany Evening Journal,* May 19, 1858, [2]; "From the Troy Times," *Albany Evening Journal,* May 21, 1858, [2]; John H. Gilbert, Memorandum, Sept. 8, 1892, photocopy, Church History Library.
3. Doctrine and Covenants 19 (Revelation, circa Summer 1829, at josephsmithpapers.org); see also Historical Introduction to Revelation, circa Summer 1829 [DC 19], in *JSP,* D1:85–89; and Knight, Reminiscences, 6–7.
4. McBride, "Contributions of Martin Harris," 1–9; Joseph Smith History, 1838–56, volume A-1, 34, in *JSP,* H1:352 (draft 2).
5. John H. Gilbert, Statement, Oct. 23, 1887, Church History Library; Indenture, Martin Harris to Egbert B. Grandin, Wayne County, NY, Aug. 25, 1829, Wayne County, NY, Mortgage Records, volume 3, 325–26, microfilm 479,556, U.S. and Canada Record Collection, Family History Library; Historical Introduction to Revelation, circa Summer 1829 [DC 19], in *JSP,* D1:85–89.
6. Copyright for Book of Mormon, June 11, 1829, in *JSP,* D1:76–81; John H. Gilbert, Memorandum, Sept. 8, 1892, photocopy, Church History Library; Porter, "The Book of Mormon," 53–54.
7. John H. Gilbert, Memorandum, Sept. 8, 1892, photocopy, Church History Library; Lucy Mack Smith, History, 1844–45, book 9, [8]; Joseph Smith to Oliver Cowdery, Oct. 22, 1829, in *JSP,* D1:94–97.
8. John H. Gilbert, Memorandum, Sept. 8, 1892, photocopy, Church History Library; Lucy Mack Smith, History, 1844–45, book 9, [2]; "Printer's Manuscript of the Book of Mormon," in *JSP,* R3, Part 1:xxvi. **Թեմա.** Մորմոնի Գրքի տպագրությունն ու հրատարակումը
9. Oliver Cowdery to Joseph Smith, Nov. 6, 1829, in *JSP,* D1:100–101; Mosiah 3:18–19; 5:5–7; 4 Nephi 1:17; see also Oliver Cowdery to Joseph Smith, Dec. 28, 1829, in *JSP,* D1:101–4.
10. Thomas B. Marsh, "History of Thomas Baldwin Marsh," *LDS Millennial Star,* June 4, 1864, 26:359–60; June 11, 1864, 26:375–76.
11. Lucy Mack Smith, History, 1844–45, book 9, [9]. For examples of excerpts from the Book of Mormon published by Abner Cole, see "The Book of Mormon," *Reflector,* Sept. 16, 1829, 10; "Selected Items," *Reflector,* Sept. 23, 1829, 14; "The First Book of Nephi," *Reflector,* Jan. 2, 1830, 1; and "The First Book of Nephi," *Reflector,* Jan. 13, 1830, 1. **Թեմա.** Մորմոնի Գրքի քննադատները
12. Lucy Mack Smith, History, 1844–45, book 9, [9]–[12]; Lucy Mack Smith, History, 1845, 166–68.
13. Chamberlin, Autobiography, 4–11.
14. Copyright for Book of Mormon, June 11, 1829, in *JSP,* D1:76–81; John H. Gilbert, Memorandum, Sept. 8, 1892, photocopy, Church History Library; "Book of Mormon," *Wayne Sentinel,* Mar. 26, 1830, [3]. Գրքերից մի քանիսի կազմը ոչխարի կաշի էր:
15. Title Page of Book of Mormon, circa early June 1829, in *JSP,* D1:63–65; see also Lucy Mack Smith to Solomon Mack, Jan. 6, 1831, Church History Library.
16. Testimony of Three Witnesses, Late June 1829, in *JSP,* D1:378–82; Testimony of Eight Witnesses, Late June 1829, in *JSP,* D1:385–87.
17. Tucker, *Origin, Rise, and Progress of Mormonism,* 60–61.
18. See Lucy Mack Smith to Solomon Mack, Jan. 6, 1831, Church History Library.
19. Joseph Smith History, circa Summer 1832, 1, in *JSP,* H1:10; Doctrine and Covenants 27:12–13 (Revelation, circa Aug. 1830, in Doctrine and Covenants 50:3, 1835 edition, at josephsmithpapers.org); Oliver Cowdery to Phineas Young, Mar. 23, 1846, Church History Library; "Joseph Smith Documents Dating through June 1831," in *JSP,* D1:xxxvii–xxxix; see also Cannon and others, "Priesthood Restoration Documents," 163–207. **Թեմա.** Մելքիսեդեկյան Քահանայության վերականգնումը
20. Joseph Smith History, 1838–56, volume A-1, 27, in *JSP,* H1:326–28 (draft 2).
21. Joseph Smith History, 1838–56, volume A-1, 37, in *JSP,* H1:364 (draft 2); Stevenson, Journal, Dec. 22, 1877; Jan. 2, 1887; An Act to Provide for the Incorporation of Religious Societies (Apr. 5, 1813), *Laws of the State of New-York* (1813), 2:212–19. **Թեմա.** Քրիստոսի Եկեղեցու հիմնադրման ժողովը
22. Joseph Smith History, 1838–56, volume A-1, 37–38, in *JSP,* H1:364–71 (draft 2).
23. Joseph Smith History, 1838–56, volume A-1, 37, in *JSP,* H1:366; Doctrine and Covenants 21 (Revelation, Apr. 6, 1830, at josephsmithpapers.org); "History of Joseph Smith," *Times and Seasons,* Oct. 1, 1842, 3:928–29.
24. Lucy Mack Smith, History, 1844–45, book 9, [12]; Knight, Reminiscences, 8; see also Bushman, *Rough Stone Rolling,* 110.
25. Joseph Smith History, 1838–56, volume A-1, 38, in *JSP,* H1:372 (draft 2); Joseph Smith, "Latter Day Saints," in Rupp, *He Pasa Ekklesia,* 404–5, in *JSP,* H1:506.
26. Knight, Reminiscences, 7.

Երեց
Քվենթին Լ. Քուք
Տասներկու
Առաքյալների
Քվորումից

Որքան ողորմած է եղել Տերը

Եկեղեցու պատմության նոր բազմահատորանոց ժողովածուն կօգնի մեզ պահել մեր պատվիրանները՝ մեծացնելով մեր հիշողությունն այն մասին, թե ինչ է Տերն արել մեզ համար:

Հարյուր տարվա մեջ առաջին անգամ հրատարակվում է Եկեղեցու պատմության նոր բազմահատորանոց ժողովածուն՝ Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի ղեկավարության ներքո: *Սրբեր. Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Եկեղեցու պատմությունը* վերնագրով այս պատմությունը նկարագրում է մեզ սովորական մարդկանց իրական պատմությունը, ովքեր Սրբեր են դարձել Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով (տես Մոսիա 3.19): Առաջին հատորը՝ *«Ճշմարտության դրոշը», 1815–1846թթ.*, արդեն ավարտված և թարգմանված է 14 լեզուներով՝ աշխարհի տարբեր տարածքներում բաժանելու համար:

Սրբերը պատմություն է այն մասին, թե Աստված ինչպես վերականգնեց Իր հավիտենական ուխտը Իր զավակների հանդեպ ունեցած Իր սիրո շնորհիվ: Այն ցույց է տալիս, թե Տերն ինչպես վերականգնեց Իր ավետարանը, որպեսզի հույս ու խաղաղություն ապահովի խառնաշփոթի, փորձության և տառապանքի ժամանակներում: Այն նաև ցույց է տալիս, թե վերականգնված ուխտերն ինչպես են հանգեցնում վեհացմանը՝ Հիսուս Քրիստոսի միջոցով:

Գուցե դուք կակնկալեք, որ պատմությունը սկսվի Ջոզեֆ Սմիթով, բայց *Սրբերը* սկսվում է 1815թ.-ին Ինդոնեզիայում հրաբխի ժայթքումով, որը սփռեց համատարած մահ, հիվանդություններ և պառակտում: Այս սկզբնակետը ընտրված էր Տիրոջ հայտնության լույսի ներքո այն նպատակով, որ պարզ դառնար, թե Նա ինչպես վերականգնեց ուխտերը, որոնք մեզ կապում են Փրկիչի հետ և իրավունք տալիս հաղթահարել կյանքի բոլոր խնդիրները.

SANTOS
1815–1846
EL
ESTANDARTE
DE LA VERDAD

Իր մարգարեի միջոցով Աստված նորոգեց ուխտերը, որոնք չեն հեռացնում չարությունը, վիշտը, տառապանքը և բաժանումը մահվան ժամանակ, բայց անպայման խոստանում են բժշկել Փրկիչի Քավության միջոցով, հավաստիացնելով մեզ, որ հարաբերությունները կարող են շարունակվել հավերժության մեջ:

«Ուստի, ես՝ Տերս, իմանալով այն աղետի մասին, որը պիտի գա երկրի բնակիչների վրա, կանչեցի իմ ծառա Ջոզեֆ Սմիթ կրտսերին, և երկնքից խոսեցի նրա հետ, և նրան պատվիրաններ տվեցի. . . .

Որ իմ հավիտենական ուխտը հաստատվի» (ՎևՈւ 1.17, 22):

Առաջին օրվանից մինչև աշխարհով մեկ տարածվելը, *Սրբերը* ամենուր ազդարարում է Աստծո բոլոր զավակներին, որ դա նրանց ուխտի պատմությունն է Աստծո հետ, ով գիտե նրանց դժվարությունները: Իր մարգարեի միջոցով Աստված նորոգեց ուխտերը, որոնք չեն հեռացնում չարությունը, վիշտը, տառապանքը և բաժանումը մահվան ժամանակ, բայց խոստանում են բժշկել Փրկիչի Քավության միջոցով, մաքրագործել և օժտել մեր կյանքը մեծագուն իմաստով, և վստահեցնել, որ հարաբերությունները, որոնք մենք փայփայում ենք այստեղ՝ երկրի վրա, կարող են շարունակվել հավերժության մեջ և «կզուգակցվեն հավերժական փառքով» (տես ՎևՈւ 130.2):

Ճշմարտության դրոշը բաժնի առաջին ութ գլուխները ամբողջ տարվա ընթացքում հրապարակվել են այս ամսագրում: Այս ամսվա թողարկումը եզրափակում է *Սրբեր* ժողովածուի շարքը, բայց պատմությունը շարունակվում է **saints.lds.org** Gospel Library հավելվածում, և տպագիր տարբերակով (պատվիրել՝ **store.lds.org**): Ես հրավիրում եմ ձեզ շարունակել կարդալ այն՝ օգտագործելով այս աղբյուրներից որևէ մեկը:

Աստվածային օրինակը և ծրագիրը

Սրբերը շարունակում է աստվածային օրինակը, որում մարգարեները, որպես իրենց սպասավորության մաս, օգտագործում են անցյալը, օգնելով մեզ իմանալ, թե ով ենք մենք, և տեսնել Աստծո նպատակները մեր կյանքում: Սուրբ գրություններում շատ մարգարեներ իրենց ուսուցումը սկսում են՝ պատմելով իրենց նախահայրերի հանդեպ Տիրոջ ողորմածության մասին պատմությունները:[1] Մորոնին հորդորում է Մորմոնի Գրքի ընթերցողներին՝ «Հիշեք, թե որքան ողորմած է

եղել Տերը» պատմության ընթացքում և «կխորհեք այն ձեր սրտերում» (Մորոնի 10.3)։ Արձագանքելով Տիրոջ բարությանը, մենք պատրաստվում ենք ստանալ Հոգու վկայությունը, որն ուսուցանում է մեզ «բաների մասին, ինչպես դրանք իրականում կան, բաների մասին, ինչպես դրանք իրականում լինելու են» (Հակոբ 4.13, տես նաև Մորոնի 10.4–5)։

Մեր Երկնային Ծնողները ծրագրել են մեր վերջնական երջանկությունն ու վեհացումը. այս գիտելիքը մեզ ապահովում է հեռանկար, տալիս է մեզ ինքնության գիտակցում՝ որպես աստվածային ծնողների սիրելի զավակներ, մեծացնում է մեր վստահությունը Տիրոջ հանդեպ նույնիսկ՝ փորձության ժամին։ Հիշելով Տիրոջ բարությունը, կարող ենք նաև պահպանել մեզ հպարտությունից և բարգավաճման վտանգներից։ Մորմոնը գրել է այն ժամանակի մասին, երբ նեփիացիները «դարձան չափազանց հարուստ»։ Բայց, ի տարբերություն Մորմոնի Գրքի այլ ժամանակաշրջանների, երբ մարդիկ թույլ էին տալիս, որ հպարտությունն ու հարստությունները կործանեին իրենց, այս անգամ նրանք գնում էին ուրիշ ճանապարհով. «Բայց, չնայած իրենց հարստություններին, կամ իրենց ուժին, կամ իրենց բարգավաճմանը, նրանք բարձր չէին իրենց աչքում՝ հպարտությունից. ոչ էլ դանդաղ էին Տիրոջը՝ իրենց Աստծուն հիշելիս. այլ նրանք անչափ խոնարհեցնում էին իրենց՝ նրա առաջ»։ Նրանք պահում էին իրենց ուխտերը և մնում արդարակյաց, քանի որ «Այո, նրանք հիշում էին, թե ինչպիսի մեծ բաներ էր Տերն արել իրենց համար» (տես Ալմա 62.48–50)։

Սրբեր պատմությունն ուսուցանում է նմանատիպ և շատ այլ դասեր։ Այն կօգնի ձեզ տեսնել Տիրոջ ձեռքը ձեր կյանքում, երբ դուք կունենաք հավատքի փորձություններ, խորը վիշտ և ուրախություն, հայտնություններ, կտեսնեք անկատար մարդկանց վճռականությունը, ովքեր սիրում էին Տիրոջը և զգում Նրա սերը։

Ընթերցելիս, դուք նոր գաղափարներ և իմաստ կհայտնաբերեք նույնիսկ այն պատմություններում, որոնք դուք արդեն լսել եք նախկինում։ Եկեղեցու պատմության մեջ որևէ տեսարան ավելի հայտնի չէ, քան Ջոզեֆ Սմիթի Առաջին Տեսիլքը, բայց *Սրբեր* պատմությունն օգնում է մեզ հասկանալ, թե Ջոզեֆ Սմիթն ինչպես էր պայքարում, որպեսզի համաձայնեցնի այն, ինչը զգում էր իր սիրտը, նրա հետ, ինչի մասին խորհում էր միտքը։

Տիրոջ ներումը զգալու Ջոզեֆի անկեղծ ցանկությունը մնացել էր անկատար, քանի որ նա զգացել էր, որ գոյություն ունեցող եկեղեցիներից որևէ մեկը չէր ուսուցանում «Հիսուս Քրիստոսի ավետարանը, ինչպես գրանցված է Նոր Կտակարանում»։[2] Ջոզեֆը խորհում էր այն մասին, թե ո՞ր եկեղեցին էր ճիշտ կամ արդյո՞ք դրանք բոլորը սխալ էին։ Հուսահատ սրտով նա հույս էր տածում, որ դրանցից մեկը ճիշտ էր, ուստի նա կարող էր գտնել այն խաղաղությունը, որը հուսահատորեն փնտրում էր։ Մտքի ու սրտի միջև ունեցած հակասությամբ հանդերձ, Ջոզեֆը հայտնաբերեց, որ կարող էր խնդրել Աստծուց։ Ջոզեֆը գնաց անտառ աղոթելու։ Այնտեղ նա տեսավ Հորը և Որդուն, ովքեր ներեցին նրան և լուծեցին նրա երկընտրանքը այնպիսի եղանակով, որը նա երբևէ չէր պատկերացրել։[3]

Ջոզեֆը, նրա ընտանիքը և ուրիշ շատ մարդիկ, ովքեր ընդունել էին Տիրոջ վերականգնված ուխտը, ցանկանում էին զգալ Աստծո սերն իրենց հանդեպ, սովորել, թե

Սրբեր պատմությունը ցույց է տալիս, որ իմանալով Տիրոջ գործերը, մենք ձեռք ենք բերում հավերժության հեռանկար, տեսնում ենք բաները ինչպես դրանք իրականում կան և լինելու են, և օգնում է մեզ հավատ ունենալ, որ Տերը մեզ հետ կլինի դժվարին ժամանակներում:

իրենք ինչպես կարող են մոտենալ Նրան և նորոգել հարաբերությունները իրենց սիրելիների հետ: *Սրբերը* պատմում են իրենց պատմությունները:

Վստահել Տիրոջը փորձության ժամին

Սրբերի առաջին հատորը ընդգրկում է Ամանդա Բարնես Սմիթի և նրա ընտանիքի սրտաճմլիկ պատմությունը, ովքեր հնազանդվում էին Տիրոջ պատվիրաններին և կատարում Նրա կամքը:[4] Ամանդայի ամուսինը և որդիներից մեկը դաժանաբար սպանվեցին Վերջին Օրերի 15 այլ Սրբերի հետ, ովքեր ճամբար էին դրել Միսսուրիի Շոալ Քրիք փոքր բնակավայրում: Տերը սատար կանգնեց Ամանդային սարսափելի փորձության ժամին, պատասխանեց նրա աղոթքներին, քաջություն և հնարավորություն տվեց նրան բժշկելու իր վիրավոր որդուն:[5]

Սրբեր պատմությունը ցույց է տալիս, թե Ամանդան ինչպես սովորեց վստահել Տիրոջը ծայրահեղ ձախորդության ժամին: Այն նաև պատմում է, թե Ջոզեֆ Սմիթն ինչպես իմացավ Աստծո բարության մասին տառապանքի ժամին: Այն ցույց է տալիս, որ Աստծո գործերի մասին իմանալով, մենք ձեռք ենք բերում հավերժության հեռանկար, տեսնում ենք իրերն այնպիսին, ինչպիսին դրանք կան և կլինեն, և օգնում է մեզ հավատք գործադրել առ այն, որ Տերը կուղեկցի մեզ դժվարին ժամանակներում:

Երբ Մարգարե Ջոզեֆը իմացավ, թե ինչ էր պատահել Ամանդայի ընտանիքի և մյուսների հետ Շոալ Քրիքում, նա զգաց, որ ավելի լավ է ինքը բանտարկվի կամ սպանվի, քան թույլ տա, որ Սրբերին կոտորածի ենթարկվեն: Հաջորդ օրը նա փորձ արեց բանակցել՝ խաղաղ լուծում գտնելու Միսսուրիի աշխարհազորի հետ, որը դիրքավորվել էր Ֆար Ուեստում Սրբերի հիմնական բնակավայրի վրա հարձակվելու համար: Փոխարենը Ջոզեֆին բռնեցին և բանտ նետեցին:

Մոտ հինգ ամիս անց Ջոզեֆը դեռ բանտարկված էր Միսսուրիի Լիբերթի բանտի մի ցուրտ, նեղ նկուղային բանտախցում: Նա ցանկանում էր իմանալ, թե որտեղ էր թաքնվում Աստված և որքան ժամանակ Նա դեռ կարող էր լսել այրիների ու որբերի լացը: Նա աղոթում էր. «Ո՜վ Տեր, որքա՞ն պիտի նրանք կրեն այս անարդարություններն ու անօրինական ճնշումները, մինչև

սիրտդ փափկի նրանց հանդեպ և աղիքներդ կարեկցանքից գալարվեն նրանց հանդեպ» (ՎևՈւ 121.3)։

Սրբերը ուսուցանում է մեզ, որ ձախորդությունները Աստծո դատապարտման վկայությունը չեն, ոչ էլ Նրա օրհնությունների հեռացման։ Հակադրությունը Աստծո ծրագրի մասն է, որ մաքրի և պատրաստի մեզ հավերժական, սելեստիալ ճակատագրին (տես 2 Նեփի 2.11)։ Ջոզեֆն իմացավ, որ Փրկիչի անսահման տառապանքը Նրան հնարավորություն է տալիս աջակցել մեզ, երբ մենք տառապում ենք, և, ի վերջո, վեհացնել մեզ (տես Ալմա 7.11–13)։ Ի պատասխան Ջոզեֆի վշտալից բողոքին, Տերը թվարկեց բոլոր տեսակի դժվարությունները, նախքան կեզրափակեր.

«Եթե դժոխքի ծնոտները լայն բացեն երախը, որպեսզի քեզ կուլ տան, իմացիր, որդի՛ս, որ այս բոլոր բաները փորձառություն կտան քեզ և կլինեն քո օգտի համար։

Մարդու Որդին իջել է այդ ամենից ցած։ Մի՞թե դու ավելի մեծ ես, քան նա» (ՎևՈւ 122.7–8)»։

Ինքներս զգալով *այս բաները,* կարող ենք օժտվել Քրիստոսանման կարեկցանքով չարչարվածների հանդեպ։ «Իմ սիրտը միշտ ավելի զգայուն կլինի այս ամենի հանդեպ, քան երբևէ եղել է նախկինում»,- գիտակցեց Ջոզեֆը բանտում։ Նա ցանկանում էր լինել Սրբերի հետ, որպեսզի կարողանար սփոփել ու մխիթարել նրանց։ «Երբևէ այնպես չեմ զգացել, ինչպես հիմա եմ զգում,- բացատրել է նա,- եթե ես չզգայի այն տառապանքները, որ զգացել եմ»։[6]

Պատճառներից մեկը, որի համար Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը հանձնարարել ու հաստատել են *Սրբերի* թողարկումը, այն է, որ կարող է օգնել մեզանից յուրաքանչյուրին զգալ *այս բաները* ուրիշների պատմությունների միջոցով։ Ամանդայից մենք կարող ենք սովորել, որ նույնիսկ, երբ Աստված Իր անսահման իմաստությամբ տեղին է համարում չկանխել չարը կամ տառապանքը, Նա սիրում է մեզ և հոգում է մեր մասին։ Նա լսում է մեր աղոթքները և ողորմած ու բարի է։

Տաճարի վերականգված օրհնությունները

Որևէ այլ տեղ մեր հանդեպ այդ ողորմածությունն ու բարությունը այնպես չի ցուցադրվում, որքան տաճարում։ Իր հիմքում *Սրբերը* ներկայացնում են տաճարային վերականգնված օրհնությունների պատմությունը։ Առաջին հատորը ավարտվում է, երբ հազարավոր Վերջին Օրերի Սրբեր ստանում են սրբազան արարողությունները Նավուի Տաճարում 1846թ.-ին։ Երկրորդ հատորը կավարտվի Սոլթ Լեյքի Տաճարի նվիրագործումով, երբ Սրբերը սկսում են ստանալ արարողություններն այնտեղ 1893թ.-ին։ Երրորդ հատորը կեզրափակվի Եվրոպայի Սրբերով, ովքեր սկսում են հավաքվել Շվեյցարիայի տաճարում 1955թ.-ին։ Չորրորդ հատորի պատմությունները հասնում են մինչև մեր օրերը, երբ տաճարները ծածկում են երկրագունդը, և Սրբերը ամբողջ աշխարհում ստանում են վեհացման արարողությունները, ինչպես մարգարեները կանխատեսել են վաղուց։

Տիրոջ տանը մենք ուխտեր ենք կապում և օժտվում ենք Անկման հետևանքները, չարն ու տառապանքը այս աշխարհում հաղթահարելու զորությամբ։ Մենք ստանում ենք պաշտպանություն և, ի վերջո, զորություն, որպեսզի հարություն առնենք Հարության ժամանակ՝ մեր սիրելիների հետ կնքված։

Սրբերը պատմությունը օգնի մեզ պահել մեր ուխտերը՝ խորացնելով մեր հիշողությունները սրբազան եղանակներով։ Այն կօգնի մեզ միշտ հիշել, թե Փրկիչն ինչ է արել մեզ համար։ Առանց անցյալում Աստծո գործերի մասին գրանցումների, մենք չենք կարող հիշել, թե «որքան ողորմած է եղել Տերը մարդկանց զավակների հանդեպ» (Մորոնի 10.3)։ Այս պատճառներով մենք պարտական ենք Տիրոջը և Սրբերին, ովքեր գրանցել են իրենց հանդեպ Նրա սիրո մասին փորձառությունները։ Տերը պատվիրեց Ջոզեֆ Սմիթին գրանցել իր փորձառությունները (տես ՎևՈւ 21.1)։ Նա պատվիրեց Եկեղեցու պատմաբանին, ով աշխատում էր Ջոզեֆի ղեկավարությամբ, «շարունակ վարել եկեղեցական գրանցումներն ու պատմագրությունը» (ՎևՈւ 47.3)։ Նա պատվիրեց, որ այդ պատմությունը ներառի «բոլոր բաները եկեղեցու բարիքի համար, և աճող սերունդների համար» (ՎևՈւ 69.8)։

Այս հայտնություններով և միշտ Փրկիչին հիշելու ուխտի խոստումը մտքում, Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը սկսեցին ծրագրել *Սրբերը* հավաքածուն 10 տարի առաջ։ Հիմա մենք խրախուսում ենք ձեզ կարդալ այն, վստահ լինելով, որ այն կօգնի ձեզ հասկանալ Աստծո ծրագիրը, տեսնելով, թե որքան ողորմած է եղել Տերը, հավատարմորեն տոկալով լավ և վատ ժամանակներում, ձեռք բերելով կարեկցանք ուրիշների հանդեպ և պահելով ուխտերը, որոնք տանում են մեզ դեպի վեհացում։ ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Օրինակները ներառում են Նեփի (1 Նեփի 17.23–43), Թագավոր Բենիամին (Մոսիա 1), Լիմքի (Մոսիա 7), Տիրոջ հրեշտակը Ալմային (Մոսիա 27), Ալմա (Ալմա 9.10), Մորմոն (Մորմոն 3.17–22), և Մովսես(Ելից 13.3)։
2. Joseph Smith, in “History, circa Summer 1832,” 2, josephsmithpapers.org.
3. Տես “History, 1838–1856, volume A-1 [23 December 1805–30 August 1834],” 3, josephsmithpapers.org:
4. Տես “Revelation, 12 January 1838–C,” [1], josephsmithpapers.org:
5. Տես *Սրբեր,* հատոր 1, գլուխ 30, «Կռվել՝ ինչպես հրեշտակներ»։
6. “Letter to Presendia Huntington Buell, 15 March 1839,” [1], josephsmithpapers.org.

ՁՎԵՐ, ԱՊԱՀՈՎԻՉ ԵՎ ՀԱՎԱՏՔ

Երբ փոքրիկ մետաղական մատիտի սրիչը ընկավ սիգարետի վառիչի տուփի մեջ, մեր ավտոմեքենան հանկարծակի կանգ առավ: Ապահովիչը պայթել էր:

Մեր ընտանիքի նպատակներից մեկն է՝ բավականաչափ գումար խնայել մեր ընտանիքի տաճարի կանխավճարը կատարելու համար: Առանց այդ նպատակի, ես կարող էի անցկացնել իմ հանգստյան օրերը հեռուստացույց դիտելով, սպասելով, որ ֆինանսական հնարավորություններ հայտնվեն ինձ համար:

Չիլիի հյուսիսում գտնվող հանքարդյունաբերության ընկերությունում ես աշխատում էի որպես վարորդ, չորս օր գտնվելով տնից հեռու, իսկ հետո երեք օր՝ շաբաթ օրվանից մինչև երկուշաբթի, հանգստանում էի: Տան համար մեր խնայողություններն ու եկամուտները ավելացնելու համար, մենք որոշեցինք ձու վաճառել: Մեր ծրագիրն էր՝ պատվերներ վերցնել ընկերներից և Եկեղեցու անդամներից, ամեն շաբաթ գնել մոտ 1000 ձու մեծածախ առևտրականից, իսկ հետո առաքել ձվերը շաբաթ օրվանից մինչև երկուշաբթի:

Ես և իմ կինը՝ Լորան, որոշեցինք մեր երկու երեխաներին տանել մեզ հետ առաքումների և միասին անցկացնել ժամանակը: Սակայն, երբ գնում էինք վերցնելու ձվերի առաջին խմբաքանակը, ձախորդություն տեղի ունեցավ: Մեր երեխաներից մեկը, խաղալով մատիտի փոքրիկ մետաղական սրիչով, նետեց սրիչը և այն ուղիղ ընկավ սիգարետի վառիչի տուփի մեջ: Կայծեր թռան և մեր ավտոմեքենան հոսանքազրկվեց, և անսպասելի կանգ առավ մայրուղու մեջտեղում: Ապահովիչը պայթել էր:

Երբ մենք նստել էինք այնտեղ, խցանելով երթևեկությունը, և մտածում էինք՝ ինչ անել, այնքան հուսահատ էինք, որ ուզում էինք լաց լինել: Բայց այդ պահին ես հիշեցի, որ Տերը խոստացել է բարձրացնել մեզ և օգնել մեզ, եթե մենք վստահում ենք Նրան: Մի հանգստություն իջավ վրաս: Ես հասկացա, որ չէի կարող պարզապես նստել այնտեղ և բողոքել: Մենք խնդիր ունեինք և Աստծո օգնությամբ մենք կլուծեինք այն:

Ես և Լորան դիմեցինք միմյանց և ասացինք. «Մենք պետք է հավատ ցույց տանք»: Մենք աղոթեցինք և չորացրինք մեր արցունքները: Հետո Լորան նստեց ավտոմեքենայի ղեկին, իսկ ես դուրս եկա հրելու մեքենան: Մի քանի հոգի դուրս եկան իրենց ավտոմեքենաներից և օգնեցին ինձ:

Մենք հրեցինք ավտոմեքենան 200 մետր, մինչև հասանք մայրուղուց հեռու մի ապահով վայր՝ մեքենան կայանելու համար: Երբ մենքենան հրում էինք կանգնեցնելու համար, ես նկատեցի, որ կայանել ենք մեքենաների ռադիոխանութի մոտ:

Ես գտա այրված ապահովիչի տեղը, մտա խանութ և հարցրի. «Դուք ունե՞ք սրանցից»:

Վաճառողը պատասխանեց. «Իհարկե»:

Ես գնեցի ապահովիչը, դրեցի իր տեղը և մեքենան անմիջապես շարժվեց, և մենք շարունակեցինք ճանապարհը: Երբ տեղ հասանք, ձվի մեծածախ առևտրականը արդեն փակում էր խանութը: Մենք գնեցինք ձվերը և կատարեցինք առաքումները:

Երբ մենք դժվարություններ ենք ունենում, պետք է հիշենք, որ կարող ենք օգնություն խնդրել մեր Երկնային Հորից: Ես գիտեմ, որ Նա կպատասխանի մեզ, երբ մենք առաջ շարժվենք և ցույց տանք մեր հավատը Նրա հանդեպ: ■

Ալվարո Ալկինո,
Անտոֆագաստա, Չիլի

ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄԸ՝ ՔԱՐՈԼԻՆ ՎԻԲԵՐԹ

ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ԻՄ ՄԱՅՐԻԿԻ ՁԵՌԱԳՐՈՒՄ

Մի երեկո ես խորհում էի, թե ինչ ուղերձ հղեմ ծխի գալիք համաժողովին: Ես ամբողջ շաբաթ ուսումնասիրում էի սուրբ գրությունները, և չնայած, ստացել էի հրաշալի հրահանգներ և գաղափարներ, այնուամենայնիվ, հստակ հրահանգ չստացա, թե Տերն ինչ էր ուզում, որ ես, որպես ցցի նախագահ, խոսեմ իմ ծխի անդամների հետ:

Սրտառուչ աղոթքով ես Հոգուց առաջնորդություն խնդրեցի իմ մտքերը ուղղորդելու համար: Հետո ես բացեցի սուրբ գրությունները և սկսեցի կրկին կարդալ: Իմ միտքն անմիջապես անդրադարձավ ծխի նպատակներին, որոնք ես ու եպիսկոպոսը վերջերս քննարկել էինք: Այդ նպատակներից մեկն էր՝ օգտագործել *«Քարոզիր իմ ավետարանը»* ընկերների և հարևանների հետ կիսվելիս:

Ես հուշում ստացա ներառել *«Քարոզիր իմ ավետարանը»* իմ սեփական ուսումնասիրության մեջ այդ երեկո: Ես վերցրի գիրքը և բացեցի այն պատահական մի էջի վրա: Այդ էջի վրա ես գտա ձեռագրով գրված սուրբ գրության երկու հղում՝ 1 Նեփի 8.8–11 և 1 Նեփի 11.21–22: Երբ ուշադիր նայեցի, հասկացա, որ այդ հղումները գրված էին մորս ձեռագրով: Իմ սիրելի մայրիկը մահացել էր մի քանի տարի առաջ, իր 80-րդ տարեդարձից երկու ամիս անց: Նա քաջության և անեսասիրության օրինակ էր, ով մարդկանց մեջ միշտ լավն էր տեսնում: Եվ նա սիրում էր սուրբ գրությունները:

Ես բացեցի սուրբ գրությունների այդ հատվածները, որպեսզի տեսնեմ, թե ինչը հուշեց նրան գրի առնել դրանք: Երբ ես կարդացի դրանք, իմ միտքն անմիջապես բացվեց այն ուղերձի համար, որը ես պետք է հաղորդեի: Դա մի պարզ ուղերձ էր այն մասին, որ Եկեղեցու այն անդամները, ովքեր ճաշակել են ավետարանի քաղցր պտուղը, կարող են երբեմն մոռանալ, որ ուրիշ շատ մարդիկ ևս փնտրում են նույն պտուղը: Մենք պետք է գտնենք և ասենք նրանց, թե որտեղ գտնեն այն:

Երբ թերթում էի *«Քարոզիր իմ ավետարանը»*, ես մտածում էի իմ սիրելի մայրիկի մասին: Չկար ուրիշ անուն, այլ նշումներ կամ մի ուրիշ բան, որը ցույց կտար, որ գիրքը երբևէ պատկանել էր նրան: Ես ակնածանքով նստած մտածում էի հոգևոր հուշումների այն շղթայի մասին, որը բերեց ինձ դեպի այդ պահը: Հոգին ինձ հաստատեց, որ իմ մտքերը ուղղորդվեցին ճիշտ այն ուղղությամբ, ինչի համար ես աղոթել էի: Շատ տարիներ առաջ այդ հղումները գրելիս, իմ մայրը քիչ բան գիտեր այն մասին, որ Տերը կօգտագործի դրանք՝ որպես պատասխան իր որդու խոնարհ աղոթքին: ■

Դուգլաս Հեգեր, Նեվադա, ԱՄՆ

Ծխի համաժողովին պատրաստվելիս, ես բացեցի *Քարոզիր Իմ Ավետարանը* գրքի այն էջը, որտեղ գտա մայրիկիս ձեռագրով գրված սուրբ գրային հղումները:

ՀՐԱՇՔ ՏԻՐՈՋ ՏԱՆԸ ԿԻԵՎՈՒՄ

Ես և իմ ընտանիքը ոգևորված էինք, երբ 2010թ. օգոստոսին ավտոմեքենայով պետք է ճամփորդեինք Ռումինիայից Կիև (Ուկրաինա) տաճարի նվիրագործման համար: Իմանալով, որ սա պետք է լինի տաճար Ռումինիա/Մոլդովա Միսիայի Սրբերի համար, մենք ճամփորդեցին 14 ժամ այնտեղ հասնելու համար: Երբ մենք ժամանեցինք, հանդիպեցինք մեկ այլ խմբի, որը նույնպես եկել էր Ռումինիայից: Մենք բոլորս ուրախ էինք լինել Կիևում այդ սրբազան արարողության համար:

Նվիրագործման օրը Ռումինիայից եկած մեր խմբին հանձնարարվեց դիտել նվիրագործման հեռարձակումը տաճարի առաջին հարկում գտնվող սենյակում: Ոմանք սկսեցին արտահայտել իրենց հիասթափությունը: Նրանք հուսով էին սելեստիալ սենյակում մարգարեի հետ մասնակցել նվիրագործմանը: Ոմանք նույնիսկ ասացին, որ կարող էին ուղղակի նստել տանը և դիտել հեռարձակումը Ռումինիայի իրենց ժողովատանը:

Ես սկսեցի սրտում աղոթել. «Երկնային Հայր, մենք ինչպե՞ս կարող ենք օգնել Ռումինիայի այս անդամներին ունենալ անմոռանալի փորձառություն Քո տանը»:

Երբ նվիրագործման նիստը սկսվեց, ես դեռևս պատասխան չէի ստացել: Շուտով մենք իմացանք, որ մարգարե, Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը (1927–2018) պատրաստվում էր գալ և անկյունաքարը դնել: Հավանաբար, սա կարող էր լինել մեր պատասխանը: Ես աղոթեցի, խնդրելով, որ մարգարեն գար և ողջուներ ռումինացի Սրբերին:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ: ԱԼԵՔՍ ԳԱՐՍԻԱ

«Ես ինձ համար չեմ խնդրում,- աղոթեցի ես,- այլ իմ եղբայրների և քույրերի համար»:

Անկյունաքարի տեղադրման արարողությունից հետո Նախագահ Մոնսոնը անցավ մեր սենյակի կողքով՝ վերադառնալով սելեստիալ սենյակ: Հանկարծ ես իմ սրտում զգացի, որ պետք է կանգնեմ և հրավիրեմ նրան մեր սենյակ:

Ես կանգնեցի և ասացի. «Մեր մարգարե: Եկեք և տեսեք մեզ: Մենք Ռումինիայից ենք»:

Նա, կարծես, չլսեց ինձ: Հետո, մեկ րոպե անց նա վերադարձավ: «Ռումինիա»,- ասաց նա և մտավ սենյակ:

Նա ողջունեց մեզ բոլորիս և ասաց, որ մեզ շատ է սիրում: Իմ սիրտը լցվեց, երբ տեսա մեր թանկագին անդամների ուրախ դեմքերը: «Շնորհակալություն, թանկագին Հայր,- աղոթեցի ես,- այս հրաշքի համար, որը տեղի ունեցավ Քո տանը»:

Ես սկսեցի սրտում աղոթել. «Երկնային Հայր, մենք ինչպե՞ս կարող ենք օգնել Ռումինիայի այս անդամներին ունենալ անմոռանալի փորձառություն Քո տանը»:

Երբ մարգարեն հեռացավ սենյակից, ոչ ոք այլևս տխուր չէր: Ես զգում էի, որ մենք գտնվում ենք տաճարի ամենաօրհնված սենյակում: Դա մի փորձառություն էր, որը ես երբեք չեմ մոռանա: ■

Դորու Վասիլե, Բուխարեստ, Ռումինիա

ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԺՊԻՏ

Մի երեկո մեր ծուխը անցկացնում էր միջոցառում, որին մենք ժամերով պատրաստվել էինք: Միջոցառումից հետո երիտասարդ ունկնդիրը ցտեսություն ասաց ինձ, բայց մի քանի րոպե անց վերադարձավ և հարցրեց. «Եպիսկոպոս, ես ե՞րբ պիտի վերադառնամ»: Ես ասացի՝ կիրակի օրը, իսկ տղան արագ ասաց. «Ոչ, մի՞թե ուրիշ միջոցառում չկա»: Նա այնքան լավ ժամանակ էր անցկացրել մեր ծխի երիտասարդների հետ, որ ցանկանում էր վերադառնալ:

Ես նաև զրուցեցի այցելող զույգի հետ, ովքեր մասնակցել էին միջոցառմանը, և հարցրի նրանց կարծիքը: Ամուսինն ասաց. «Երբ եկանք այստեղ, զգացինք խաղաղություն և հանգստություն», ինչը գլխով հաստատեց նաև կինը: Ես զարմացա, քանի որ երբ նրանք սկզբում տեղ հասան, այնտեղ շատ մարդ կար և բոլորը աղմկում էին: Բայց նա շարունակեց, նայեց ինձ վրա և հարցրեց. «Դա Սուրբ Հոգին է, այնպես չէ՞»: Ես, զարմացած, միայն ասացի՝ այո:

Շատ գործ կար անելու այս միջոցառմանը պատրաստվելու համար, ուստի այդ երեկո, երբ ամեն բան ավարտվեց, միակ բանը, որ ես ցանկանում էի անել, տուն գնալն ու անկողին մտնելն էր: Իմ հոգնածության պատճառով ես չէի կարողացել մտածել ունկնդիրների հետ իմ զրույցների մասին: Երբ ես տուն հասա, աղոթեցի և անկողին մտա, բայց չկարողացա քնել. իմ մտքում ժպտացող Տիրոջ պատկերն էր: Դա հավանության ժպիտ էր: Այդ պահին ես սկսեցի հիշել այն հրաշալի բաները, որոնք տեղի ունեցան միջոցառման ժամանակ:

Ես հասկացա, որ ծխի անդամների ջանասիրությունն ու սերը հնարավոր դարձրին, որ հուզվեն այն երեք ունկնդիրների սրտերը: Ես հասկացա, որ հավանության ժպիտը այն ամենի համար էր, ինչ մենք անում էինք: Ես չկարողացա խուսափել արցունքներից, և շատ երախտապարտ էի այն պարգևի համար, որ Տերը տվեց մեզ: Նա մեզ հավանության ժպիտ պարգևեց: Ես վկայում եմ, որ Տիրոջ խոսքերը ճշմարիտ են. երբ մենք գեթ մի հոգի բերենք Նրա մոտ, մեծ կլինի մեր ուրախությունը Հոր արքայությունում (տես ՎևՈւ 18.15): ■

Ֆրանկլին Ռոմերո, Մանաբի, Էկվադոր

ԿԻՍՎԵՔ ՁԵՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՈՎ

Վերջին Օրերի Սրբերի ձայները հրատարակում է ճշմարիտ պատմություններ ցանկացած ավետարանական թեմայով, բայց մեզ հատկապես հետաքրքրում են ուրիշներին սպասավորելու և ավետարանով ապրելու համար ձեր քաջության դրսևորման փորձառությունները: Ներկայացրեք ձեր հոդվածը առցանց **liahona.lds.org** կայքին (սեղմեք «Ներկայացնել հոդված կամ կարծիք»).

Ավետարանով ապրելու մեր շարժառիթը

Մայնդի Սելու
Եկեղեցու ամսագրեր

Միշտ էլ կլինեն «խիստ բաներ»: Բայց միշտ էլ տարբերակ կլինի ընտրել հավատքը՝ կասկածի և անորոշության փոխարեն:

Աշակերտության ճանապարհը լի է օրհնություններով՝ «տեսանելի և անտեսանելի»:[1] Բայց կան ժամանակներ, երբ այդ ճանապարհը հեշտ ու հարմար չէ, չնայած իր օրհնություններին: Հիսուս Քրիստոսի աշակերտ դառնալը պահանջում է աշխատանք և զոհաբերություն, իսկ երբեմն դժվար է շարժառիթ գտնել պատվիրաններով ապրելու և այդ զոհաբերությունները կատարելու համար:

Որպես չափահաս երիտասարդներ, դուք հավանաբար փորձում եք նաև համատեղել նոր պարտականությունները, կյանք փոխող որոշումներ կայացնել և կռահել, թե ինչպիսին կլինի աշակերտության ձեր սեփական ճանապարհը ձեր մնացած կյանքում: Բացի այս ամենը, Եկեղեցու քաղաքականության, պատմության և ավետարանի վարդապետության մեջ կարող են լինել բաներ, որոնք դուք լրիվ չեք հասկանում, և գայթակղություններ, որոնց դեմ մաքառում եք, ինչպես նաև բաներ, որոնց դուք դեռ սպասում եք, և հարցեր, որոնք վերաբերում են ձեր համար ունեցած Տիրոջ ծրագրին:

Մեզանից ոմանք երբեմն կարող են հետաքրքրվել՝ արդյոք ավետարանով ապրելն արժե այն օրհնությունները, որոնք մեզ խոստացվել են: Մենք կարող ենք վիճարկել, որ չենք համապատասխանում, որ աշխատանքը չափազանց շատ է, կամ որ հարցերը գերակշռում են պատասխաններին: Բայց այս ամենն իրականում հանգում է շարժառիթին: Ինչո՞ւ եք անում այն, ինչ անում եք, և ապրում այնպես, ինչպես ապրում եք: Ինչո՞ւ եք շարունակում պահել պատվիրանները, նույնիսկ, երբ շրջապատում ոչ ոք չի նկատում՝ պահում եք, թե՞ ոչ:

Մնկախ նրանից՝ ով եք դուք և կյանքի որ փուլում եք գտնվում, ձեզանից է կախված, թե ինչ շարժառիթ

կընտրեք՝ զարգացնելով ձեր հավատը Փրկիչի և Նրա ավետարանի հանդեպ:

Ո՞ւմ դիմենք:

Ավետարանով ապրելու շարժառիթը գտնելը և պահելը, դժվար թե, համարվի մեր ժամանակների միակ մարտահրավերը: Նույնիսկ, երբ Փրկիչը երկրի վրա էր, մարդիկ, այնուամենայնիվ, դժվարությամբ էին հասկանում ու հնազանդվում Նրա ուսուցանած սկզբունքներին: Նրա աշակերտներից մի քանիսը լսում էին, երբ Նա բացատրում էր Իր դերի՝ որպես «կյանքի հացի» գաղափարը, որը, թվում էր, վիրավորում էր նրանց (տես Հովհաննես 6.35–58): Ոմանք, թերահավատությամբ լսելով, ասացին. «Խիստ է այդ բանը, ո՞վ կարող է լսել դորան» (Հովհաննես 6.60):

Քրիստոսը, տեսնելով, որ նրանք դժվարությամբ են հավատում կամ ընդունում այս վարդապետությունը, հարցրեց. «Դա գայթակղեցնո՞ւմ է ձեզ» (Հովհաննես 6.61): Իրենց հավատը իրենց կասկածներից առաջ դնելու փոխարեն, Նրա «աշակերտներից շատերը ետ գնացին, եւ այլեւս ման չէին գալիս նորա հետ» (Հովհաննես 6.66):

Բայց երբ Քրիստոսը հարցրեց Իր մնացած աշակերտներին՝ արդյո՞ք նրանք նույնպես «ուզում են գնալ», Պետրոսը տվեց միակ պատասխանը, որն իրականում պետք է տրվեր. «Տէր, ո՞ւմ մօտ գնանք. յաւիտենական կեանքի խօսքեր ունիս դու» (Հովհաննես 6.67–68):

Մեր շարժառիթի աղբյուրը

Պետրոսը գիտեր իր շարժառիթի աղբյուրը: Դա հանգում էր այն հիմնական մտքին, թե մենք ինչու ենք անում այն, ինչ անում ենք ավետարանով, այն է՝ մեր վկայությունը և հավատը Հիսուս Քրիստոսի հանդեպ: «Եւ մենք հաւատացինք *եւ ճանաչեցինք,*- հայտարարեց Պետրոսը,- թէ դու ես Քրիստոսը՝ կենդանի Աստուծոյ Որդին» (Հովհաննես 6.69, շեշտադրումն ավելացված է): Ձեռք բերելով նույն ուժեղ համոզվածությունը Հիսուս Քրիստոսի, Նրա աստվածայնության, Նրա աշխատանքի մասին, մենք ևս կարող ենք շարժառիթ գտնել՝ շարունակելով ապրել ավետարանով, նույնիսկ, երբ դժվար է թվում, նույնիսկ, երբ ոչ ոք չի նկատում, նույնիսկ, երբ մենք համոզված չենք, որ ցանկանում ենք դա անել:

Միշտ էլ կլինեն «խիստ բաներ»: Բայց միշտ էլ տարբերակ կլինի ընտրել հավատքը՝ կասկածի և անորոշության փոխարեն: Ինչպես ասել է Երեց Լ. Վիթնի Քլեյթոնը Յոթանասունի Նախագահությունից. «Հավատալու որոշումը ամենակարևոր ընտրությունն է, որ մենք երբևէ կատարում ենք»:[2]

Այսպիսով, մենք ի՞նչ պիտի անենք, եթե հայտնվենք այդ «խիստ բաներից» մեկի հակառակ կողմում:

1. Հետևենք Պետրոսի և մյուս առաքյալների օրինակին, ովքեր հավատարիմ մնացին, նույնիսկ, երբ շատ հեշտ էր «գնալ» (հեռանալ): Լսենք մեր մարգարեների, առաքյալների և այլ ղեկավարների խորհուրդը.

«Վախի, կասկածի կամ դժբախտության պահերին, պահենք այն հիմքը, որը դուք արդեն նվաճել եք: . . . *Մնուր կառչենք նրանից, ինչ արդեն գիտեք և ամուր կանգնեք այնքան ժամանակ, մինչև լրացուցիչ գիտելիք կստանաք*»:[3]

«Մի հասարակ քայլ կատարեք դեպի հավատը, և ապա մեկ ուրիշը: . . . Կենտրոնացեք ճշմարտությունների վրա, որոնց [դուք հավատում եք], և թույլ տվեք, որ այդ ճշմարտությունները լցնեն [ձեր] միտքն ու սիրտը: . . .

. . . Սկսեք ավետարանի հիմնական ճշմարտություններից»:[4]

2. Ուսումնասիրեք սուրբ գրությունները և հետևեք դրանց ճշմարտություններին:

«Աղոթքով ուսումնասիրեք Մորմոնի Գիրքը և խորհեք դրա մասին ամեն օր»:[5]

«Եթե մեկը կամենում է նորա կամքն անել, նա կիմանա այս վարդապետութեան համար, թե արդեոք Աստվածանի՞ց է, կամ եթե ես իմ անձիցն եմ խոսում» (Հովհաննես 7.17):

«Բայց խօսքը անող եղէք, եւ ոչ միայն լսողներ» (Հակոբոս 1.22):

Շարունակեք պահել պատվիրանները:

«Մեր անկեղծ հարցերի պատասխանները գալիս են, երբ մենք համառորեն փնտրում ենք և ապրում ենք պատվիրաններով: . . . Մեր հավատքը կարող է անցնել մեր դատողության սահմաններից այն կողմ»:[6]

«Երբ շարունակեք հնազանդվել, . . . ձեզ կտրվի գիտելիքներն ու հասկացողությունը, որը դուք փնտրում եք»:[7]

Ի վերջո, մեր դրդապատճառը պարզապես բխում է Պետրոսի խոսքերից: Արդյո՞ք մենք հավատում ենք, որ Հիսուսը Քրիստոսն է, որ Նա է ղեկավարում Իր Եկեղեցին, և ունի հավերժական կյանքի խոսքերը: Արդյո՞ք մեր հավատը Նրա նկատմամբ գերազանցում է «խիստ բաներին», որոնք մենք գուցե չհասկանանք այս պահին:

Կենդանի ավետարանի պարգևները

Երբ մենք իրոք որոշում ենք սիրել ու հետևել Աստծուն և Հիսուս Քրիստոսին ու պահել պատվիրանները, նույնիսկ, երբ լիովին չենք հասկանում դրանք, պարգևներն անչափելի կլինեն: Բնական մարդը հարցնում է՝ «Ի՞նչ ունեմ ես դրանում»: Ավետարանի ուսմունքները պատասխանում են. «Խաղաղություն այս աշխարհում և հավերժական կյանք գալիք աշխարհում», վայր,

որը պատրաստված է ձեզ համար Աստծո ապարանքներում, ամենն, ինչ Աստված ունի, «երբեք չվերջացող երջանկություն» (տես ՎԿՈ 59.23, Եթեր 12.34, ՎԿՈ 84.38, Մոսիա 2.41), և ինչպես Երեց Դիտեր Ֆ. Ուխդորֆն է ասել. «Այստեղ [Եկեղեցում] դուք կգտնեք թանկարժեք օրհնություններ: . . . Ես վկայում եմ, որ այստեղ դուք կգտնեք հավերժական կյանքի խոսքերը, օրհնված փրկագնման խոստումը և խաղաղության ու երջանկության ճանապարհը»:[8] Թվարկենք մի քանիսը

Երբ հետևում ենք Քրիստոսին և հնազանդվում Նրա պատվիրաններին, մեզ խոստանում են այս բոլոր բաները և ավելին: Դա չի նշանակում, որ ճանապարհը միշտ կլինի հեշտ ու հասկանալի, բայց ուժեղ մնալու արդյունքում մեզ խոստացված օրհնությունները կշարունակեն հայտնի դառնալ մեր կյանքի ընթացքում և նույնիսկ՝ դրանից հետո:

Սակայն որքան էլ որ անհավատալի լինեն այս օրհնությունները, դրանք չպիտի դառնան մեր գլխավոր շարժառաքիթը ավետարանով ապրելու համար: Նշանակություն չունի՝ ինչ հարցեր ունեք դուք, կարևոր չէ, թե որ վարդապետությունը դուք չեք հասկանում, ձեր հավատը Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության հանդեպ կլինի հիմնական դրդապատճառը Նրա ավետարանով ապրելու համար, ինչպես Պետրոսի և ուրիշների համար էր:

«Մեր դրդապատճառներն ու մտքերը, ի վերջո, ազդում են մեր գործողությունների վրա»,- ասել է Երեց Ուխդորֆը: Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի ճշմարտացիության վկայությունը ամենահզոր խթանիչ ուժն է մեր կյանքում: Հիսուսը հաճախակի շեշտում էր լավ մտքերի և պատշաճ դրդապատճառների ուժը. «Նայեք ինձ ձեր բոլոր մտորումներում. մի կասկածեք, մի վախեցեք» (ՎԿՈ 6.36):

«Հիսուս Քրիստոսի և վերականգնված ավետարանի մասին վկայությունը կօգնի մեզ մեր կյանքում, որպեսզի սովորենք մեզ համար Աստծո հատուկ ծրագրի մասին, իսկ հետո գործենք համապատասխանաբար: Այն մեզ հավաստիացում է տալիս իրականության, ճշմարտության և Աստծո բարության մասին, Հիսուս Քրիստոսի ուսմունքների և Քավության մասին, ինչպես նաև վերջին օրերի մարգարեների աստվածային կոչման մասին»:[9]

Ինչ վերաբերում է ինձ, ես պատրաստվում եմ շարունակել փորձել, անգամ երբ դժվար է դա անել: Ես պատրաստվում եմ շարունակել աղոթել և ուսումնասիրել սուրբ գրությունները: Ես պատրաստվում եմ ջանքեր գործադրել, որպեսզի ամեն օր ավելի ամրացնեմ իմ վկայությունը Փրկիչի մասին: Եվ ես պատրաստվում եմ շարունակել փորձել ապրել՝ կարծես Նա կօգնի ինձ ապրել, և կախված լինել Նրա խոսքերից, Նրա ապրող մարգարեների և առաքյալների խոսքերից, որպեսզի ուսուցանեն ինձ, թե ինչպես, ապավինելով շարժառիթին, որն առաջանում է ոչ միայն Նրա հանդեպ իմ հավատից ու սիրուց, այլև Նրա հավերժական զոհաբերությունից և իմ հանդեպ սիրուց: ■

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Աշակերտի ուղին», *Լիահոնա,* մայիս 2009, 76:
2. Լ. Ուիթնի Քլեյթոն. «Ընտրեք հավատքը» *Լիահոնա,* մայիս 2015, 38:
3. Ջեֆրի Ռ. Հոլլանդ, «Տեր, ես հավատում եմ», *Լիահոնա,* մայիս 2013, 93–94, շեշտադրում:
4. Ռոզմարի Մ. Վիքսոն, «Վերադառնալ հավատին» *Լիահոնա,* մայիս 2015, 94:
5. Թոմաս Ս. Մոնսոն, «Մորմոնի Գրքի զորությունը», *Լիահոնա,* մայիս 2017, 87:
6. Ռոզմարի Մ. Վիքսոն, «Վերադառնալ հավատին», 95
7. Ռասսել Մ. Նելսոն, «Հայտնություն Եկեղեցու համար, հայտնություն մեր կյանքի համար», *Լիահոնա,* մայիս 2018, 95–96:
8. Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Եկեք, միացեք մեզ», *Լիահոնա,* նոյեմբեր 2013, 24:
9. Դիտեր Ֆ. Ուխդորֆ, «Անձնական վկայության ուժը», *Լիահոնա,* նոյեմբեր 2006, 37:



ԵՐԿՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

«Տիրոջ ճանապարհը դժվար չէ: Կյանքն է դժվար, ոչ թե ավետարանը . . . Կյանքը դժվար է մեր բոլորի համար, բայց կյանքը նաև այնքան պարզ է: Մենք ունենք միայն երկու ընտրություն: Մենք կարող ենք կամ հետևել Տիրոջը և օժտվել Նրա զորությամբ ու ունենալ խաղաղություն, լույս, ուժ, գիտելիք, վստահություն, ուղղություն, սեր և ուրախություն, կամ կարող ենք գնալ որևէ այլ ճանապարհով, ցանկացած այլ ճանապարհով, ինչպիսին էլ այն լինի, և գնալ միայնակ, առանց Նրա աջակցության, առանց Նրա զորության, առանց ուղղության՝ խավարի, խառնաշփոթի, կասկածի, վշտի ու հուսահատության մեջ: Եվ ես հարցնում եմ, ո՞ր ճանապարհն է ավելի հեշտ»:

Երեց Լորենս Ե. Քորբրիջ, Յոթանասունից, «Ճանապարհը» *Լիահոնա,* նոյեմբեր 2008, 36:

Առաջին քայլը դեպի ապաշխարություն

Ես զգում էի, թե խավարն ինչպես է պատում իմ կյանքը: Իսկ հետո ես հասկացա, որ պետք է խոսեմ իմ եպիսկոպոսի հետ:

Աուրիլաս Պիտերսոն

Հիշում եմ, թե ինչպես միսիոներների հետ որոշեցինք իմ մկրտության օրը: Նրանք հարցրին ինձ՝ արդյոք ես պատրաստ եմ կապել այս ուխտը Երկնային Հոր հետ: Նույնիսկ առանց այդ մասին մտածելու ուրախ սրտով ես ասացի. «Այո»: Ես ցանկանում էի ընդունել հատուկ պարգևը, որ իմ սիրող Հայրն էր տվել ինձ, և ես գիտեի, որ այդքան երջանիկ չէի լինի առանց Փրկիչին իմ կյանքում ունենալու: Բայց ես իրոք հաստատ չգիտեի, թե ապագան ինչ էր պահել ինձ համար:

Վերջապես, մեծ օրը եկավ: Այն անմոռանալի էր, և ես շատ երջանիկ էի:

Խավարի օրեր

Իմ մկրտությունից և հաստատումից հետո օրերը հանկարծ խավար թվացին: Ես զբաղվում էի իմ ընտանիքի խնդիրներով և մաքառում էի Աստծո բոլոր օրենքներին հնազանդվելու համար: Ես չգիտեի՝ ինչ անել, և ցանկանում էի հրաժարվել ամեն ինչից: Թվում էր, թե ոչ ոք ինձ չի հասկանում:

Ես միշտ սիրել եմ կարդալ Մորմոնի Գիրքը, բայց այդ ժամանակ ես մի կողմ էի դրել այն: Մի օր, երբ ես տանը մենակ էի, զգացի, որ Հոգին ինձ հաճելիորեն հուշում է կարդալ Մորմոնի Գիրքը: Ես նախօրոք աղոթեցի, ցանկանալով գտնել որևէ պատասխան, որը կարող էր սփոփանք բերել իմ տառապանքին: Ես անմիջապես բացեցի Ալմայի 5-րդ գլուխը: Հատված 27-ն ասում է. «Քայլե՞լ եք դուք՝ ձեզ անարատ պահելով Աստծո առաջ: Կկարողանայի՞ք դուք ասել ձեր մեջ, եթե դուք այս պահին կանչվեիք մեռնելու, որ եղել եք բավականին խոնարհ: Որ ձեր հանդերձները մաքրված և ճերմակ են դարձված Քրիստոսի արյան միջոցով, որը կգա՝ փրկագնելու իր ժողովրդին իրենց մեղքերից»:

Ի վերջո, ես հուզվեցի այս խոսքերից: Ես գիտեի, որ ապաշխարության կարիք ունեի, ուստի հանդիպում նշանակեցի իմ եպիսկոպոսի հետ: Ես չեմ հերքում, որ վախեցած էի, բայց ինձ ստիպեցի գնալ և հանդիպել նրան:

Հասկանալ Աստծո խոստումը

Երբ ես հասա եպիսկոպոսի գրասենյակ, ինձ այնքան մեղավոր էի զգում, որ ցանկանում էի շրջվել ու հեռանալ: Բայց ես աղոթեցի, որ քաջություն ունենամ ասել ամեն բան: Եպիսկոպոսը հրավիրեց ինձ գրասենյակ, իսկ հետո աղոթեց Աստծո օգնությունը ստանալու համար: Նա խոսում էր ինձ հետ այնպես, կարծես, ես նրա որդին էի, և բառերի միջոցով

ՀՈՒՐԵՆ ԴՐՈՒՄՈՆԴ. ՇԱՐԿ

ցուցադրում էր իր սերը իմ հանդեպ: Նա ինձ խորհուրդ տվեց և խնդրեց ինձ անել որոշ բաներ, որպեսզի ստանամ Աստծո ներողամտությունը, իսկ հետո վերադառնամ ու հանդիպեմ իր հետ:

Ես այնքան ուրախ էի այդ հնարավորության համար: Ես հետևեցի նրա խորհրդին և, ի վերջո, հասկացա Ալմային տված Աստծո խոստումը ներման մասին. «Եթե նա խոստովանի իր մեղքերն իմ և քո առաջ, և ապաշխարի իր սրտի անկեղծությամբ, նրա՛ն պիտի դու ներես, և ես կներեմ նրան նույնպես» (Մոսիա 26.29): Անկեղծ ապաշխարությունից հետո ես գիտեի, որ Աստված ներել էր ինձ: Ես, ի վերջո, կարողացա զգալ Երկնային Հոր սերը իմ սրտում և խավարն անհետացավ: Ես երջանիկ էի ու ինձանով հպարտ:

Եպիսկոպոսը պատրաստ է օգնել ձեզ

Եպիսկոպոսը Տիրոջ ներկայացուցիչն է ծխում: Իմացեք, որ նա պատրաստ է օգնել ձեզ գտնել իսկական երջանկությունը, որն Աստված է պահել ձեզ համար: Վստահեք Նրան: Եթե խնդիրներ կամ ապաշխարության կարիք ունեք, գնացեք և գտեք նրան: Նա կօգնի ձեզ:

Ես գիտեմ, որ երբեմն հեշտ չէ այցելել նրան: Բայց ինչպես Նախագահ Լորենզո Մնոուն է (1814–1901) բացատրել մեր Երկնային Հոր հավերժական ծրագրի մասին. «Ես կարծում եմ, որ նախաերկրային հոգևոր աշխարհում, երբ մեզ առաջարկվեց . . . անցնել փորձառության միջով, որը մենք հիմա ստանում ենք, ամբողջությամբ հաճելի ու դուրեկան չէր: . . . Սակայն կասկած չկա, որ այնտեղ մենք հստակ տեսանք և հասկացանք, որ որպեսզի իրագործենք մեր վեհացումն ու փառքը, սա անհրաժեշտ փորձառություն էր»: Նա շարունակում է, ասելով. «Մենք պատրաստակամ ենթարկվում ենք Աստծո կամքին և հետևաբար մենք այստեղ ենք» (*Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Լորենզո Մնոու* [2012], 110):

Ապաշխարությունը Աստծո կամքին ենթարկվելու մի մասն է: Ուստի եպիսկոպոսից վախենալու փոխարեն նրան ձեր ընկերը դարձրեք: Նա ընտրված էր Աստծո կողմից և կարող է օգնել ձեզ ապաշխարել ու ամոքել ձեր հոգին դեպի Հիսուս Քրիստոսը գալու միջոցով: Տերն ուզում է օգնել մեզ, բայց մենք պետք է կատարենք առաջին քայլը դեպի ապաշխարություն: Այդ կերպ մենք կարող ենք կատարված տեսնել խոստումը Եսայիա 1.18-ում. «Եթե ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պես լինին, ձյունի պես պիտի սպիտականան»: Իսկ դրա համար եպիսկոպոսն այնտեղ է, որ օգնի ձեզ:

Ես վկայում եմ որ Աստված ապրում է, և որ Հիսուսը մեր Փրկիչն է: Նրանք երկուսն էլ մեզ շատ են սիրում: ■

Հեղինակն ապրում է Քվեսթում (Հաիթի):

ՍՈՎՈՐԵԼ ՏԻՐՈՋ ՁԵՎՈՎ

Երեց Դեյվիդ Ա. Բեդնար
Տասներկու Առաքյալների Քվորումից

Իր աշխատանքն արագացնելու համար Տերը մեզանից պահանջում է՝ մշտապես սովորել, փոխվել և առաջ ընթանալ Փրկիչի հանդեպ սիրով։

Մի օրինակ բոլոր բաների համար

1831թ. հունիսին Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով տրված մի հայտնության մեջ Տերը հայտարարեց. «Ես ձեզ կտամ մի օրինակ, բոլոր բաների համար, որպեսզի դուք չխաբվեք. քանզի Սատանան դրսում է, երկրի վրա, և նա առաջ է գնում՝ խաբելով ազգերին» (ՎԿՈ 52.14)։

Հետաքրքիր է, որ Տերը մեզ տալիս է «մի օրինակ», այլ ոչ թե «օրինակը» բոլոր բաների համար։ Չեմ կարծում, որ Տերը «մի օրինակ, բոլոր բաների համար» արտահայտությամբ առաջարկում է, որ Նա ունի միայն մեկ օրինակ բոլոր իրավիճակների համար։ Փոխարենը, Տիրոջ եղանակը ներառում է բազմազան օրինակներ, որոնք կարող են օգտագործվել տարբեր հոգևոր նպատակների հասնելու համար։

Մեր վերջնական նպատակը՝ սովորելու և ուսուցանելու ցանկացած փորձառության մեջ պետք է լինի՝ որոշել և օգտագործել օրինակը կամ օրինակները, որոնք լավագույնս համապատասխանում են մեր կարիքներին, և հասնել ցանկալի ուսումնական արդյունքներին։

Սուրբ Հոգին է ուսուցիչը

Սուրբ Հոգին Աստվածագլխի երրորդ անդամն է և Հայտնող, Ուսուցիչ, Մխիթարիչ, Սրբագործող, և Նա հիշեցնում է մեզ ամեն բան (տես Հովհաննես 14.16–17, 26, 3 Նեփի 27.20)։ Երեց Ջեյմս Ի. Թալմիջը՝ (1862–1933) Տասներկու Առաքյալների Քվորումից, բացատրել է. «Սուրբ գրություններում Սուրբ Հոգու պաշտոնը նկարագրված է մարդկանց

Հրավիրել Սուրբ Հոգուն լինել ուսուցիչը. սա է կենտրոնական սկզբունքը սովորելու Տիրոջ օրինակում:

ՀԱՎԱՏՔՈՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ՍԻՐՏ ՈՒ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄ ՄԻՏՔ։

մեջ կատարած Նրա ծառայություններով։ Նա Հոր կողմից ուղարկված Ուսուցիչ է, և նրանց համար, ովքեր Նրա ուսման վարձի իրավունքն ունեն, Նա կբացահայտի բոլոր բաները, որոնք անհրաժեշտ են այդ հոգիների զարգացման համար»։[1] Հրավիրել Սուրբ Հոգուն լինել *ուսուցիչը*. սա է կենտրոնական սկզբունքը սովորելու Տիրոջ օրինակում։

«Ուսանողն է, ով՝ ազատ կամքն օգտագործելով և ճիշտ սկզբունքների համաձայն գործելով, բացում է իր սիրտը Սուրբ Հոգու առաջ և հրավիրում Նրա ուսմունքները, վկայության ուժը և հաստատող վկայությունը։ Հավատքով սովորելը պահանջում է ոչ թե պասսիվ համաձայնություն, այլ հոգևոր, մտավոր և ֆիզիկական ջանքեր։ Մեր հավատքով ոգեշնչված գործերի անկեղծությամբ և հետևողականությամբ է, որ մենք ցույց ենք տալիս մեր Երկնային Հորն ու Նրա Որդուն՝ Հիսուս Քրիստոսին, որ կամենում ենք սովորել ու ցուցումներ ստանալ Սուրբ Հոգուց։

Ձեր կարծիքով, միսիոներներն ինչպե՞ս են օգնում ունկնդիրներին սովորել հավատքով։ Ստանձնելը և պահելը հոգևոր պարտավորությունները, ինչպես օրինակ՝ ուսումնասիրելը ու աղոթելը Մորմոնի Գրքի մասին, պատվիրաններ պահելը, մասնակցելը Եկեղեցու ժողովներին, ունկնդրից պահանջում են հավատք գործադրել ու գործել։ Այս սկզբունքը վերաբերում է բոլոր անդամներին, ներառյալ՝ ծնողներին, ուսուցիչներին և ղեկավարներին։

Ուսուցանելը, հորդորելը և բացատրելը, որքան էլ դրանք կարևոր են, չեն կարող ունկնդրին, երեխային, ուսանողին կամ անդամին հաղորդել վերականգնված ավետարանի ճշմարտացիությունը։ Միայն այն ժամանակ, երբ նրանց հավատը նախաձեռնում է գործողություն և բացում է սիրտ տանող ճանապարհը, Սուրբ Հոգին կարող է տեղ հասցնել հաստատող վկայությունը։ Միսիոներները, ծնողները, ուսուցիչներն ու ղեկավարները պետք է սովորեն ուսուցանել Հոգու զորությամբ։ Սակայն նրանք ունեն համարժեք կարևորության պարտականություն՝ օգնել ուրիշներին ինքնուրույն սովորել հավատով։

Սովորելու ձևը, որն ես նկարագրում եմ, վեր է պարզ ճանաչողական հասկացողությունից և տեղեկության պահպանումից ու վերհիշումից։ Սովորելու ձևը, որի մասին ես խոսում եմ, ստիպում է, որ մենք զարթնենք առ Աստված (տես Ալմա 5.7), հանենք բնական մարդուն (տես Մոսիա 3.19), փոխենք մեր սրտերը (տես Մոսիա 5.2), դարձի գանք առ Տերը և երբեք չհեռանանք (տես Ալմա 23.6)։ Հավատքով սովորելը պահանջում է սիրտ ու պատրաստակամ միտք (տես ՎևՈւ 64.34), և արդյունք է այն բանի, որ Սուրբ Հոգին Աստծո խոսքի ուժը տանում է դեպի մեր սիրտը և դնում այն սրտի մեջ։ Հավատքով սովորելը չի կարող փոխանցվել ուսուցչից ուսանողին, միսիոներից ունկնդրին դասախոսության, ցուցադրման կամ փորձնական վարժության միջոցով. ընդհակառակը, ուսանողը պետք է հավատք գործադրի և գործի, որպեսզի գիտելիք ձեռք բերի իր համար։

Սովորելու և ուսուցանելու օրինակ

1. Պատրաստվեք սովորել

Եթե դուք մասնակցում եք Կիրակնօրյա Դպրոցի դասերին և լսում եք, որ ձեր ուսուցիչը ներկայացնում է թեման, շատ լավ է։ Բայց եթե դուք աշխատել ու պատրաստվել եք, եթե դուք մտածում եք այն բաների մասին, որոնց մասին ձեր ուսուցիչը խնդրել է կարդալ, խորհել և աղոթել նախքան դասը, կարող է տեղի ունենալ Հոգու հզոր զեղում, և Սուրբ Հոգին է դառնում ձեր ուսուցիչը։

Պատրաստվածությունը հրավիրում է հայտնություն

2. Փոխգործակցեք, որպեսզի շենանաք Ես ցանկանում եմ ձեր ուշադրությունը հրավիրել այս հատվածի վրա: «Ուսուցիչ նշանակեք ձեր մեջ, և թող բոլորը միանգամից խոսնակ չլինեն. այլ տվյալ պահին թող մեկը խոսի, և բոլորը լսեն նրա ասածները, որ բոլորի խոսելուց հետո, բոլորը կարողանան միմյանցով շենանալ, և որ ամեն մարդ ունենա հավասար արտոնություն» (ՎևՈւ 88.122):

Սա Տիրոջ հզոր օրինակներից մեկն է սովորելու և ուսուցանելու համար: Թույլ տվեք առաջարկել մեկ այլ տեսանկյունից դիտարկել այս հատվածը. «Ուսուցիչ նշանակեք ձեր մեջ»: Ո՞վ է ուսուցիչը: Սուրբ Հոգին: Կարո՞ղ է այնպես լինել, որ եթե դուք ցանկանաք, որ Սուրբ Հոգին լինի ուսուցիչը, ապա գործի այս հրավիճակը. «թող բոլորը միանգամից [չխոսեն]. այլ տվյալ պահին թող մեկը խոսի, և թող բոլորը լսեն նրա ասածները, որ բոլորի խոսելուց հետո, բոլորը կարողանան միմյանցով շենանալ»: Միակը, ով կարող է առաջ բերել այդ շենացումը, Սուրբ Հոգին է:

Շենացնելու համար փոխգործակցությունը հրավիրում է հայտնություն: Այսօր Եկեղեցում մենք ուսումնասիրում և կիրառում ենք սովորելու և ուսուցանելու ավելի զգայուն, ջանասեր և պահանջկոտ օրինակներ: Արդյո՞ք մենք միշտ կկատարենք այն, ինչ միշտ կատարել ենք, և կստանանք նույն արդյունքները, որոնք միշտ ստացել ենք, կամ արդյո՞ք մենք ավելի շատ կապաշխարենք, կսովորենք, կփոխվենք ու կուսուցանենք Տիրոջ ձևով:

3. Հրավիրեք գործել: Ընդամենը մի պարզ հարց օգնում է հասնել այս նպատակին: Դուք ի՞նչ կանեք շնորհիվ նրա, ինչ սովորել եք: Գործելով ըստ հայտնության, կիրավիրենք ավելի շատ հայտնություն:

Ես աղոթում եմ, որ մենք ընթանանք Տիրոջ արագությանը համրնթաց, որ մենք պարզապես չանենք այն, ինչ միշտ արել ենք նույն ձևով:

Ես վկայություն եմ բերում Տեր Հիսուս Քրիստոսի կենդանի իրականության մասին: Ես վկայում եմ, որ Նա ապրում է: Նա հարություն առավ: Նա կանգնած է այս Եկեղեցու գլխին և ղեկավարում է նրա գործերը: Նա բոլորիս խնդրում է ընթանալ Իր արագությանը համրնթաց և հետևել այն օրինակներին, որոնք Նա սահմանել է մեզ համար, որ աճենք ու սովորենք: ■

Ելույթից, որը տրվել է նոր միսիայի նախագահների սեմինարի ժամանակ 2014թ. հունիսի 25-ին:

ՀՂՈՒՄ

1. Տես James E. Talmage, *The Articles of Faith*, 12th ed. (1924), 162:

ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՎԻՐՈՒՄ Է ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

5

ԵՂԱՆԱԿ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՑ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ՀՐԱՇԱԼԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է միանալու Եկեղեցու անդամների հետ ամբողջ աշխարհում՝ Եկեղեցու ղեկավարներին լսելու և նրանցից ուղղորդում ստանալու համար: Դիտելով, լսելով և ուսումնասիրելով գերագույն համաժողովի ելույթները, Հոգին կբերեք ձեր կյանք և կկառուցեք ձեր վկայությունը: Դա հնարավորություն է տալիս ձեզ ստանալ անձնական հայտնություն և գործել ըստ դրա:

Ահա հինգ եղանակ, որոնցով կարող եք սովորել գերագույն համաժողովից:

1 ԳՐԻ ԱՌԵՔ ՁԵՐ ՀԱՐՑԵՐԸ ՆԱԽՔԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՍԿՍՎԵԼԸ

Ժամանակ տրամադրեք և գրի առեք ձեր հարցերը նախքան գերագույն համաժողովի սկսվելը, իսկ հետո ուշադրություն դարձրեք պատասխաններին, որոնք կգան ձեզ համաժողովի ժամանակ: Ձեր աղոթքներն ու հարցերը կարող են ստանալ իրենց պատասխանը, երբ դուք մասնակցեք և ականջ դնեք Հոգուն:



ԴՐԱԳԼԵՐ՝ «ՔՐԻՍՏՈՍԸ ԵՎ ՀԱՐՈՒՍՏ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՐԱՎԱՐԻՉԸ», ՀԵՅՆՐԻԽ ՀՈՖՄԱՆ:

2 ՁԳՏԵՔ ՍՈՎՈՐԵԼ ՔՐԻՍՏՈՍԻՑ

Մարգարեները վկայում և ուսուցանում են Փրկիչի մասին (տես Գործք Առաքելոց 10.43): Երբ լսեք համաժողովի ելույթները, կարող եք մտածել այն մասին, թե ելույթ ունեցողներն ինչ են ուսուցանում ձեզ Հիսուս Քրիստոսի մասին: Դուք նույնիսկ կարող եք ցուցակ կազմել ձեր նշումներում:

Դուք կարող եք հայտնություն ստանալ և անվախ կերպով գործել ըստ այդ հայտնության:

Հենրի Բ. Այրինգ, «Տերն առաջնորդում է Իր Եկեղեցին», հոկտեմբեր, 2017, գերագույն համաժողով

3 ՓՆՏՐԵՔ ԹԵՄԱՆԵՐ

Համաժողովի ելույթներից մի քանիսը լսելուց հետո դուք կարող եք նկատել, որ մի թեմա մի քանի անգամ է նշվել: Այն, ինչ նկատում եք, կարող է լինել եղանակներից մեկը, որով Հոգին օգնում է ձեզ ճանաչել ինչ-որ բան, որը դուք պետք է սովորեք:

4 ՆՇՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵՔ ՄՈՐՄՈՆԻ ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

Դուք շատ բան կարող եք սովորել, ուշադրություն դարձնելով սուրբ գրություններին, որոնց Եկեղեցու ղեկավարները հղումներ են կատարում, հատկապես Մորմոնի Գիրքին, որը «մեր կրոնի պորտաքարն է» (Մորմոնի Գրքի նախաբանը): Տեսեք, արդյո՞ք կարող եք գրի առնել ամեն անգամ, երբ դրա մասին նշվում է գերագույն համաժողովին: Ձեր գտածը կարող է զարմացնել ձեզ:

5 ԳՈՐԾԵԼՈՒ ՇԱՐ-ԺԱՌԻԹՆԵՐ ՈՒ ՈԳԵՇՆՉՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑԵՔ

Գրի առեք ուղերձներն ու մեջբերումները, որոնք ոգեշնչում են ձեզ և հրավիրում գործելու: Սա կարող է օգնել ձեզ կիրառել ձեր սովորածը և հիշել՝ ինչ-պիսին էին ձեր խոհերը, երբ ավելի ուշ հիշեցման կարիք կունենաք: ■

Հավատքով սովորելը պահանջում է ոչ թե պասսիվ համաձայնություն, այլ հոգևոր, մտավոր և ֆիզիկական ջանքեր:

Երեց Դեյվիդ Ա. Բեդնար, «Սովորել Տիրոջ ձևով», էջ 50 այս համարում

ՆԿԱՐՆԵՐԸ՝ GETTY IMAGES, ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԱՐԴԸ ԼԵՌՆՈՒ ԳԱԳԱԹԻՆ, ՆԿԱՐԸ ՋՈՇՈՒԱ ԷՐԼՍՈՆԻ/UNSPLASH

ՈՒՍՈՒՑԱՆՎԱԾ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՎ

Նախքան գերագույն համաժողովը, ***այս երիտասարդները պատրաստված էին*** ուսուցանվել Հոգով: Սիա թե ինչ են նրանք սովորել տարբեր համաժողովներից, և դրա շնորհիվ ի՞նչ են այլ կերպ կատարում:

Հարցերի պատասխանները

Նախքան գերագույն համաժողովը, ես ունեի երկու հարց. (1) Ինչպե՞ս կարող եմ լավ վերաբերմունք ցուցաբերել և օգնել իմ ընկերներին, երբ նրանք սխալ որոշումներ են կայացնում, և (2) Ինչպե՞ս կարող եմ վկայել Եկեղեցու մասին, որ ինձ չծաղրեն: Համաժողովի ժամանակ Հոգին վկայեց ինձ, որ ես մենակ չեմ: Հիմա ես գիտեմ, որ ուսումնասիրելով սուրբ գրությունները ամբողջ սրտով, ես կստանամ ընկերներիս մասին իմ հարցերի պատասխանները: Ես գիտեմ, որ իմ Հայրը լսում է իմ աղոթքները, և ես կձգտեմ ամեն օր ավելի լավը դառնալ:

Այզեկ Ռ., 13 տարեկան, Պիչինչա, Էկվադոր

Ընտանիքի միակ երեխան է, սիրում է դաշնամուր նվագել, սիրում է բիֆշտեքս ուտել, ֆուտբոլ խաղալ, ձյուդոյով զբաղվել, լողալ, երգել և կոնֆետներ պատրաստել, ցանկանում է բժիշկ դառնալ, նախընտրած գույնը՝ կանաչ

Ոգեշնչված հրահանգ

Ինձ ոգեշնչել է գերագույն համաժողովը Մինչ ես լսում էի մեր ղեկավարների հրահանգները՝ ծառայել ուրիշներին, վստահել Քրիստոսին և ամուր կառչել երկաթյա ձողից, զգացի, որ Սուրբ Հոգին վկայում է ինձ, որ այս ավետարանը ճշմարիտ է, և մենք կարող ենք ձեռք բերել հավերժական կյանք՝ պահելով պատվիրանները և հետևելով Աստծո խոսքին: Ես նպատակներ դրեցի ավելի շատ ծառայել իմ համայնքում և ամրացնել իմ վկայությունը ամենօրյա աղոթքի և սուրբ գրությունների ուսումնասիրության միջոցով: Ես գիտեմ, որ Երկնային Հոր դուստրն եմ: Նա ապրում և սիրում է ինձ միշտ և հավիտյան:

Մեդլին Բ., 16 տարեկան, Դելավեր, ԱՄՆ

Մեդլինը երեք երեխաներից ավագն է, մասնակցում է մրցավազքի, սիրում է կարդալ ու երգել, սիրում է իսպաներեն լեզուն և հուսով է, որ կդասավանդի անգլերենը որպես երկրորդ լեզու:

ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐ ՀԻՆԳՈՐՈՒՍԱԿՈՂ ՆԿԱՐՆԵՐԸ՝ GETTY IMAGES



Աճելու իրավեր

Գերագույն համաժողովը ամրապնդեց Հիսուս Քրիստոսի ավետարանով ապրելու իմ ցանկությունը: Այն օգնեց ինձ իմանալ և հասկանալ, որ սա ճշմարիտ Եկեղեցի է, որը մեզ լույս ու երջանկություն է բերում: Ես զգում եմ, որ ամեն օր Հոգին հրավիրում է ինձ աճել ու կարդալ Մորմոնի Գիրքը ավետարանի մասին ավելի ամուր վկայություն ձեռք բերելու համար: Ես հավատում եմ, որ իմ Երկնային Հայրը ցանկանում է, որ ես ականջալուր լինեմ այս ոգեշնչված ուղերձներին:

Վիսենտե Ա., 16 տարեկան, Չիլի



Չորս զավակներից ավագն է, սիրում է խաղալ համակարգչային խաղեր, լսել երաժշտություն և ֆուտբոլ խաղալ, հաճախում է թատերական խմբակ, ցանկանում է ծառայել միսիայում

Պատրաստված սովորելու

Գերագույն համաժողովի ժամանակ ես այնքան ուժեղ եմ զգում Հոգին: Այն ժամանակից ի վեր, ինչ սկսել եմ հարցեր պատրաստել և հոգևոր առումով ինքնուրույն պատրաստվել համաժողովին, իմ կյանքը մի ուրիշ իմաստ է ստացել, և ես կարողացել եմ այնքան շատ բան սովորել յուրաքանչյուր ելույթից: Ես այնքան երախտապարտ եմ մարգարեների և առաքյալների համար, և գիտեմ, որ նրանք ուղարկված են Երկնային Հոր կողմից մեզ ղեկավարելու և առաջնորդելու համար:

Բեն Հ., 17 տարեկան, Կենտուկի, ԱՄՆ

Սիրում է զբաղվել սպորտով, դպրոցում խաղում է բասկետբոլ և թենիս, սիրում է դահուկներով սահել, ճամփորդել և գնալ արշավների

Փնտրել Լույսը

Նախանցյալ տարի ես մարտահրավերներ ունեցա: Իմ հայրը պայքարում էր քաղցկեղի դեմ, և մեր քաղաքում տեղի ունեցան մի քանի ահաբեկչություններ: Ես շատ անհանգստացած էի և ցանկանում էի իմանալ՝ ինչպես կարող եմ խաղաղություն զգալ, երբ վախենում էի իմ ֆիզիկական և հոգևոր ապահովության համար: Գերագույն համաժողովից ես իմացա, որ մենք կարող ենք խաղաղություն զգալ, երբ ապրենք առաքինի կյանքով, սրտերը՝ հավատով լի, և պահենք հավերժության հեռանկարը: Ես ոգեշնչված դիմեցի Քրիստոսին դժվարին ժամանակներում՝ իմ սեփական հասկացողությանն ապավինելու փոխարեն: Ես գիտեմ, որ կարող եմ հաղթահարել խավարի ազդեցությունները՝ փնտրելով Քրիստոսի լույսի պայծառությունը:

Օլիվիա Հ., 17 տարեկան, Բելգիա

Լողորդ է, սիրում է կամավոր ծառայել բարեգործական խոհանոցում, մանկատանը և իր դպրոցի հատուկ կրթական ծրագրում

«ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

ԵՍ ԽՈՍՏԱՆՈՒՄ ԵՄ՝

ԵԹԵ ԴՈՒՔ

ԼՍԵՔ

[ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ],
ԴՈՒՔ ՈՒԺԳԻՆ ԿԶԳԱՔ ՀՈԳԻՆ ՁԵՐ ՄԵՋ:
ՏԵՐԸ ԿԱՍԻ ՁԵԶ, ԹԵ ԻՆՉ Է ՈՒԶՈՒՄ,
ՈՐ ԱՆԵՔ ՁԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ»:

Երեց Ռոբերտ Դ. Հեյլս (1932-2017)՝
Տասներկու Առաքյալների Քվորումից
«Գերագույն Համաժողով. Ամրացնել հավատքը և վկայությունը»,
հոկտեմբեր, 2013թ., գերագույն համաժողով

Փաստեր ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ մասին

Համաժողովների Կենտրոնի երգչախումբն ունի **7667** խողովակ, որոնցից միայն 170 խողովակներն են տեսանելի լսարանին:

Որպես Բարձրագույն Իշխանավոր, 34 տարիների ընթացքում Նախագահ Ռասսել Մ. Նելսոնը **84** ելույթ է տվել գերագույն համաժողովների ժամանակ:

221 երկրներում և տարածքներում մարդիկ դիտում են գերագույն համաժողովը:

Ելույթները թարգմանվում են **94** լեզուներով:

Kommt zu Christus!
Kom til Kristus
VENIR A CRISTO
Придите ко Христу

Համաժողովների Կենտրոնի ամբիոնը պատրաստված է **ՆԱԽԱԳԱՀ ԳՈՐԴՈՆ Բ. ՀԻՆՔԼԻԻ** (1910–2008) ընկույզի ծառի փայտից:

Ավելի քան **100000** մարդ է մասնակցում ԱՄՆ-ի Յուտա նահանգի Սոլթ Լեյք Սիթիի Համաժողովների Կենտրոնում անցկացվող հինգ նիստերին:

ԲՈՒՆԳ 747 ԻՆՔՆԱԹԻՌԸ, որն ունի 70.5 մ. երկարություն, կարող է տեղավորվել Համաժողովների Կենտրոնի լսարանում

Յուրաքանչյուր համաժողովի ժամանակ տրվում են մոտ **35** ելույթներ:

ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՐՎԵԼ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ.

1995Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ. «Ընտանիք. Հայտարարություն աշխարհին»

1998Թ. ԱՊՐԻԼ. Փոքր տաճարների կառուցում

2001Թ. ԱՊՐԻԼ. Սկիզբ դրվեց Կրթության Մշտական Ֆոնդին

2012Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ. Իջեցվեց միսիոներական տարիքի շեմը

2018Թ. ԱՊՐԻԼ. Սպասավորությունը փոխարինում է տնային և այցելությամբ ուսուցմանը

ՆԿԱՐՆԵՐԸ՝ GETTY IMAGES



«Ես ինչպե՞ս կարող եմ հրավիրել Հոգուն իմ տուն, երբ մարդիկ կռվում կամ վիճաբանում են»:

ԵՂԵՔ ԽԱՂԱՐԱՐԱՐ

«Երբ մենք չենք կարողանում փոխել ուրիշների վարքագիծը, մենք պետք է լուծենք ինքներս մեզ պատշաճ կառավարելու խնդիրը։…

Ընտանիքի անդամների միջև վեճի և տարաձայնության փոխարեն, մենք պետք է միասին կառուցենք, լսենք և համաձայնության գանք»։

Elder Marvin J. Ashton (1915–94) of the Quorum of the Twelve Apostles, "No Time for Contention," *Ensign*, May 1978, 8.

Ասեք, որ դուք մեղավոր եք

Երբ վիճում եք և համարում եք, որ եթե ընդունեք ձեր սխալը և ափսոսաք դրա համար, նույնիսկ երբ կարծում եք կամ գիտեք, որ ճիշտ եք, դրանով կօգնեք խաղաղությունը վերականգնել սենյակում։ Հետո հեռացեք, լուռ մնացեք, փոխեք թեման կամ գտեք ինչ-որ բան, որի շուրջ կարելի է համաձայնության գալ։ Երկար ժամանակ չի պահանջվի, որ Հոգին վերադառնա։

Դիլան Մ. 15 տարեկան, Կալիֆորնիա, ԱՄՆ

Պարզապես սիրեք

Ես պարզել եմ, որ իմ ընտանիքի հանդեպ մաքուր սեր ցուցաբերելով, ես հրավիրում եմ Հոգուն՝ բնակվելու իմ տանը։ Մարգարեն խոսեց սիրո մասին, որպես կատալիզատորի, որը փոփոխություններ է առաջացնում, և որպես բալասանի, որը ամոքում է հոգիները։ Սիրո հոգին ապահովություն ու խաղաղություն է բերում տուն։

Ջոզեֆ Կ., 18 տարեկան, Արիզոնա, ԱՄՆ

Խոսեք ձեր ընտանիքի հետ

Եթե ձեր ընտանիքի անդամները Եկեղեցու անդամ չեն, ասեք նրանց, թե դուք ինչքան վատ եք զգում, երբ նրանք վիճում են, և խնդրեք նրանց կատարելագործել իրենց բնավորությունը։ Եթե դա չաշխատի, աղոթեք և փորձեք նորից։ Եթե նրանք անդամներ են, հիշեցրեք նրանց, որ նրանք Աստծո զավակներն են, և պետք է խուսափեն վեճերից։

Կարոլինա Ս. 19 տ., Գոյաս, Բրազիլիա

Աղոթել Հոգու համար

Երբ ընտանիքում վիճում են, դժվար է զգալ Հոգու ներկայությունը, բայց դա չի նշանակում, որ դուք չեք կարողանա զգալ այն, եթե արժանավոր եք: Աղոթեք, որ ձեր սրտում ավելանա Տիրոջ Հոգին և լրացուցիչ ուշադրություն դարձրեք ուղարկված հուշումներին: Երկնային Հայրը կարող է օգնել ձեզ խաղաղություն զգալ

Քեյթի Գ., 17 տարեկան, Յուտա, ԱՄՆ

Փորձեք փոխզիջումներ անել

Խոսեք ձեր ընտանիքի հետ և լուծեք խնդիրը այնպիսի ձևով, որ բոլորը օգուտ քաղեն, կամ կիսվեք որևէ սուրբ գրությունով, երգով ու հիմնով: Կարող եք նաև խնդրել Երկնային Հոր օգնությունը խնդիրը լուծելու համար: Այս կերպ բոլորը կհանդարտվեն և կկարողանան լուծել խնդիրը առանց գոռգոռալու կամ բռնության: Անշուշտ, Սուրբ Հոգին ձեզ բոլորիդ կլցնի խաղաղությամբ և այլևս չկռվելու ցանկություն կշնորհի բոլորիդ:

Լյուիս Ֆ., 14 տարեկան, Փլայա դել Կարմեն, Մեքսիկա

Պատասխանները Եկեղեցու վարդապետության մասին պաշտոնական հայտարարություններ չեն, այլ միտված են օգնելու և խորհուրդ տալու:

Արդյո՞ք վկայությունն ավելին է, թե այն պարզապես զգացմունք է:

Վկայությունն այն է, ինչի մասին Փրկիչը խոսում էր, երբ Պետրոսին ասաց. «Մարմինը եւ արիւնը չհայտնեց քեզ, բայց իմ Հայրը որ երկնքումն է» (Մատթեոս 16.17): Դա գիտելիք է Աստծուց, որը հայտնի է դարձվել Սուրբ Հոգու կողմից:

Սուրբ Հոգին խոսում է մի ձայնով, որը մենք ավելի շատ զգում ենք, քան լսում, բայց այն գալիս է թե՛ «քո մտքում, *թե՛* քո սրտում» (ՎևՈւ 8.2, շեշտադրումն ավելացված է)՝ մեր մտքերը, ինչպես նաև մեր զգացումները:

Մարգարե Ջոզեֆ Սմիթը նկարագրել է հայտնության ոգին՝ որպես զգացում «մաքուր խելամտության, որը հոսում է ձեր մեջ, [տալով] ձեզ գաղափարների հանկարծակի հարվածներ» (*Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ* [2007], 132):

Երբ մենք մեր մտքերն ու սրտերը՝ մեր խոհերը, զգացմունքները և ցանկությունները դարձնում ենք դեպի Տերը, Նա կարող է խոսել մեր մտքերի և սրտերի հետ Սուրբ հոգու մեղմ, հանդարտ ձայնով: Երբ Նա զբաղեցնում է մեր մտքերը, որոշակի զգացմունքներ և խոհեր, կարծես, հոսում են դեպի մեզ: Սա է այն վկայությունը, որը Նա տալիս է մեզ:

Դուք ի՞նչ եք կարծում:

«Ինչպե՞ս կարող եմ լավ չափանիշներով ընկերներ գտնել»:

Ձեր պատասխանը և, ցանկության դեպքում, բարձրորակ լուսանկարը, ներկայացրեք մինչև 2018 թվականի նոյեմբերի 15-ը liahona.lds.org կայքին (սեղմեք «Ներկայացնել հոդված»):

Պատասխանները կարող են խմբագրվել ծավալի և պարզության համար:

ՁԱԽԻՑ. ԼՈՒՍԱՆԿԱՐԸ ՏՐԱՄԱԴՐՎԵԼ Է © GETTY IMAGES

Ճանապարհներ, որոնք ձեզ պատրաստում են ձեր ապագայի համար

Լիա Բարթոն
Եկեղեցու ամսագրեր

Չեմ կարծում, որ որևէ 14-ամյա աղջկա երազանքը կարող է լինել հայտնվել փոշոտ ախոռում, բարձրացնել ժանգոտ բահը և մաքրել ձիու գարշահոտ մսուրքը: Բայց ես ամեն օր այնտեղ էի դպրոցից հետո, մինչև բավականաչափ մեծացա ուրիշ աշխատանք գտնելու համար:

Անշուշտ ավագ դպրոցի ընթացքում աշխատելը ինձ համար կատարյալ տարբերակ չէր, բայց այդ ժամանակ ես հասկացա, որ եթե ես իսկապես ցանկանում էի ունենալ իմ սիրած աշխատանքը, որը կենդանիների հետևից մաքրելը չէր, ես պետք է սովորեի քոլեջում, իսկ սովորելու համար ինձ գումար էր հարկավոր: Ես գիտեի, որ ինձ համար կրթությունը ճիշտ քայլ էր (հուսով եմ) իմ ապագա կարիերայի մեջ:

Լավն այն է, որ իմ ընտրած ճանապարհը մեկն է այն մի քանիսից, որոնք կարող են օգնել սովորել աշխատել և ապահովել սեփական կարիքները: Սա կոչվում է դառնալ նյութապես և հոգեպես ինքնապահով: Երբ դուք քննարկում եք ձեր ընտրությունները, փորձեք ընտրել այն ճանապարհը, որը, ձեր կարծիքով, լավագույնս կպատրաստի ձեզ:

Սրանք այն մարդկանց պատմություններն են, ովքեր մի քանի տարի առաջ ճիշտ ձեր տարիքի էին: Հետևելով այս երիտասարդ չափահասների օրինակներին, դուք կարող եք գտնել ձեր սեփական ճանապարհը դեպի հաջողված ինքնապահովում:

ՀԱՇՎԻ ԱՌԵՔ ՉԵՋ ՇՐՋԱՊԱՏՈՂ ԿԱՐԻՔՆԵՐԸ

Օդում Փիսեթ, Կամբոջիա

Որպեսզի հասնեմ իմ նպատակներին, ես միշտ ասում եմ ինքս ինձ, որ տքնաջան աշխատելը շատ կարևոր է, բայց գերազանցելու մեկ այլ եղանակ է՝ խելացի աշխատելը: Անգլիայում իմ միսիան ավարտելուց հետո ես վերադարձա Կամբոջիա և անդրադարձա աշխատանքի շուկային: Ինձ հետաքրքրում էր ուսուցման տևողությունը աշխատանք գտնելու համար և այդ ուսուցման գինը:

Ես պարզեցի, որ հագուստի վաճառող դառնալու համար ուսուցման ծրագիրը կարճ է, բայց դժվար, և քիչ մարդիկ էին զբաղվում դրանով: Ես հասկացա, որ դա լավ հնարավորություն էր, և որոշեցի օգտվել դրանից: Ես հիմա ավարտել եմ ծրագիրը և որպես վաճառող աշխատում եմ հագուստի ընկերությունում:

Ճիշտ աշխատանք գտնելը կարող է դժվար լինել, բայց Փրկիչն ինձ հետ է, որ օգնի ու բարձրացնի ինձ:

Անկախ նրանից՝ դուք սովորում եք քոլեջում, աշխատանք եք փնտրում, թե արհեստ սովորում, դուք զարգացնում եք մի հատկանիշ, որը կարևոր է Աստծո արքայությունը կառուցելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾԵՔ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԴՌՆԵՐ ԲԱՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Լոլանդա, Թեյքսեյրա, Քեյի Վերդե, Աֆրիկա

Իմ մայրը միշտ խրախուսում էր ինձ հետևյալ խոսքերով. «Կրթությունը հաջողության բանալին է»: Ես ավելի լավ ապագա էի ցանկանում ինձ համար և հատկապես իմ ընտանիքի համար, և դա իրագործելու համար ես պետք է շարունակեի կրթությունս: Այդ ժամանակ ես քոլեջում սովորելու գումար չունեի և դիմեցի կրթաթոշակի համար, որպեսզի մասնակցեմ ամառային դպրոցին համակարգչային ծրագրեր և սպասարկում ուսումնասիրելու համար:

Իմ ուսումնասիրության ընթացքում ես բախվեցի շատ դժվարությունների, բայց դա ինձ ետ չպահեց, որպեսզի ես առաջ շարժվեմ՝ աչքերս հառած լավ օրերի: Աղոթքը շատ օգնեց ինձ, ես միշտ խորհուրդ եմ խնդրում Տիրոջից: Ես միշտ նվիրված եմ եղել իմ ուսումնասիրություններին, և այսօր ես նվիրված իմ աշխատանքին, լավագույնս կատարելով իմ պարտականությունները՝ որպես համակարգչի մասնագետ և շուկայի զարգացման մասնագետ:

ԵՏԻՆ ՊԼԱՆԻ ՆԿԱՐՆԵՐԸ՝ ՋՈՇ ԹԱԼԲՈԹ, ՆԵՐԴԻՐՆԵՐԸ՝ GETTY IMAGES

ՀԻՄԱ ԱՇԽԱՏԵՔ ԱՅՆ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՄԱՐ, ՈՐԸ ԴՈՒՔ ԵՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ

Էն-Սոֆի և Լոուրենս Քեյվին, Շոտլանդիա, Միացյալ Թագավորություն

Էն-Սոֆի. Ես միշտ ցանկացել եմ ուսանել համալսարանում, բայց սովորելու առարկայի մասին իմ ծրագրերը շատ են փոխվել իմ պատանեկության տարիների ընթացքում: Ավագ դպրոցն ավարտելուց հետո ես վեց ամիս կամավոր աշխատեցի հիվանդանոցում: Այդ ժամանակից ի վեր ինձ դուր էր գալիս բուժքույր լինելու գաղափարը, բայց, ըստ ինձ, ես չէի կարողանա անել այդ:

Ծխի ինքնապահովման դասին մեզ խնդրեցին ընտրել որևէ աշխատանք, որը մենք կցանկանայինք ունենալ, նույնիսկ եթե չունենայինք անհրաժեշտ որակավորումները: Ես աղոթում էի, որ իմանամ՝ ինչ անել և բուժքույրի մասնագիտությունը միտքս եկավ: Ես որոշեցի հետևել Տիրոջ հուշումներին:

Այս ճանապարհին հետևելը հեշտ չէր: Սկզբում ես ուսումնասիրեցի բուժքույրական գործի ծրագիրը, և թե որքան ժամանակ կպահանջվեր այն ուսումնասիրելու համար: Ես խոսեցի մարդկանց հետ, ովքեր անցել էին նույն գործընթացի միջով: Երբ առաջին անգամ ես դիմեցի բուժքույրական ծրագրին, ինձ գրանցեցին սպասողների ցուցակում: Բայց ես չհանձնվեցի, կրկին դիմեցի և, ի վերջո, ստացա այն: Երբեմն դուք պետք է համբերատար լինեք և վստահեք Տիրոջը, քանի որ Նա ունի իր սեփական ծրագիրը ձեզ համար:

Լոուրենս. Երբ ես պատանի էի, նպատակ դրեցի հասնել առավելագույնին, անկախ այն բանից՝ ինչ առարկա էի ուսումնասիրում կամ ինչ գործ էի անում: Ես միշտ փորձում էի սովորել և ինձ համար ապահովել լավագույն հնարավորությունը հաջողության համար:

Ներկայումս ես աշխատում եմ հագուստեղենի ընկերությունում որպես տնօրեն, բայց ցանկանում եմ դառնալ ոստիկան: Շոտլանդիայում դուք պետք է երեք տարի անընդմեջ ապրեք այդ երկրում, նախքան կդիմեք ոստիկանությունում աշխատանքի անցնելու համար: Քանի որ միսիայում ծառայելիս ես երկրից դուրս էի եղել երկու տարի, ստիպված էի սպասել ևս մի քանի ամիս՝ նախքան ինձ կընդունեին:

Չնայած դա մեծ պատնեշ էր, բայց ես չհանձնվեցի: Ես լավ աշխատանք ունեմ իմ ընտանիքը ապահովելու համար, և ես տքնաջան աշխատել եմ, որպեսզի համոզվեմ, որ լավ երաշխավորագիր կստանամ իմ հետագա աշխատանքների համար:

Ինչպես այս չափահաս երիտասարդները, դուք ևս կպարզեք, որ տարբեր ճանապարհները կարող են պատրաստել ձեզ հոգ տանել ձեր մասին և ձեր ապագա ընտանիքի մասին: Այդ նպատակը մտքում ունենալով, դուք կարող եք ծրագրել ձեր հաջողությունը: Տասներկու Առաքյալների Քվորումից Երեց Դիտեր Ֆ. Ուխդորֆը ուսուցանել է. «Եկեք գործադրենք մեր լավագույն ջանքերը և զարգացնենք զերազանցության համբավ այն ամենում, ինչ մենք անում ենք: Եկեք գործի դնենք մեր սիրտն ու միտքը աշխատանքի փառավոր հնարավորության համար, որ յուրաքանչյուր օրը ներկայացնում է» («Երկու սկզբունքներ ցանկացած տնտեսության համար» 2009թ. զերագույն համաժողով): Քանի որ դուք հիմա կենտրոնացած եք սովորելու և աշխատելու վրա, դուք կստեղծեք սովորություններ, որոնք կօգնեն ձեզ ավելի վստահ զգալ ապագայի վերաբերյալ: ■

Խմբագիրների նշում. Խնդրեք ձեր եպիսկոպոսին ներկայացնել ձեզ ձեր ցցի ինքնապահովման մասնագետին: Նրանք կօգնեն ձեզ բացահայտել հնարավորություններ ապագա կրթության և աշխատանքի համար

ԳՏԵՔ ՁԵՐ ՃԱՆԱՊԱՐՀԸ

1.

ՃԱՆԱՉԵՔ ԻՆՔՆԵՐԴ ՁԵԶ:
Ի՞նչն է ձեզ մոտ լավ ստացվում: Ի՞նչն եք ուրախությամբ կատարում: Պատասխանելով այս հարցերին, կարող եք գտնել հնարավոր մասնագիտությունը, որը համապատասխանում է բոլոր հմտություններին, հետաքրքրություններին և տաղանդներին, որոնք արդեն ունեք:

ՀՈՒՇՈՒՄ. Հարցրեք ձեր ծնողներին, ուսուցիչներին և ընկերներին՝ ինչ տաղանդներ են տեսնում ձեր մեջ: Դուք կզարմանաք նրանց ասածների վրա:

2.

ՃԱՆԱՉԵՔ ՁԵԶ ՇՐՋԱՊԱՏՈՂ ԱՇԽԱՐՀԸ
Ո՞ր մասնագիտությունները պահանջարկ ունեն այնտեղ, որտեղ դուք ապրում եք: Ո՞ր ձեռնարկություններն են աշխատանքի վերցնում: Իմաստուն կլինի մասնագիտական կարիերա ընտրել այն տարածքում, որտեղ ապագայում կաճեն աշխատանքի հնարավորությունները:

ՀՈՒՇՈՒՄ. Քոլեջները, համալսարանները և արհեստագործական ուսումնարանները հաճախ գիտեն, թե որ մասնագիտությունները պահանջարկ ունեն և արդյունաբերության որ ճյուղերն են զարգանում:

3.

ԻՄԱՑԵՔ, ԹԵ ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՔ ՀԱՋՈՐԴԸ
Ի՞նչ պատրաստություններ են պահանջվում ձեր ուզած աշխատանքի համար: Որտե՞ղ կարող եք ստանալ ուսուցումն ու կրթությունը, որի կարիքը ունեք: Ինչպես կվճարեք դրա համար: Որպեսզի հասնեք երկարատև մասնագիտական նպատակին, դուք պետք է իմանաք՝ ինչպես հասնել այնտեղ:

ՀՈՒՇՈՒՄ. Խոսեք ինչ-որ մեկի հետ, ով արդեն կատարել է այն, ինչ դուք եք ցանկանում անել: Հարցեր տվեք նրան: Շատ մարդիկ հաճույքով խորհուրդներ են տալիս և առաջարկություններ անում:

Փոխանցել Աստծո սերը

Էլլի Բ., 12 տարեկան, Կենտուկի, ԱՄՆ

Կարճ ժամանակ առաջ մեր ընտանիքը տեղափոխվեց Կենտուկի: Ես իսկապես շատ վշտացած էի, քանի որ հեռանում է իմ ընկերներից և մեծ ընտանիքից: Բայց այս եկեղեցին շատ էր տարբերվում իր իմացած եկեղեցուց: Առաջին անգամ, երբ մենք գնացիք եկեղեցի, ես տեսա, որ այնտեղ քիչ մարդիկ կային: Երբ ես հասկացա, թե որքան փոքր էր իմ ճյուղը, որոշեցի, որ դրա մասին վատ մտածելու փոխարեն ես ինչ-որ բան պիտի անեմ:

Հաջորդ օրը ես ու մայրիկս գնացիք խանութ: Նախքան տանից դուրս գալը, ես վերցրի մի քանի փոխանցվող քարտեր: Երբ մենք հասանք խանութ, ես վերցրի մի կոնֆետ և գնացի դրամարկղի մոտ: Գանձապահը գնահատեց կոնֆետը, ապա տվեց ինձ: Ես կոնֆետը վերադարձրի նրան: Նա շփոթվեց ու ասաց. «Դուք հենց նոր վճարեցիք սրա համար»:

Ես ասացի. «Ես գիտեմ, բայց ես այն ձեզ եմ տալիս որպես նվեր»: Հետո ես մի փոխանցվող քարտ դրեցի կոնֆետի հետ: Նա ժպտաց և շնորհակալություն հայտնեց ինձ: Նա նայեց քարտի դարձերեսին, որտեղ ես գրել էի. «Բոլորս Աստծո զավակներն ենք»: Ես ուրախ հեռացա, իմանալով, որ եթե նույնիսկ նա չմիանա Եկեղեցուն, ես արդեն ինչ-որ լավ բան էի արել:

Ավելի ուշ այդ օրը ես հիշեցի, որ բոլոր քարտերը թողել էի դրամարկղի մոտ: Հաջորդ անգամ, երբ գնացի խանութ, հարցրեցի՝ արդյո՞ք դրանք դեռ այնտեղ էին: Հետո ես ինչ-որ բան տեսա և կանգ առա: Հինգ դրամարկղերի մոտ դրված էին քարտերը, որոնցում ասվում էր. «Բոլորս Աստծո զավակներն ենք»: Գանձապահը փոխանցել էր դրանք մյուսներին: Ես շատ երջանիկ էի այն քայլի շնորհիվ, որը կատարել էի: ■

ՆԱՄԸ՝ ԷՄՄԱ ՋՐԼԵԹԻ

Աղոթք կիրճում



Կարսեն Կ., 11 տարեկան, Յուտա, ԱՄՆ

Անցյալ տարի ես, հայրիկս ու եղբայրս գնացինք արշավի: Արշավի ժամանակ մենք խորացանք կիրճում: Մենք շուտով սկսեցինք ուսումնասիրել մի կողմնային արահետ: Մենք հայտնաբերեցինք մեծ քարայրներ և հրաշալի դիտակետեր: Մենք բարձրանում էինք փխրուն քարերի և թեք բլուրների վրայով:

Մի որոշ ժամանակ անց մենք լրիվ մոլորվեցինք: Մենք չգիտեինք՝ որ ուղղությամբ հասնել կիրճի հատակը: Մենք խճճվեցինք խիտ թփերի մեջ՝ տեսադաշտից կորցնելով կիրճի գագաթն ու հատակը: Ես իրոք սկսեցի հուսահատվել: Ես ու հայրս չգիտեինք ուր գնալ:

Մթնում էր և արդեն ցուրտ էր, իսկ մենք չէինք կարողանում դուրս գալ կիրճից: Ես գիտեի, որ Երկնային Հայրը գիտեր, թե որ ուղղությամբ պետք է գնայինք:

Ես ասացի. «Եթե մենք ցանկանում ենք այստեղից դուրս գալ, մենք պետք է աղոթենք»: Մենք երեքով ծնկի իջանք, խնդրելով Երկնային Հորը առաջնորդել մեզ կիրճից դուրս:

Երբ մենք սկսեցինք քայլել, մի զգացում ունեցա, որ պետք է ձախ թեքվեինք, երբ տեսա մի ուղիղ բարձր ծառ: Երբ թեքվեցինք ձախ, ես տեսա մեր մեքենան: Ես գիտեի, որ Երկնային Հայրը օգնեց մեզ դուրս գալ կիրճից: Երկնային Հայրը պատասխանեց մեր աղոթքին, և մենք ապահով դուրս եկանք, երբ արևն արդեն մայր էր մտնում:

Ես այնքան երախտապարտ եմ աղոթքի զորության համար և Երկնային Հոր լսող ականջի համար: ■

Պայծառ շողալով Չեխիայի Հանրապետությունում

Մենք Երեխաների Խմբից ենք՝ Չեխիայի Հանրապետությունից: Ահա, թե ինչպես ենք մենք պայծառ շողում մեր երկրում:

Կազմել է Շարոն Գոտդրիչը, Եկեղեցու ամսագրեր

Մի անգամ ես կորցրի իմ սիրած ձեռնոցը: Ես շատ տխուր էի: Ես և մայրս աղոթեցինք, բայց չգտանք այն: Ես փորձեցի հավատ գործադրել: Մի շաբաթ անց իմ փոքր եղբայրը փողոցում գտավ իմ ձեռնոցը: Աստված պատասխանում է մեր աղոթքներին: Ես սիրում եմ Նրան և գիտեմ, որ Նա ապրում է:

Անդրե Վ., 9 տարեկան

Ես դպրոցում ունեմ ընկերներ, ովքեր Եկեղեցու անդամներ չեն, բայց հարգում են իմ չափանիշները: Մի անգամ ես ասացի, որ մենք պետք է աղոթենք, և նրանք համաձայնվեցին: Ես շատ երջանիկ էի:

Իվանա Ա., 11 տարեկան

Ես և ընկերներս իջնում էինք ներքև: Երբ հասանք վերելակին, ես անհանգստության զգացում ունեցա և խնդրեցի ընկերներիս չօգտվել դրանից: Այնուամենայնիվ, նրանք որոշեցին իրենց ասածով անել: Ես իջա աստիճաններով:

Երբ իջա ներքև, ընկերներս այնտեղ չէին: Վերելակը կանգ էր առել: Որոշ ժամանակ պահանջվեց, մինչև նրանք դուրս կգային: Ես երջանիկ էի, որ ոչ մի լուրջ բան չպատահեց: Ես նաև լավ զգացի, որ հետևել էի Սուրբ Հոգուն:

Ամալի Ն., 10 տարեկան

Լողափին երկինքը սկսեց խավարել: Քամին փչում էր և հսկա ալիքներ առաջացնում: Ամպրոպ տեղաց՝ կայծակով ու կարկուտով: Բոլորը՝ վազելով մտան ծածկի տակ: Մենք չվնասվեցինք փոթորկից: Տան ճանապարհին մենք տեսանք երեք ծիածան: Մենք գիտենք, որ Աստված օգնեց և պաշտպանեց մեզ:

Զակուբ Բ., 10 տարեկան

Դպրոցում ես մի ընկեր ունեմ, ում հետ ոչ ոք չի ցանկանում ընկերություն անել: Ուրիշ երեխաները սկսեցին վատ բաներ ասել նրա մասին, ինչը ստիպեց նրան իրեն տգեղ համարել: Ես պատմեցի իմ ուսուցչին և հրավիրեցի նրան խաղալ ինձ հետ: Իմ ընկերը շատ ուրախացավ:

Լյուդմիլա Վ., 8 տարեկան

Ես բարկացած էի մայրիկիս վրա, քանի որ չէի ցանկանում լողանալ ու պառկել քնելու: Հաջորդ օրը ես տխուր էի իմ ընտրության հետևանքով: Մայրիկն ասաց, որ մենք կարող ենք աղոթել և Երկնային Հորից խնդրել ներել մեզ: Մենք ծնկի իջանք և աղոթեցինք: Ես ավելի լավ զգացի: Ես իմացա, որ մենք կարող ենք ապաշխարել ու ներվել Հիսուս Քրիստոսի շնորհիվ:

Սեմյուել Հ., 5 տարեկան

Ես իմ վկայությունը բերեցի եկեղեցում: Ես քաջալերվեցի: Այդ ժամանակից սկսած ես զգացել եմ Հոգին:

Էլիսկա Կ., 11 տարեկան

Երբ իմ ծովախոզուկը հիվանդացավ, ես աղոթեցի նրա համար: Ես երախտապարտ եմ Երկնային Հորը մեզ օգնելու համար:

Անետա Պ., 10 տարեկան

ՈՒՂԱՐԿԵՔ ՄԵՋ ԱՍՏՂ

Մենք համարյա ավարտեցինք աստղեր հավաքելը: Եթե դուք դեռ չեք ուղարկել, շտապեք և փոստով մեզ ուղարկեք ձեր աստղի լուսանկարը ձեր պատմության հետ միասին, լուսանկար և ծնողների թույլտվությունը liahona@ldschurch.org:

«Ես վկայում եմ Նրա՝ աշխարհի Քավիչի և մեր բոլորի Ուսուցչի մասին: Նա կենդանի Աստծո Միածին Որդին է:

Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդ
Տասներկու Առաքյալների Քվորումից

«Վերականգնման հրաշքները», Ensign, *նոյեմբեր 1994, 34:*

ՆԿԱՐՆԵՐԸ՝ ՍԻՄԻՆ ԲԼՈՔԵՐԻ

Սեր էջը

Երբ ես գնում եմ Եկեղեցի, զգում եմ Աստծո Հոգին և այն սերը, որը տածում եմ Նրա և իմ Փրկիչ Հիսուս Քրիստոսի հանդեպ: Ես սիրում եմ իմ Քավիչին:

Այանա Բ., 7 տարեկան, Ֆրանսիա

Ես սիրում եմ տաճարում լինել իմ ընտանիքի հետ: Դա մի գեղեցիկ վայր է, որտեղ ես կկարողանամ գնալ 12 տարեկանում: Այն Տիրոջ տունն է:

Ալդո Ս., 10 տարեկան, Մեքսիկա



«Նախագահ Մոնսոնը և նրա խորհրդականները»
Օմար Ա., 9 տարեկան, Պերու

Ես բավականություն եմ ստանում դպրոցում ընկերներիս հետ ավետարանով կիսվելով, հատկապես մի տղայի հետ, ով դժվարանում է խոսել, գրել և կարդալ: Հիսուս Քրիստոսն ուսուցանել է, որ ավետարանով կիսվելու եղանակներից մեկը ուրիշներին օգնելն ու ծառայելն է: Երբ ուսուցիչը մեզ հանձնարարություն է տալիս տնային աշխատանքի տետրում, ես միշտ պատրաստ եմ օգնել այս տղային: Ես սիրում եմ ծառայել ուրիշներին, քանի որ այն օգնում է ինձ զգալ Երկնային Հոր սերը:

Էլիսոն Մ. 10 տարեկան, Էլ Սալվադոր

Հույսի դրսևորում Հոլանդիայում

Մեգան Արմքնեչ

Հիմնված է իրական պատմության վրա

Գրեյսը՝ 15-ամյա մի աղջիկ, Երկրորդ Համաշխարհային պատերազմի ժամանակ ապրում էր Հոլանդիայում: Պատերազմը շարունակվում էր երկար ժամանակ: Հոլանդիայի ժողովուրդը սովի էր մատնված, և նրանք հուսով էին, որ պատերազմը շուտով կավարտվի:

Երկրորդ Համաշխարհային պատերազմի վերջին տարին ամենավատն էր Հոլանդիայի համար: Նացիստները խլել էին ամեն ինչ: Գրեյսը չէր կարողանում դպրոց գնալ: Տունը տաքացնելու համար ածուխ չունեին: Գրեյսը և նրա ընտանիքը ստիպված էին ուտել կակաչի սոխուկները, որպեսզի սովից չմեռնեին: Դրանք *սոսկալի* համ ունեին: Ամենավատն այն էր, որ Հայրիկը դեռ ռազմագերի էր:

Բայց օդում հույս կար: Մարդիկ ասում էին, որ նացիստները տանուլ էին տալիս պատերազմը: Եվ 1945թ.-ի մայիսին նացիստները հանձնվեցին: Հոլանդիան վերջապես կրկին ազատ էր: Մարդիկ տոնում էին փողոցներում: Հիմա Գրեյսը կարող էր վերադառնալ դպրոց: Ձինվորներ չկային, որոնցից կարելի էր վախենալ:

Ամենաուրախալին այն էր, որ մի օր, երբ Գրեյսը և նրա եղբայրները տուն էին վերադառնում դպրոցից, տեսան, որ Հոլանդիայի դրոշը փողփողում էր նրանց տան դիմաց: Նրանք գիտեին, որ դա միայն մի բան կարող էր նշանակել:

«Հայրիկը վերադարձել է»,- գոռաց Հեբերը:

Գրեյսն ու եղբայրները ներս վազեցին: Գրեյսը փաթաթվեց Հայրիկին ու ամուր գրկեց նրան: Հայրն ամուր գրկեց նրան: Այնքան հրաշալի էր, որ Հայրիկը տանն էր:

Դրանից անմիջապես հետո սնունդի, հագուստների և դեղորայքի փաթեթները սկսեցին հասնել Հոլանդիա: Եկեղեցու ղեկավարները Սոլթ Լեյք Սիթիից շատ մթերք և պարագաներ ուղարկեցին, օգնելով մարդկանց պատերազմից հետո: Գրեյսը նույնիսկ նոր զգեստ ստացավ: Նա հինգ տարի շարունակ կրել էր նույն մաշված զգեստը, ուստի շատ ուրախ էր նոր զգեստի համար:

Առաջին անգամ այդքան տարիների ընթացքում Գրեյսը բավականաչափ ուտելիք ուներ:

Միսիայի նախագահությունը և կառավարությունը որոշեցին սկսել կարտոֆիլի ծրագիր, որպեսզի ավելի շատ մթերք արտադրվի Հոլանդիայում: Եկեղեցու անդամները շատ կարտոֆիլ էին ցանում մոտակա դաշտերում: Մինչև աշուն նրանք հազարավոր տոննաներով կարտոֆիլ կունենային:

«Նայեք»: Գրեյսն ասաց Հայրիկին, մատնացույց անելով ծլած կարտոֆիլին: «Մենք այլևս երբեք սոված չենք լինի»:

Հայրիկը գլխով արեց, բայց չժպտաց: Նա ասաց. «Ես զրուցում էի Նախագահ Զափեի հետ: Նա ինձ ասաց, որ Գերմանիայում Վերջին Օրերի Սրբերը դեռևս սովամահ են լինում, ճիշտ ինչպես մենք էինք: Նրանք օգնություն չեն ստանում կառավարությունից, ինչպես մենք ենք ստանում»: Հայրիկը ձեռքը դրեց Գրեյսի ուսերին: «Նախագահ Զափեյը հարցրեց ինձ՝ արդյո՞ք մենք մեր կարտոֆիլը կտանք գերմանացի Սրբերին»:

«Հրաժարվե՞նք մեր կարտոֆիլից»: Գրեյսը լաց եղավ: Բայց չէ՞ որ *նացիստները* Գերմանիայից էին: «Նրանք կարող են լինել Վերջին Օրերի Սրբեր, Հայրիկ, բայց նրանք, այնուամենայնիվ, գերմանացիներ են»:

«Ես գիտեմ, որ հեշտ չէ»,- ասաց Հայրիկը: «Բայց նրանք նույնպես Աստծո զավակներն են: Նա նրանց

ՆԱՄՈՒԵՐԸ՝ ՌԵԲԵԿԱ ՍՈՐԳԵ

նույնպես սիրում է: Ես ներել եմ նրանց ինձ գերեվարելու համար: Տերը կարող է օգնել մեզ բոլորիս ներել»:

Գրեյսը նայեց Հայրիկին: Նա ամենախիզախ մարդն էր, ում ինքը ճանաչում էր, բայց չգիտեր՝ արդյոք քաջություն կունենար ներել նրա նման: Հետո նա հիշեց իր դպրոցի ուսուցիչներից մեկին պատերազմի ժամանակ: Նրա ուսուցիչն ասել էր, որ ոչ բոլոր գերմանացիներն են նացիստներ, և ոչ բոլոր նացիստներն էին վատը: Եվ հիմա աղջիկներն ու տղաները Գերմանիայում սովի էին մատնված, ճիշտ ինչպես Գրեյսն էր եղել:

Գրեյսը խորը շունչ քաշեց: «Հասկանում եմ»,- ասաց նա: «Եկեք նրանց տանք մեր կարտոֆիլը»:

Հայրիկը գրկեց նրան ու ժպտաց: «Դու այնքան քաջ աղջիկ ես: Սա դժվար է անել: Բայց մենք Հիսուս Քրիստոսի աշակերտներն ենք և մեր գերմանացի եղբայրներն ու քույրերը նույնպես»:

Գրեյսը ժպտաց: Նրա սրտի բարկությունը անցավ, և նա հանգստացավ: Նա կարողացավ ներել գերմանացիներին: Եվ Հիսուսը կարողացավ օգնել նրան նաև սիրել նրանց: ■

Հեղինակն ապրում է Նյու Ջերսիում, ԱՄՆ:

Հոլանդիայի Վերջին Օրերի Սրբերը 70 տոննա կարտոֆիլ և 90 տոննա ծովատառեխ տվեցին Գերմանիայի Վերջին Օրերի Սրբերին: Ավելի ուշ, 1953թ.-ին Գերմանիայի Սրբերը պաշար և պիտույքներ ուղարկեցին Հոլանդիայի Եկեղեցու անդամներին՝ կործանարար ջրհեղեղից հետո:

Մորմոնի Գրքի
ընթերցանության ակումբ

ՄԻԱՑԵՔ ՄՈՐՄՈՆԻ ԳՐՔԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆԸ

Կարդացեք ինքնուրույն, ձեր ընտանիքով, կամ ընկերոջ հետ: Հետո մեզ ուղարկեք լուսանկարը, որտեղ դուք կարդում եք Մորմոնի Գիրքը, և պատմեք մեզ որևէ բանի մասին, որը դուք սովորել եք, կամ ձեր սիրած պատմությունը Մորմոնի Գրքից: Ուղարկեք այս կապուղու միջոցով. liahona.lds.org (սեղմեք «Ներկայացնել հոդված»):



Այս ամսվա սուրբ գրությունն է՝
Մորոնի 10.4

«. . . Եթե դուք հարցնեք մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս, նա կհայտնի ձեզ դրանց ճշմարտության մասին՝ Սուրբ Հոգու զորությամբ»:

Իմ սիրած պատմությունը Մորմոնի Գրքից գտնվում է 3 Նեփի 17-ում, և այն մասին է, թե Հիսուսն ինչպես է օրհնում երեխաներին: Ես սիրում եմ այդ պատմությունը, քանի որ այն պատմում է, թե Հիսուսն ու Երկնային Հայրը որքան շատ են սիրում մեզ: Ես կարող եմ նույնացնել ինձ երեխաների հետ և պատկերացնել, որ կանգնած եմ այնտեղ:

Բարբարա Ջ., 11 տարեկան, Չեխիայի Հանրապետություն



Ես սիրում եմ Մորմոնի Գիրքը, քանի որ այն ճշմարիտ գիրք է: Այն գրված է մարգարեների կողմից: Այն օգնում է ինձ ընտրել ճիշտը, և երբ ես խնդիրներ եմ ունենում, այն օգնում է ինձ: Ես հավատում եմ դրան:

Ջեյսոն Ս., 10 տարեկան, Մահարաշտրա, Հնդկաստան

Եսթերը խիզախ էր

Եսթերը Պարսկաստանի թագուհին էր: Թագավորը չգիտեր, որ Եսթերը հրեա է: Թագավորը մի չար ընկեր ուներ, ով ատում էր հրեաներին: Նա խորամանկությամբ ստիպեց թագավորին հայտարարել, որ երկրի բոլոր հրեաները պետք է կոտորվեն: Եսթերը որոշեց խնդրել թագավորին փրկել իր ժողովրդին: Բայց նրան կարող էին սպանել թագավորի գահի մոտ գնալու համար: Եսթերը խնդրեց բոլոր հրեաներին ծոմ պահել իր համար: Երբ Եսթերը գնաց իր ամուսնու գահի մոտ, վերջինս ողջունեց նրան: Նա թագավորին ու նրա ընկերոջը ճաշի հրավիրեց: Ճաշի ժամանակ Եսթերն ասաց, որ ինքը հրեա է: Թագավորը չէր կարող փոխել օրենքը, բայց նա թույլ տվեց, որ հրեաները իրենք պաշտպանեն իրենց: Աստծո օգնությամբ Եսթերը փրկեց իր ժողովրդին:

«Եսթեր Թագուհին», Ռեբեկա Ս., 8 տարեկան, Արագվա, Վենեսուելա

Կարդացեք Եսթերի մասին Եսթեր 2–8-ում:

ՆԿԱՐՆԵՐԸ՝ ԴԻԼԻՆ ՄԱՐՇ

Եսթերը քաջարի էր և հավատում էր Աստծուն: Ես կարող եմ խիզախ լինել և պաշտպանել ճշմարտությունը:

- ☐ Անգիր սովորեք Եսթեր 4.14-ի վերջին մասը:
- ☐ Դիտեք 45-րդ գլուխը Հին Կտակարանի պատմություններից՝ scripturestories.lds.org-ում:
- ☐ Եթե ձեր ծնողներն ասում են, որ դուք բավականաչափ մեծ եք, ծոմ պահեք ինչ-որ մեկի համար, ում մասին հոգ եք տանում:
- ☐ Ես կարող եմ խիզախ լինել . . .

____

____

Եսթեր Թագուհին

Քիմ Վեբ Ռայդ

Եսթերը թագուհի էր: Նա ամուսնացած էր Պարսկաստանի արքայի հետ:

Թագավորը մի ընկեր ուներ, ով վատ մարդ էր: Նա խորամանկությամբ ստիպեց թագավորին օրենք հռչակել, ըստ որի բոլոր հրեաներին պետք է կոտորեին: Թագավորը չգիտեր, որ իր կինը՝ Եսթերը, նույնպես հրեա է:

ՆԿԱՐՆԵՐԸ՝ ԷՅՓՐԻԼ ՍԹՈՏԻ

Եսթերը որոշեց խնդրել ամուսնուն՝ թագավորին, փրկել իր ժողովրդին: Բայց նա անհանգստանում էր, որ ամուսինը կարող է բարկանալ: Եսթերը խնդրեց բոլոր հրեաներին ծոմ պահել և աղոթել իր համար: Հետո Եսթերը գնաց թագավորի մոտ: Նա բարկացած չէր:

Եսթերը թագավորին ու նրա ընկերոջը ճաշի հրավիրեց: Ճաշի ժամանակ Եսթերն ասաց թագավորին, որ *ինքը* հրեա է: Թագավորը բարկացավ, որ իր ընկերը խաբել էր իրեն: Նա ասաց հրեաներին, որ կարող են պաշտպանել իրենց: Եսթերը օգնեց իր ժողովրդին փրկվել:



Մենք կարող ենք խնդրել Երկնային Հորը օգնության համար: Մենք կարող ենք քաջ ու խիզախ լինել, ինչպես Եսթերն էր: ■

Եսթեր 2–8

Ես կարող եմ օգնել ուրիշներին սիրված զգալ



ՆԿԱՐՆԵՐԸ՝ ԷՓՐԻԼ ՍԹՈՏԻ

Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստ (1920–2007)
Առաջին Նախագահության երկրորդ խորհրդական

ՄԵՐ ՀԱՍՏԱՏՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հոգևոր առաջնորդությունը մեծապես կախված է . . . մարգարեների, տեսանողների և հայտնողների հետ ներդաշնակ լինելու հանգամանքից:

Ես ցանկանում եմ խոսել քահանայության ղեկավարների սրբազան պաշտոնների մասին, ովքեր «կանչված և ընտրված» են (ՎևՈ 55.1) ղեկավարելու Եկեղեցին մեր օրերում . . .

. . . Իմ Եղբայրները [Տասներկու Առաքյալների Քվորումում], առանց բացառության, բարի, պատվարժան և վստահելի մարդիկ են: Ես գիտեմ նրանց սրտերը: Նրանք Տիրոջ ծառաներն են: Նրանց միակ ցանկությունն է՝ աշխատել իրենց հրաշալի կոչումներում և Երկրի վրա կառուցել Աստծո արքայությանը: Մեր Եղբայրները, ովքեր ծառայում են այսօր՝ մեր ժամանակներ, հաստատված, փորձված և ճշմարիտ են . . . Նրանց սրտերն այնքան մաքուր են, նրանց փորձառությունը այնքան մեծ և հոգևոր իմաստությունն այնքան խորը, որ պարզապես սփոփանք է նրանց ներկայության մեջ գտնվելը:

. . . [Երբ ինձ կանչեցին ծառայության, ինձ խորհուրդ տվեցին], որ ամենակարևոր բանը, որը ես պետք է անեմ՝ մշտապես լինեմ ներդաշնակ իմ Եղբայրների հետ . . . Դա այն էր, ինչը ես ցանկանում էր իմ ողջ սրտով:

. . . Ես եզրակացրի, որ հոգևոր առաջնորդությունը մեծապես կախված է այն փաստից, որ ես պետք է ներդաշնակ լինեմ Եկեղեցու Նախագահի, Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի հետ՝ բոլոր նրանց հետ, ում մենք աջակցում ենք . . . որպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ: Ես չգիտեմ, թե մենք ինչպես կարող ենք ակնկալել լրիվ ներդաշնակության մեջ լինել Հոգու և Տիրոջ հետ, եթե մենք ներդաշնակության մեջ չենք Եկեղեցու Նախագահի և այլ մարգարեների, տեսանողների և հայտնողների հետ . . .

Ես խորհուրդ եմ տալիս Եկեղեցու անդամներին աջակցել Եկեղեցու Նախագահին, Առաջին Նախագահությանը, Տասներկուսի Քվորումին և այլ Բարձրագույն Իշխանավորներին մեր ողջ սրտով ու հոգով: Եթե մենք այդպես վարվենք, մենք կլինենք ապահով ապաստարանում . . .

Մենք . . . նաև պետք է աջակցենք և հաստատենք մեր տեղական ղեկավարներին, քանի որ նրանք «կանչվել և ընտրվել են»: Այս Եկեղեցու ցանկացած անդամ կարող է խորհուրդ ստանալ եպիսկոպոսից կամ ճյուղի նախագահից, ցցի կամ միսիայի նախագահից և Եկեղեցու Նախագահից ու նրա գործընկերներից: Այդ եղբայրներից ոչ մեկը չի խնդրել իր կոչումը ստանալու համար: Ոչ ոք կատարյալ չէ: Սակայն նրանք Տիրոջ ծառաներն են, կանչված են Նրա կողմից այն մարդկանց միջոցով, ում ոգեշնչման իրավունք է տրվել: Այդ կանչված, հաստատված և ձեռնադրված մարդիկ իրավունք ունեն մեր հաստատող աջակցության: ■

2005թ. հոկտեմբերի գերագույն համաժողովի ելույթից:

ՆԿԱՐՆԵՐԸ՝ GETTY IMAGES

ԷԴՄՈՒՆԴ ԲԼԵՅՐ ԼԵՅԹՈՆ (1852–1922), *«ԿՈՒՅՐ ՄԱՐԴԸ ՍԻԼՈՎԱՄԻ ԱՎԱԶԱՆԻ ՄՈՏ»*, 1879, ՅՈՒՂԱՆԵՐԿ, ԿՏԱՎ 40 X 50 1/4: ԲՐԻԳԱՄ ՅԱՆԳԻՐ ՀԱՆԱՍԱՐՈՒՆԻ ՍՐՎԵՍՏՐ ԹԱՆԳԱՐԱՆ, ԳՆՎԵԼ Է ԶԵՔ Ռ. ՈՒՐԹԼԻՐ ՖՈՆԴԵՐԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ, 2014թ.-ՒՆ:

«ԿՈՒՅՐ ՄԱՐԴԸ ՍԻԼՈՎԱՄԻ ԱՎԱԶԱՆԻ ՄՈՏ», ԷԴՄՈՒՆԴ ԲԼԵՅՐ ԼԵՅԹՈՆ

«Նա պատասխանեց եւ ասեց. Մի մարդ՝ անունը Յիսուս, ցեխ շինեց եւ աչքերիս քսեց, եւ ինձ ասեց. Գնա Սիլոամի աւազանը, եւ լուացուիր. Գնացի եւ լուացուեցայ, եւ տեսնում եմ . . .

Եթէ սա Աստուածանից չէր, ոչինչ չէր կարող անել» (Հովհաննես 9.11, 33):

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՉԱՓԱՀԱՍՆԵՐ

ՔՆՆԵԼՈՎ ՁԵՐ «ԻՆՁՈՒ»-Ն

Ո՞ՐՆ Է ավետարանով ապրելու ձեր շարժառիթը:

44

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԿԱՐՈՂ Է ՈՒՍՈՒՑԱՆԵԼ ՁԵԶ

50, 56

ՀԻՄԱ ԱԵԽԱՏԵՔ ԱՅՆ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՄԱՐ, ՈՐԸ ԴՈՒՔ ԵՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ

62

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

ՀԻՆԳ ԵՂԱՆԱԿ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՑ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

50, 54, 58

ARMENIAN

4 021475420014

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑԻ